Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Lwy
256

90

20.

Morceaux choisi

des classiques ancienn

et modernes trad.

en arménien

ՀԱՄԱՌՕՏ ԾԱՂԿԱՔԱՂ

2 partie Poésie

à l'usage des

classes inférieurs

ՀԱՄԱՌՕՏ

# ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՏՈՒԱԾՈՑ

Ի ՔԵՐԹՈՒԹԵԱՆՑ

# ՕՏԱՐԱԶԳԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

ՎԵՆԵՏԻԿ
ՎԱՆՔ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
1880

44

### ՀԱՄԱՌՕՏ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

# ԶՄԱՏԵՆԱԳՐԱՑ ԾԱՂԿԱՔԱՂԻՍ

---

ԱԼՖԻԷՐԻ Վիդտորիօ. — Գերահռչակ թատերգակ քերթող իտալացի. հրաշալիք 'ի բազմաթիւ թատերգութեանց սորա համարին Սաւուղ, Մերոպէ, Փիլիպպոս, Պոլինիկէս, Անտիգոնէ, Որեստէս, Ագիտէս: Գրեաց և երգիծաբանութիւնս և զվարս իւր, և այլն: (1749-1803):

ԱՌՆՈՅ Անտոն. — Թատերգակ բանաստեղծ և առակախօս գաղղիացի. անդամ Գաղղիական կաճառոյն: (1766-1834):

ԲԵԴՐԱՐՔԱ Փրանչէսքօ. — Մին 'ի չորից գլխաւոր քերթողաց և պարծանաց Իտալիոյ. 'ի բազմաթիւ մատենագրութիւնս սորա զառաջին տեղի ունին քնարերգական Նուագքն և Տաղք երգեալք 'ի գովեստ և 'ի յիշատակ Լաւրա տիկնոջ գաղղիացւոյ: (1304-1374):

ԳՈՌՆԷՅԼ Պետրոս. — Գերահռչակ թատերգակ գաղղիացի, անդամ Գաղղիական կաճառոյն. հրաշակերտք են 'ի թատերգութիւնս սորա Սիտ, Որատիոս, Կիննա, Պոլիէկտոս, Պոմպէոս. եդեղ 'ի գաղղիական չափս և զոսկեղինիկ մատեան Նմանութեանն Քրիստոսի. (1606-1684):

ԴԱՍՍՈՅ Դորքուատոյ. — Մին 'ի չորից գլխաւոր քերթողաց Իտալիոյ, դիւցազներգակ. գլուխ գործոց և անմահացուցիչ համբաւոյ նորա է քերթուածն անուանեալ Երուսաղէմ ազատեալ, և հովուերգութիւնն Ամինտաս, և այլն: (1544-1595):

ԼԱՄԱՐԴԻՆ Ալփոնսոս. — Գերազանց եղերերգակ և քնարերգակ գաղղիացի, և պատմաբան: Հռչակապանծ 'ի մատենագրութիւնս սորա են Քերթողական խորհրդածութիւնք, Քերթողական և կրօնական ներդաշնակութիւնք, Ճանապարհորդութիւն յԱրևելս, Պատմութիւն Ժիրոնդինեայց, Ուսումն ընտանեկան գրականութեան: (1790-1869):

ԼԱՖՈՆԹԷՆ Յովհաննէս տը. — Աշխարհահռչակ առակախօս գաղղիացի, մին 'ի պարծանաց Լուդովիկեան դարուն, անդամ Գաղղիական կաճառոյն: (1621 - 1695):

ԼԸՄԻԷՐ Անտօն. — Թատերերգակ գաղղիացի: Երեւելիք յողբերգութիւնս սորա են Իփերմնեստրը, Գուլիէլմ Թէլ, Այրին Մալապարայ: (1721 - 1793):

ԿՐՈՍՍԻ Թոմմաս. — Սրտառուչ քերթող և վիպասան իտալացի: Գլուխ գործոց սորա է Մարքոս Վիսգոնդի գեղեցիկ վիպասանութիւնն: (1791 - 1853):

ՀԱՅՆԷ Հէնրիկոս. — Անուանի բանասէր հրեայ, ծնեալ 'ի Գերմանիա: Ընտիրք են 'ի գրութիւնս սորա Լիտեր կամ Տաղք անուանեալ քերթուածքն: (1797 - 1856):

ՀԻԿՈՅ Վիկտոր. — Հռչականուն կենդանի բանաստեղծ գաղղիացի, անդամ Գաղղիական կաճառոյն: Երեւելիք են 'ի մատենագրութիւնս սորա Տերեւք աշնայինք, Պուրկ, Երգք արեւմտից, և այլն: Են սորա և բազում արձակ վէպք, այլ բազում ինչ գոյ 'ի նոսա ընդդէմ կրօնից: (Ծն. 1802):

ՀՈՄԵՐՈՍ. — Տիեզերահռչակ քերթողահայր յոյն, անմահացեալ Իլիական և Ոդիսական կրկին քերթուածովքն: (Ն. Ք. 900):

ՄԱՆԱՐԱ Բրոսբերոյ. — Քերթող իտալացի. Թարգմանեաց յիտալական չափս զՀովուերգութիւնսն և զՄշակականն Վիրգիլեայ: (1714 - 1800):

ՄԱՆՑՈՆԻ Աղեքսանդր. — Հռչականուն վիպասան և թատերերգակ և քնարերգակ քերթող իտալացի: Գեղեցիկ է յոյժ պատմական վիպասանութիւն սորա Խօսեցեալքն. և Ադելքէ, Կոմսին Կարմանեոլայ թատերերգութիւնքն, և Տաղքն սրբազանք, և տաղն 'ի Հինգն Մայիսի: (1784 - 1877):

ՄԵԹԱՍԹԱԶԻՈՅ Պետրոս. — Թատերերգակ իտալացի: Երեւելիք են յողբերգութիւնս սորա Ոլիմպիադէ, Հռեգուլոս, Աղեքսանդր 'ի Հնդիկս, և այլն: (1698 - 1782):

ՄԻԼՐՎՈԻԱ Կարոլոս. — Եղերերգակ քերթող գաղղիացի: Անուանիք են 'ի գրութիւնս սորա Երեկոյեան տերեւք, Ճանապարհորդն, Մահ Հռովբայ, Յանուանն Մարգեղիայ, Անկումն տերեւոց, և այլն: (1782 - 1816):

ՄԻԼՏՈՆ Յովհաննէս. — Աշխարհահռչակ դիւցազներգակ անգղիացի. յօրինեաց զհրաշալի քերթուածն Կորուսեալ Դրախտին՝ գլուխ գործոց իւրոց: (1608 - 1674):



ՇԻԼԼԵՐ Ֆրիդերիկոս. — Աշխարհահռչակ թատերերգակ քերթող և պատմաբան գերմանացի: Երեւելիք են 'ի մատենագրութեանցն Ճառ յաղագս դիւցազնական պատմութեան, Պատմութիւն երեսնամեայ պատերազմին: Ի թատերերգութիւնսն հրաշահիւսք են Մարդասպանք, Տոն Քարլոս, Վալէնշթայն, Մարիա Ստուարտ, Գուլիէլմ Թէլ: (1759 - 1805):

ՈՎԻԴԻՈՍ Նասոն. — Հանճարեղ քերթող հռովմայեցի. երեւելի են յոյժ Այլակերպութիւնք սորա: (Ն. Ք. 42 - 18):

ՊԱՅՐՆ Գէորգ Կորդոն լորդ. — Անուանի քերթող անգղիացի. գլուխ գործոց սորա է Ճանապարհորդութիւն Չայլտ-Հարոլտ ասպետի: (1788 - 1824):

ՊԱՐԹԷԼԸՄԻ Յովհ. Յակոբոս. — Պատմաբան և հնագէտ գաղղիացի: Գլուխ գործոց սորա է Ուղեւորութիւն կրտսերոյն Անաքարսեայ: (1716 - 1795):

ՊԱՐՔԻԷՐԻ Յովսէփ. — Քերթող իտալացի. 'ի գրութիւնս սորա երեւելիք են Եղանակքն, Նամականի և Ռոմանդիքական ճառք: (1783 - 1852):

ՊԻՆԴԵՄՈՆԴ Հիպպողիտ. — Անուանի քերթող իտալացի: Նշանաւոր են 'ի մատենագրութեանցն, Գերեզմանքն և Արմինիոս ողբերգութիւնն, և գերազանց թարգմանութիւն Ոդիսականին Հոմերի յիտալական չափս: (1753 - 1828):

ՊՐԱՅԷՆԴ Ուիլլիամ. — Քերթող ամերիկացի. գրեաց հատակոտոր երգս, յորս նշանաւորք են Թանաթոփսիս, Հողմ երեկոյի, Մահ ծաղկանց, և այլն: (1794 - 1878):

ՌԱՍԻՆ Յովհաննէս. — Աշխարհահռչակ թատերերգակ գաղղիացի, անդամ Գաղղիական կաճառոյն: Ի հրաշահիւս թատերերգութիւնսն գլուխ գործոց համարին Գոթողիա, Պայեզիտ, Բրիտանիկ, Իփիգենիա, Միհրդատ, Փեդրա, Անդրոմաքէ: (1639 - 1699):

ՌԱՍԻՆ Լուդովիկոս. — Հռչակաւոր քերթող գաղղիացի, որդի վերոյն: Գլուխ գործոց սորա է Երգ 'ի կրօնս, քերթուած հրաշահիւս արդարեւ: (1692 - 1763):

ՍՈՓՈԿԼԷՍ. — Գերահռչակ թատերերգակ յոյն: Հրաշալիք են 'ի

Թատերգութիւնս սորա Իփիգենիա Տաւրացի, Անդրոմաքէ, Էլեկտրա, Իփիգենիա 'ի Կուլն և այլն: (Ն. Ք. 498-405):

ՎԻՐԳԻԼԻՈՍ Պուբլիոս Մարոն. — Աշխարհահռչակ դիւցազներգակ, հովուերգակ, քերթողահայր հռովմայեցի, անմահացեալ երրեակ մատենիւքն Ենէական, Մշակական, Հովուերգական: (Ն. Ք. 70-19):

ՎՈԼԹԷՐ Ֆրանսուա Արուէ. — Գերահռչակ թատերգակ քերթող, իմաստասէր, պատմաբան գաղղիացի, գլուխ աստուածեան աղանդաւորաց: Ի բազմաթիւ մատենագրութեանց սորա հռչակեալք են յայժ Հանրիական դիւցազներգութիւնն, Պատմութիւն Կարոլոսի ԺԲ, Դարն Լուդովիկոսի ԺԴ. և 'ի թատերգութիւնսն Զայիր, Ալզիր, Մահմէտ, Մերովպէ. 'ի վերջինս յայտնի միայն չէք ինչ ընդդէմ կրօնից: (1694-1778):

ՏԱՆԴԷ Ալիկիերի. — Աշխարհահռչակ քերթողահայր իտալացի գլուխ գրականական պարծանաց Իտալիոյ: Ի բազմաթիւ մատենագրութիւնսն գլուխ գործոց և անմահացուցիչ համբաւոյ նորա է Կատակերգութիւն աստուածային: (1265-1321):

ՏԷՆԱ Ռիչարտ Հէնրիկոս. — Քերթող ամերիկացի. գրեաց հատակտոր երգս, յորս նշանաւորք են Անմահութիւն, Աչքառուն օրհնութեան, և այլն: (1787-1850?):

ՏԸԼԻԼ Յակոբ. — Անուանի քերթող գաղղիացի. թարգմանեաց ըզՄիլտոն և զՎիրգիլ. գրեաց զԲուրաստանն: (1738-1813):

ՓԵՏՐՈՍ Յուլիոս. — Հռչակաւոր առակախօս հռովմայեցի, ազատագիր Մեծին Օգոստոսի:

ՓԻՆԵՕԹԹԻ Լաւրենդիոս. — Զուարթամիտ առակախօս իտալացի: (1739-1812):

ՔՐԻԼՈՎ Իւան. — Հռչակաւոր առակախօս ռուս: (1768-1844):

ՖԼՕՐԻԱՆ Պետրոս Կլարիս դը. — Անուանի առակախօս գաղղիացի (1755-1794):

---

# ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՏՈՒԱԾՔ

# ՅՕՏԱՐԱԶԳԻ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

---

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

### ՊԱՏՈՒԷՐՔ ԱՌ ԱՅՍ

Զօրութիւնս այս մտաց գեղափայլ՝ առաւել քան յիրականն պարապէ ի կարելին, որոյ ընդարձակագոյն են սահմանք քան զիրականին. և քան զկարելին ևս նախամեծար առնէ յաճախ զկեղծիս, որոց չիք սահման:

Բարբառ նորա բնակեցուցանէ զանապատս, կենդանացուցանէ զանշնչագոյնս յէից, փոփոխէ այլ յայլմէ ըզհանդամանս և զգոյնս՝ որովք զանազանին, և կուռ զհետ միմեանց այլակերպութեամբք՝ ձգէ զմեզ ի կայս կախարդաց՝ յաշխարհն մտացածին, ուր քերթողք մոռացեալ զերկիր, մոռացեալ զանձինս՝ ընդ իմանալիս ևեթ գերակայս հաղորդք գտանին:

Անդ զոտս իւրեանց ի բուրաստանս մուսայիցն ծաղկաքաղ առնեն, և վտակք խաղաղաւէտք մատուցանեն նոցա ալիս կաթին և մեղու, և Ապոլոն իջանէ յերկնից՝ աւանդել նոցա զքնար իւր, և յանկարծակի շունչ աստուածային զեղջուցեալ զլոյս մտաց նոցա՝ արկանէ զնոսա ի ցնորս սաստիկս, և բանադատէ խօսել ի բարբառ դիւցական՝ որոյ այնուհետև գործարան ևեթ գտանին ինքեանք:



*

Այլ են ի նոսա վարեալք ի խանդից, որ աստուածային կոչի կամ ասի քերթողական։ Եսքիլ, Պինդար և այլք առ հասարակ ի քերթողաց մերոց երևելիք՝ այնու հրոյն վառէին, որ և ի գիրս նոցա փայլէ անդ։ Եւ զի՞ զնոցանէ ասեմ. Դեմոսթենէս ի բեմի և աննշանաւորք ոմանք յակումբս՝ ցուցանեն զայն հանապազ։ Եւ դու ինքն նկարագրե՞լ կամիցիս զբռնութիւն և զաղէտս, որք ի ծայրագոյն սաստկութեան ոչ ևս բերեն յիւրեանս զնշմարանս ազատութեան. բոց ի շրթանց և յաչաց քոց հատանիցի, և ցոլք բանից քոց զկատաղութեան կամ զզառանցանաց բերցեն զնմանութիւն։ Անդ դու ոչ ինչ աւելի քան զբնութեան բերես բարբառ։

Հուրս այս, որում պարտն է կենդանացուցանել զամենայն արգասիս մտաց, արծարծանի ի բանաստեղծութեան առաւել կամ նուազ սաստկութեամբ՝ ըստ պահանջելոյ իմաստից առաւել կամ նուազ քան զարժանն. և ըստ առաւել կամ նուազ վսեմութեան հանճարոյ քերթողին՝ որ բնաւորութեան կրից պատշաճիցի, և տպաւորագոյն ըզգացման՝ որ յանկարծ ի սիրտ նորա զարթուցեալ, և անդէն ի մերս ազդիցի։

Այլ ոչ միշտ երկոքին բարեմասնութիւնքս այսոքիկ՝ պատահեն ի միասին։ Տեսի ես քերթող զոմն սիրակուսացի, զի ոչ երբէք տաղս այնպիսի գեղեցիկս յօրինէր, որպէս յորժամ խանդք սաստիկք զառանցուցանէին զնա։

Բանաստեղծութեան՝ գնացք և բարբառ առանձինն է։ Ի դիւցազներգութեան և յողբերգութեան՝ յանդիման առնէ նա արուեստ ինչ քաջայաղթ՝ կապակցելով ըստ հաճոյից զմանունս նորա, փոփոխելով զծանօթ հանդամանս և յաւելլով առաւել հոգեշարժս, և պայծառացուցանելով զայնոսիկ մերթ դրուագօք, զարմանալեօք, և մերթ բազմայեղանակ ասացուածոյն վայելչութեամբ, կամ գեղով իմաստից և ազդեցութեանց։ Բազում այն է, զի վէպքն՝ այսինքն է եղանակ յօրինուածոյ գործողութեան՝ առաւել աշխատ առնէ զքերթողն և յաճախէ նմա փառս՝ քան ըզյօրինուած տաղիցն։

Այլոց ազգի ազգի բանաստեղծութեանց կազմութիւն ոչ այնչափ տաժանելի է քերթողին. սակայն պարտ է նմա



գիտել ի՛մն ամենայն ուրեք յանդիման առնել, և նորանոր կեղծեօք կենդանացուցանել զամենայն՝ զորմէ բուռն հարկանէ. զջերմութիւն բոցոյ իւրոյ ազդել ի մեզ, և յուշի ունել հանապազ՝ զի որպէս Սիմոնիդէս ասէ. Քերթութիւն՝ է նկար խօսուն, և նկար՝ է քերթութիւն համր։ Բանաստեղծութեան, որպէս ասացի, է լեզու առանձինն։ Ի բաժանել քերթութեան և շարադրածոյ յիւրեանս զբարբառ, բաժին եղ նմա՝ երևել միշտ 'ի ձոխ կամ յընտիր պաճուճանս, և աւանդեցան նմա ամենայն երփն երփն երանգոց էից, հարկ ի վերայ եդեալ վարել նոքօք անխափան, և ի զեղծանելն նոքօք՝ գոլ անըստգիւտ։

Արկ նա ընդ իշխանութեամբ իւրով զբազմութիւն յոյժ բառից, որ արգելեալ են շարադրածոյ. և զյոլովս ևս 'ի բառից երբեմն ձգտէ իբրև զերկարս և երբեմն զսպէ իբրև զսուղս՝ յաւելմամբ կամ բարձմամբ տառից կամ վանկից։ Իշխանութիւն է նմա և նորս ստեղծելոյ, և ազատութիւն պահեալ նմա ի կիր արկանելոյ զխափանեալս, կամ որ յօտար գաւառս ուրեք վարին, համանշանակս զբազումս գործելոյ, և նորաձև իմն դասակարգելոյ զսոսա, և վարելոյ ամենայն համարձակութեամբ՝ որովք քերթողականն պերճախօսութիւն զանազանի ի հասարակաց բարբառոյ։

Դիւրութեանցն շնորհելոց հանճարոյ՝ հաղորդին և նուագարանք առ հասարակ, որ օգնեն նմա։ Աստի տաղիցն այլափոխութիւնք, ազգի ազգի զանազանեալք ի բնէ ի տիպս կերպարանացն։ Քանզի դիւցազնականն չափ ոտին՝ ահաւոր իմն ձևով և մեծավայելուչ ձեմի, և սահմանեցաւ այն յերգս վիպասանականս. մեծավերջն ի ձահ պատահէ խօսից, և թատերականն քերթութիւն վարի նովաւ։ Իսկ այլք 'ի չափուց պատշաճին ի պարերգութիւնս, և վարին անաշխատ ի տաղս և յօրհնութիւնս։

Այսու օրինակաւ յաճախեցին քերթողք զհնարս ախորժելի առնելոյ զերգսն։

ՊԱՐԹԵԼԵՄԻ

# Ա Ռ Ա Կ Ք

## ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆ

Ի նոյն գետափն հասին վարեալք ի ծարաւոյ գայլ և գառն․
Գայլ ի վերոյ ըղկայ էառ, գառն ի բացեայ ի ստորև։ [րոյն,
Հէնն ի հրապոյր յայնժամ գըրգեալ յարկանախանձ որկո֊
Գըրգիռ ի մէջ էարկ բողոք բառնալով․
« Ընդէ՞ր զալիսըդ պըղտորես ինձ ի յումպ »։
Պատասխանի ետ գեղմնաբարձն աչաբեկ․
« Ցիս, գայլ, զիա՞րդ կարեմ զոր դուդ բողոքես,
Զ'ի քէն ալիքդ ինձ ի յարբումն իջանեն »։
Ցաղթահարեալ փաստիցն ի սաստ գայլն յաւել․
« Այլ անիծեր դու զիս, ամիսք են վեցեակ »։ [ժամ »։
Կըրկնեաց գառնիկն․ « Եւ ոչ ծընեալ դեռ ևս էի ես յայն֊
իսկ նա երդուեալ․ « Ո՛ն և ո՛ն, հայր քո ուրեմն անէծ զիս »․
Եւ ժանտաժուտ ժանեօքն ըզնա յօշատեաց։
Ի ձաւ առակս այս այնոցիկ պատահէ,
Որոց զանմեղըս կեղեքեն բարբանօք։

ՓԵԴՐՈՍ

---

## ՇՈՒՆ ՊԱՏՐԵԱԼ

Որ զօտարին յափըշտակել ինչ խնդրէ,
Իրաւամբես զիւրն իսկ մատնէ ի կորուստ։
Ընդ գետ ի լող մի ի բերան անկեալ շուն,
Ետես ի ջուրցն անդ հայելւոջ զըստուեր իւր․
Եւ այլ յիւրմէ անտի զաւալն համարեալ,



Հասեալ առնել և զայն խորհեցաւ․
Այլ ի պատրանս ագահութեան ըմբըռնեալ,
Զոր ունէրն ի բերանի՝ եթող զայն,
Եւ ոչ միւսումըն զոր խնդրէր պատահեաց։

ՓԵԴՐՈՍ

---

## ՔԱՂԱՔԱՑԻ ՄՈՒԿՆ ԵՒ ԴԱՇՏԵՑԻ

Քաղաքացի մուկն աղնիւ
Ընդելական հեշտ բանիւ
Զգեղջուկն ի տուն հրաւիրեաց
Ի ճաշկերոյթ փըշրանաց։
Ի կապերտի պարսկական
Ճաշք համադամք սփռեալ կան․
Ո՜հ քաղցրութեանն յոր անդէն
Սերտ բարեկամք վայելեն։
Իր անթերի այն ըսպաս,
Եւ չէր խորտիկ ինչ պակաս․
Այլ վաղ էարկ անդ ժըխոր
Ոմն արտաքուստ եկաւոր։
Քանզի առ դուրս տաճարին
Ցարեաւ շըռինդն աչադին․
Խոյս ետ ի ծակ կոշնատեղն․
Եւ հիւրն ըզհետ մըտանէր։
Լռեաց շըշուկ․ ոչ ոք է․
Մըկունքն ելին ի ծակէ։
Ասէ կոչողն հիւրասէր․
« Եկ բազմեսցուք ի ճաշ մեր »։
« Շատ է, ասէ գաշտեցին,
Եկ դու վաղիւ ի տուն իմ․
Թէ և իմ սեր աղքատին
Զինչ առ կոչնովքըդ քոյին։
Այլ իմ անդորր է սեղան,

Ցոր վայելեմ անխափան.
Այն զբօսանք քաւ լինէն,
Զոր ահ 'ւ երկիւղ շփոթեն »:

ԼԱՖՈՆԹԷՆ

---

## ԳԱՌՆ ԵՒ ԴԺՆԻԿ

Շանթք և ամպրոպք որոտընդոստ,
Հողմ ըզմայրիս տատանէր,
Օդ մըրըրկեալ ի խիստ շառաչ
Նըւագս ահեղ յօրինէր:
Ահաբեկեալ ի թաւ մայրիս
Գառն ի հօտէն իւր մոլար,
Ցայս կոյս և յայն փութայր ճեպէր
Անքոյթ խընդրել իւր դադար:
Դըժնիկն անդէն ձայնեաց առ նա.
« Եկ մօտ, ասէ, յիմս ի ծոց.
Ես պահեցից ըզքեզ յամրի
Ի սպառնալեաց խեռ ամպոց »:
Եմուտ անմեղ գառն ընդ նովաւ
Եւ ժանտ փըշոցն ի բերան
Գըզեալ կըռուեալ պատառեցաւ
Այն սարանիւթ պատմուճան:
Անց դադարեաց թափ մըրըրկին.
Գառն ելանել կամեցաւ.
Այլ ի ժանիս փըշոցն անգութ
Այնպէս անզերծ արգելաւ՝
Զի և ապրել այլ չէր հընար
Ցանապօրոյն ի մագլաց,
Թէ ոչ ըզգեղմն ի նա թողոյր
Գուցէ և զմորթն ի թիկանց.
Բայց քըրքըջեալ եւ ի վերջէ
Եւ կողավէր եղկելին.



Եւ քան հողմոց նըզովս կարդայր
Դըժնեայ բարուց վանատրին:
Հեգ դատախազք քան ի դատից
Ի պաշտպանաց խիթասցին:

ՓԻՆՆԵՕԹԹԻ

---

## ԳԱՅԼ ԵՒ ՀՈՎԻՒ

Գայլ քանասար ալեւոր
Ի սպանդ գառանց լեալ անզօր,
Ազդ զայս առնէր առ հովիւ.
« Ահա խոնարհ բեկ սըրտիւ
Ես զըղջանամ ի մեղաց,
Ոչ ևս առնեմ չար խաշանց.
Բայց դիր ընդ իս դու պայման՝
Կարգել ինձ դոյզն ինչ դարման »:
Ասէ հովիւն իմաստուն.
« Աղէ հարցէք ծեր գայլուն,
Զի՞ չեղեն բանք այդպիսիք
Մինչ ողջ էին քո ժանիք »:

ՏԵՐՈՍՍԻ

---

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՐԱԳԻԼ

Խրատէ առակս ումեք երբեք մի՛ վնասել.
Իսկ որ վնասէն՝ արդարապէս տուժեսցի:
Աղուեսու ասի ի ճաշ նախ հրաւիրեալ զարագիլ,
Լոյծ ի պնակի պատրաստելով նըմա ումպ,
Զոր ճաշակել երբեք նըմա չէր հընար:
Հրաւէր ապա արար և ինքն արագիլ,
Եւ մատուցեալ լի փըշրանօք շիշ ի մէջ,
Կըտուց ի ներքս արկանէ. ինքն ի յագուրդ,

Սովալըլուկ ըզճաշակից իւր թողեալ.
Եւ մինչ ի զուր լիզոյր նա զուլն անօթոյն,
Աւանդի չըքնաղադիւտ հաւոյն այսպէս խօսեցեալ.
« Համբերութեամբ պարտի կըրել որ ինչ այլումոք արար »:

ՓԵԴՐՈՍ

---

## ԳԱՅԼ ԵՒ ԿՌՈՒՆԿՆ

Որ փափագէ յանօրինէն վարձըս բարեաց,
Կըրկին մեղաւ. զի չարժանւոյն իսկ նախ օգնեաց,
Եւ զի չունի անըլխուրան երթալ ի բաց:
Ոսկր ի կոկորդ մըխեալ գայլոյն մինչ կըլանէր,
Ի տանջանաց ցաւոցն յաղթեալ նըկուն լինէր.
Ապա սկըսաւ մէն-մի առ իւր ի սակ ձըգել,
Զայն ցաւս ախտին յիւր որկորոյն ի բաց խըլել:
Հուսկ ապա խորդն երդմամբ մեծաւ եղեալ ի բան,
Եւ զայնչափ ինչ երկայնութիւն իւրում ուլան
Հաւատացեալ անդր ի յորկորն այն ահագին
Բազմավըտանգ բըժըշկութիւն գործեաց նըմին:
Որում փոխան մինչ թախանձէր ըզսակն ի վարձ,
« Ապախտաւոր իսկ ես, ասէ, շնորհաց ի դարձ,
Որ ողջ ըզգըլուխդ ի քեղ տարեալ ի մեր ժանեաց,
Եւ տակաւին վարձըս խընդրես փոխարինաց »:

ՓԵԴՐՈՍ

---

## ՍԻՐԱՄԱՐԳ ԵՒ ՀԵՐԱ

Տըրտունջ կալաւ սիրամարգ
Առ դիցուհին իւր Հերա,
Զի ձայն խըռպոտ և անարգ
Դըժոխալուր ետ նըմա:
« Եւ ե՞ր, ասէ, լուսինեակն
Այն չըքոտի հեգ հաւիկ՝
Զայն ընկալաւ ներդաշնակ
Լինել գարնան երգեցիկ »:



Ցասեալ Հերա մեծապէս.
« Կարկեաց, ասէ, ապաշնորհ.
Խանդալ զիա՞րդ չամաչես
Զայլոց ըզձայն գեղաւոր,
Որ ըզլանջօքըն սիրուն
Մանեակ ունիս հիասքանչ,
Բան զծիածան գոյն ի գոյն
Փայլ արձակեալ և ճաճանչ:
Ոյր ի տըտան շողշողեն
Ակնախըտիղ այդ սխաակք,
Ո՞ւմ ի հաւուց օդեղէն
Քոյդ շնորհեցան սերձ գիսակք:
Ոչ ամենայն կենդանւոյ
Ձիրք ամենայն են բաժին.
Եւ քեզ զիա՞րդ միայնոյ՝
Պարգևք ամէն շնորհեսցին:
Թեթևաթռիչ է բազէ,
Արծուոյ տըւաւ սիրտ արի,
Եւ զերդ խուժանն իսկ ասէ՝
Ագռաւ՝ գուշակ է չարի.
Արդ ո՞ երբէք ի տըրտունջ
Հատաւ զիւրոյ կարկաչէն:
Հա՛պա լըռեա, կամ թէ ոչ՝
Կապտին փետուրքդ առ ի քէն »:

ԼԱՖՈՆԹԷՆ

---

## ԿՆՏԱԿՔ ԵՒ ՍԱՆԴՐ

Կընտակք երկու գըտին փըղոսկր ի բացի.
Այր յընկերէն կորզել ճըգնէր մուրցացի:
Կորոյս յաղթողն և զոր ունէր խուն գիսակ.
Եւ ահա սանդր էր պայքարին մըրցանակ:

ՖԼՈՐԻԱՆ

### ԷՇ ԵՒ ՍՈԽԱԿ

Էշ սոխակի պատահեալ.
« Ընկեր, ասէ, այլ ընդ այլ
    Զրոյց անբաւ
    Ցարդ ընթացաւ,
Թէ ես երգիչ քաջոլոր.
Այլ դիւրհաւան ես ոչ եմ
Մինչև ունկամբս իմ լսեմ.
    Դու ինձ հապա
    Երգ ինչ ասա,
Տեսցուք իցէ՞ դաշնաւոր »։
Յայնժամ սոխակ հրաշալէծ՝
Յիւր մըխեցաւ ի հանդէս.
Ուռնոյր փափուկ գեղգեղէր,
Բիւր դայլայլիկս յօրինէր.
Պարզեալ ըղձայնն և գեղոյր,
Հընչէր հովիտ և բլուր.
    Այն այգածնին
    Այն երգեցկին՝
Բնութիւնք համայն կան ի լուր։
Հողմք լռեցին, հաւուց պարք,
Մակաղեցան և ոչխարք.
Ի հաւն հարեալ զաչս հովիւ,
Նորին գերեալ էր ձայնիւ.
    Լռեաց թռչուն.
    Լռէր բնութիւն.
Էշն ետ պատգամ սուղ բանիւ.
« Զրոյցքն, այո, են արդար,
Եւ չէ տաղտուկ քոյդ բարբառ.
Այլ լինէիր դու քաջուս
Ի նուագ երգոց բազմահնիւս,
    Թէ վարժէիր
    Առ ոտս ընտիր
Աքաղաղի մեր տեղւոյս »։



Լսեալ զվըճիռ զայս անկարծ՝
Թռեաւ սոխակ քաջ ի բաց։
  Մի՛ տար և զմեզ, ո՛վ Աստուած՝
Ի ձեռս անմիտ դատողաց։

ՔՌԻԼՈՎ

---

### ԵՐԱԺԻՇՏՔ

Ընչապլըտուկն ապուշնայ,
  Նոխազ մորուեղ,
  Ուէշ ականջեղ,
Եւ արջ թաթեղ ընդ նոսա՝
Դաշնակաւոր խնդրեցին երգ յօրինել։
Գըռալին թըմբուկ ծակ և գալլին կիսաթել,
Տիկ խըլաձայն, և սրինգ ջախջախ միջաբեկ.
Նըստան ի մարգ, յուռուոյն ի ստուեր դիւրաթեք։
Հարկանէին ջանիւ զանցնիւր ըղջործին,
Բայց արտանուագ երգոցըն ձայնք հընչէին։
Ի վեր վազեալ անդէն ճապուկըն կապիկ,
« Կացէք, ասէ, զուր մըրցակիցք իմ ճըգնիք.
Ո՞ր իցէ մարթ նուագաց մերոց գոլ դաշնակ,
Մինչ խառն ի խուռըն մեք նըստիմք այսգունակ.
Դու արջ եղբայր, նիստ քո թըմբկաւդ ընդ աջմէ,
Փողարն իշակ թող բազմեսցի ի ձախմէ,
Ես նոխազին նըստայց հանդէպ աստանօր,
Հապա նըւագս առեալ հարցուք նորանոր »։
Փոփոխեցան տեղիք, այլ ոչ եղանակք.
« Ոչ այդպէս, ո՛չ, էշն անդ գոչեաց, բարեկամք.
Գեղօնս ընտիրս թէ կամիմք գեղգեղել,
Հարկ ըստ կարգի աւագութեան է բազմել »։
Զուր անսացին իշոյն խրատու և յարեան,
Դարձեալ աղմուկ, դարձեալ շփոթ խառնաձայն։
Անդ ուռենւոյն յանկարծ ի յոստ էջ սոխակ.
Սոքա անդէն բարձեալ առ նա աղաղակ՝
« Ողջամբ եկիր խօսնակդ, արա մեզ շնորհ,

Դիր կարգ ի մեզ, զի նուագս իցեն դաշնաւոր.
Են ահա վինք առ մեզ և տիկ և թըմբուկ,
Միայն ասա թէ մեք զիա՞րդ բազմեսցուք »:
« Առ յօրինել, ասէ, նըւագ գեղեցիկ,
Ճարտարութիւն խընդրի և կիրթ լսելիք.
Իսկ դուք եղբարք որպէս զիարդ և նըստջիք,
Ոչ լինիցիք երբեք ճարտար երգեցիկք »:

ՔՐԻԼՈՎ

---

## ՓԻՂ ԵՒ ՇՆԻԿ

Ընդ պողոտայս փիղ ածէին
Հասարակաց ի հանդէս,
Քանզի առ մեզ յաղթ կենդանին՝
Հազիւ երբեք գայ ի տես:
Խըռնէր խուժան ըղձեաւ փըղին
Ի վիթխարին կալեալ դէտ.
Բայց և շընիկ մի եւ չընչին
Դէմ կենդանւոյն անհեթեթ:
Տեսեալ ըզփիղն ընդ ամբոխին
Հաջէր ճըչէր վազվազէր,
Խուն ինչ մեկնէր, դառնայր կըրկին.
Փիղն անխըռով յառաջէր:
« Ա՛ խայտառակ գըծուծդ ի շանց,
Գոչեաց առ նա այլ մի շուն.
Ի փիղ հաջել ի սիգապանծ
Զէ քեզ ի ձահ քաջութիւն.
Ո՞չ տեսանես, մինչ գաս ի վէգ
Ընդ հըսկայիդ պընդակուռ
Դա քեզ չառնէ երես երբեք,
Զայնիդ չանսայ բանդագուշ »:
« Ահա այդ իսկ է իմ խրախոյս,
Կըրկնեաց շընիկն ըղբարբառ,
Զի դէմ փըղին ես սինլըքօրս՝
Համարձակիմ ի պայքար.



Զինէն այլ շունք առցեն ճառել,
Թէ վա՜չ շընիկ քաջարի,
Որ անվեհեր ի կըռիւ էր
Ընդդէմ փըղին վիթխարի »:

ՔՐԻԼՈՎ

---

## ԿՌԻՒ ՇԱՆՑ ԸՆԴ ԿԱՏՈՒԱՑ ԵՒ ԿԱՏՈՒԱՑՆ ԸՆԴ ՄԿԱՆՑ

Չիք տեղի չիք ժամանակ՝
Յորում չիցեն լեալ կըռիւք.
Եթէ խընդրես օրինակ,
Ըզքեւ իսկ կան բիւրք անթիւք.
Ի տարերաց ըսկիզբն առնեմ թէ կամիս,
Զի ցանդ անհաշտք հակառակին իրերաց.
Նոյնպէս և ընաւ արարածք այսր աշխարհիս՝
Յար ի մըրցանս են յար ի կռիւ ի հերձուած:
Երբեմն ուրեմն էր ապարանք մեծաշէն
Ուր բազմութիւն շանց և կատուաց գըտանէր.
Բայց այնչափ կարգք եդան ի տանըն տեառնէն,
Զի այլ ոչ ևս անդ կըռուոյ ձայն ոք լըսէր.
Անդ պաշտամունք իւրաքանչիւր սահմանեալ,
Եւ կերակուրք չափով կըշռով բաշխէին.
Եւ որ կադէր յանկարծ՝ դանիւ հարուածեալ
Ըզյանցուածոյն վրէժ լուծանէր զարժանին.
Եւ էր զնոսին այնուհետև տեսանել
Ոչ իբր ըզշունս և ըզկատուս ոխերիմ.
Այլ զի զմիմեամբք առնէին միշտ ելևէլ
Իբրև եղբարք եղբօրորդեակք մըտերիմ:
Բայց տևեաց ոչ ընդ երկար
Խաղաղութիւնն այն և սէր.
Զի թանըն չէր հաւասար,
Կամ ոսկր ումեք պակասէր.
Այլք յաւելուն թէ և քած
Կորեանցն՝ ի հոգս ի շընտան

Բաղցեալ նըքթեր՝ զի չէր հաց,
Եւ թէ կատուք զայն կերան։
Անդ յաղմըկէն վեր ի վայր
Պալատն ողջոյն դըղըրդեր․
Հընչէր գաւիթն և գահլիճ,
Թընդայր մառան, խոհարան։
Շանցն և կատուաց յուժգին ճիչ՝
Դրացիքն ամէն խռովեցան․
Կատուաց կանչիւն և բողոք՝
Ըզկանոնացն էր նորոց․
Եւ շանց հաչիւն անողոք՝
Լի էր ցասմամբ ի՛ զայրոյց։
Խըփընկեցից փաստաբանն
Ասէր՝ թէ դատ պարտ է տալ,
Եւ 'ստ օրինաց տանուտեան՝
Ի պատուհաս շանց փութալ։
Սակայն եկ տես նոր արկած,
Զի այն թըղթեանն ամենայն,
Մուրհակք և գիրք օրինաց․
Զորս ծառայից պալատանն
Էր ամփոփեալ ի մի խորշ,
Մըկանց էին լեալ կըրծօն։
Դարձեալ բողոք բարձրագոչ․
« Բարձցին մըկունք ո՛ն և ո՛ն »։
Յայնժամ կատու մի, կատու ծեր խորագէտ,
Յանձն առ ճըգնել ունել զմըկունս մի առ մի,
Մինչև անհետ լեալ ջընջեսցի նոցին ճետ։
Եւ տանուտէրն հանգեաւ հոգոց առ վայր մի։
Եկից դարձեալ ես յի՛մ բան՝
Թէ ընդ երկնիւք չէք էակ
Որ չունիցի ախոյեան
Իւրում բնութեան ընդդիմակ․
Այլ դու ջանաս վայրապար՝
Եթէ զպատճառըն խընդրես․
Զոր Տէրն արար՝ լաւ արար,
Այսչափ միայն գիտեմ ես։



Այո՛ գիտեմ և զայս յաճախ պատահար,
Զի զոչընչից կարգին բաղումք չարաչար․
Մա՛րդիկ, մարդի՛կ, ըզձեզ պիտէր տես յուլթսուն՝
Դարձեալ յըղել ի ձեր նախկին դըպրատուն։

ԼԱՖՈՆԹԷՆ

---

# ՀՈՎՈՒԵՐԳԱԿԱՆՔ

---

## ԴՐՈՒԱՏ ՇԻՆԱԿԱՆ ԿԵՆԱՑ

*Վա՜շ երջանիկ մըշակաց՝ զիւրեանց նըսիւ թէ գիտիցեն,*
*Ոյց ինքնին երկիր արդար ի մարտամբոխ զինուց փարատ*
*Ի ծոցոյ հողոյն բըխէ դիւրապատրաստ պարէն կենաց։*
*Ապարանք բարձրաձեղունք աշխարհամուտ դրամբք հոյա–*
*[կապ*

*Թէ հոսեն ոչ ի դաւթայ զայգորելեացն ուղխից կոհակս,*
*Ի դրանդիս ոչ պակշոտին կամարաշէն պերճ նըկարէնս,*
*Ոչ ի պըղինձս եփիւրացիս և ի հանդերձս ոսկեճամուկս.*
*Եւ ոչ ասըր լուսաներկ յասորեական դեղ շըպարի, [նին.*
*Ոչ ծորածոյ իւղոյն պարզուածք կասեաւ ի պէտս ապակա–*
*Այլ հանգիստ յապահով, կեանք անպատիր ճոխ ընչաւէտ,*
*Այլ անդորր ի դիւր վիճակս, անձաւք և լիճք ջուրց կենդանի,*
*Այլ հովիտք հովանաւորք և անդէոց մեղմիկ բընչիւնք,*
*Եւ ընդ ծառով հեշտալի քուն հանդըստեան ոչ պակասեն.*
*Անդ արօտք և անտառք և երէոց որջք և մորիք,*
*Եւ արբուն ժիր մանկութեան սակաւապէտ և երկասէր,*
*Աստուածոց պաշտամունք և սըրբանուէր հարց ալեօյթք.*
*Արդարութիւն զվերջին հետս առ նոսին արկ մեկնեալ յեր–*
*[կրէ։*



## ԵՂՋԵՐՈՒ ՑԱՓՇՏԱԿԵԱԼ

*Եղջերուին այնորիկ չըքնաղագեղ էր կերպարան, [ռեայ*
*Եղջերք բարձունք, և տածէին ըզնա մանկունք որդիք Տիւ–*
*Քեցեալ ի ստեանցըն մայրենի, տածէր և հայրն ինքնին Տիւ–*
*Որում անդէայն հնազանդէր արքունական, և լայնալիր [ռէ,*
*Դաշտօրայք նըմա յանձն էին ի պահ. և քոյր նոցին*
*Սիլուիա զամենայն ածեալ խընամ դարմանէր*
*Զուսեալն ի հլութիւն, և բոլորիւք փափկիկ ծաղկանց*
*Զեղջերս երէոյն գեղազարդէր, սանդրէր ըզնա, [րեալ*
*Լուանայր յաղբիւր ականակիտ. նա ձեռնընդել կայր սովո–*
*Ար սեղանովըն տէրունի, և ընդ անտառըս թափառեալ՝*
*Դառնայր ինքնին ապա անդրէն ի տուն ի սեամս ընտանիս,*
*Անագան իսկ մընացեալ ի տարաժամ երեկոյի։*
*Սըմա բարակք Յուլեայ յորսըս կատաղիք, մինչ դեգերէր*
*Ըստ դիպուածոյ ի բացեայ՝ ընդ հեղասահ լուղեալ ընդ գետ*
*Եւ զզեռեզերբ ի դալարուոջ մեղմէր ըզտօթ, մըտին ըզհետ։*
*Ինքն իսկ Յուլոս, գեղեցիկ գովից յայնժամ վառեալ ի սէր,*
*Ոստոյց ի կոր եղջերէն սըլաք, և ոչ աստուածուհին*
*Եթող անօգնական վրիպել աջոյն, թըռեաւ ծըղօտն*
*Հըջեկահիւն սաստիկ, էանց ընդ փոր նորին և ընդ երանս.*
*Կարեվէր քառոտանին դիմեալ ի յարկ անդր ի ծանօթ,*
*Անկաւ հառաչանօք ի գոմ՝ յարիւն թաթաւեալ,*
*Ելից ըզյարկն ի պոռոչ՝ իբր օգնութիւն պաղատելով.*
*Նախ Սիլուիա քոյր ըզծըղխս հարեալ զուսովք ձայնէր նը–*
*[պաստ*

*Աղաղակաւ, և զտոհմս ի ձիգն ըզչինականըս կարդայր։*
*Նոքա իսկոյն գան հասանեն, զի հրապուրիչն անողորմ՝*
*Կայր դարանեալ ի լուռ մայրիս. կէսք ի խանձողըս կիսայ–*
*Այլք ի կոճեղս ոստալիցըս զինուորին, հայթայթէ [րեաց,*
*Զայրոյթ ի զէն որ ինչ ուժք և պատահէ առ ձեռին։*
*Եւ Տիւռոս ի պատառել ըզըուն կաղնւոյ քառահերձ*
*Սեպս ի ներքս արկեալ ուժգին, մոլեգնոտի զարհուրելի,*
*Յափըշտակէ ըզտապար, կոչէ զամբոխն անդր ի մի վայր։*
*Յայնժամ պատեհ գըտեալ յելարն ժանտաժուտ աս–*
*[տուածուհին,*



257-2003
57725
ՀՍՍՀ-ССРА. им. А. Мясникяна

Իջանէ ի բարձունս դիտանոցին, և զկայ առեալ
Ի գըմբէթարդ յարկ գումըն՝ տայ ի ծայրէ անտի նըշան
Հովուական, և կոր եղջերբ անդընդային ածէ շառաչ.
Ծուրջ ընդ անտառն առ հասարակ գընայ յանկարծ սօսա-
[ւիւն մեծ,
Մայրիք խորինք տան արձագանգ, եռուղեկան աստուա-
[ծուհւոյն
Լըսէ լիճ ի հեռուստ, լըսէ սպիտակ ծըծըմբայնով
Ջուրբ գետըն Նար, և վելինեանք լըսեն ի բաց աղբերակունք,
Սըրտաթունդ ահիւ փարին մարք ըզմանկամբքըն դըրկա-
[ալինդ:
Յայնժամ մըշակք ամեհիք դիմեն ի ձայնըն երագունք,
Համախըմբին ուր եղջերեայն կոչ առնէ փող աճեղագոչ.
Նոյն և արբունք տրովացի բացեալ ըզդրունըս պատնիշաց՝
Հըոսեն ի յօգն Ասկանեայ, և յարդարեն ճակատամարտ,
Ոչ ևս ի կռիւ գեղջկային ըսպառազէնք ի բիրտ մահակս
Եւ ի խանձողըս կիսակէզ, այլ երկսայրեօք գռռան սուսերք.
Նիզակախուռն յառնէ հունձ սեաւ, փայլէն պըղինձք յար-
[փւոյն ի ցոլ,
Լոյս մինչև յամպս արձակեն. որպէս մինչ ծուփք նախկին
[հողմով
Ըսպիտակել առնուն, ուռնու առա տակաւ ծով, կուտակէ
Կոհակս ի վեր, և յանդընդոց մինչև յաստեղս անդր ամ-
[բառնայ:

ՎԻՐԳԻԼԻՈՍ. Ենէական:

---

## ԱՅԳԵԿՈՒԹ

Այլ զուարթալից աշնայնոյն ահա գըլխոյ այգեկութ՝
Սըփռ՝ ի լերինս, ըզծափաձայն գոչիւնն հընչեն լերինք հա-
[նուր,
Եւ այգեկութ, այգեկութ՝ ընդ գիւղօրէն լըսի համայն:
Ո՞ւմ ոչ, ո՜հ, սիրտ խընդութեամբ գեղազըւարճ վեղու նո-
[րոգ,
Մինչ լերինք մի քան ըզմի 'նդ այգեաց պերճանըս ճոխանան:



Գեղջօրէն վայրայած կախեալ նոցին կան ի կողաց
Պարոյրք չըքնաղք առ ի շեղ. կարակնաձև ի դըրասանդս
Նփին այգիք արեգակամբ գեղերփնելով զողկոյզն ի կախ,
Եւ որթատունկ ամուանոյն ծառոյ ի ծառ յաւռ սաղարթուց
Տաշտագեղ բազկատարած զուգախառնին նոր բարունակք,
Եւ բուրեն հոտ մեղրահամ յելս մայիսի այգեաց ծաղկունք
Բուրումն անոյշ՝ որ ի զմայլումըն զազդելիս յափըշտակէ:
Այլ զի՞նչ խօսիմս. ո՜հ, ամենուստ ձեռն ի ձեռին ընդ գիրդ
[հարսունս
Մանկունք և հարք ալևորք և առոյգանձըն պատանեակք
Եւ սպասեակք՝ դաս ժիրաժիր, ի կութս այգեաց դիմեն ի
Սա կապուտ ըզձողաբարձ՝ ունի այլ ըննու ըզսակառիս. [ճահ.
Եւ թիկնաւէտ ուսք և բազուկք խըրախամիտք ածեն բե-
Որպէս ճեպեն ի ծաղկունս ապրիէլի գործօն մեղուք [րեն:
Սաւառնեալք ամպանըման, կոծին յայերս օդք ի տըզզիւն.
Ոմանք մեկնին, դարձ առնեն յաճախագունդ այլք եկաւորք.
Սա ոք ըզբեռնըն դընէ, և նա ըզծուծըն ժողովէ, [նոյշ:
Եւ իմաստունք խորհին ճըգնին, փեթակն ողջոյն բուրէ ա-
Կամ որպէս երկայնագիծ տողեալ ի շար ընդ արտորէս
Ի ներքին օթևանաց շարժի մըրջմանց աղըն մանրիկ
Առնել համբար ձմերանի, հըպին ընդ ուղն յուշըս միմեանց.
Մինչ այս մինչ այն խոլըքըն լընուն և դիզանայ կոյտ մըթերին:
Այգեկութըն վախճանեալ և՛ ի կարգ ածեալ գործք շինա-
[կանք.
Մարք տընարարք կախեն ընդ յարկն ընտիր ողկոյզըս խա-
ղողոյ,
Եւ եփեն թանձր ըզխաղմուզ. մինչ կաշըմբուտըն պատանիք
Փոխանակաւ ճըզմելով հընձան հարեալ զհիւթըն քամեն,
Ըզփոխեալն ի գինի տապով ի ջեր արեգական:
Դըղըրդին ի թընդիւն նըկուղք գինւոյն և շտեմարանք.
Եւ ամենուստ լըսին ընդել բաքոսական տօնք շըւայտոք:

Յ. ՊԱՐՊԻԷՐԻ

## ԵՐՄԻՆԵԱՅ ԱՊԱՍՏԱՆԵԼՆ Ի ՄԱՅՐԻՍ

Իսկ յայնժամ Երմինիա յերիվարէն առաջնորդեալ
Հասանէ ի հինաւուրց մայրեաց անտառ հովանաւոր.
Եւ գողդոջուն ի ձեռանէն անկանին Թոյլ երասանակք,
Ընդ մէջ մահու և կենաց բերեալ ըզտիպ կիսակենդան։
Երիվարն ըզդարձադարձ ճանապարհօք ըզնա վարեալ
Յո՛ և պէտ առեալ տանէր. աներևոյթ ծածկեալ յաչաց.
Եւ համբուն չէր իսկ վըտանգ Թէ հետամուտ ինչ ոք իցէ։
Որպէս ըզհետ բազմատաժան որսոցն յերկար արշաւանաց,
Հատկըլեալ՝ շունչ ի բերան դառնան բարակք յոգնատը-
[խուր.
Կորուսեալ ըզգազանին հետս ընԹացից փախըստական,
Մացառաղօղ ընդ անտառ ի բացարձակ դիւրից դաշտաց.
Սապէս հեծեալքըն քրիստոնեայք դարձ արարեալ գան ա-
[մօԹով
Կորակոր զայրոյԹ ի սիրտ՝ վաստակաբեկ խոնջք յընԹացից։
Իսկ կուսին ճեպեալ անդուլ զարհուրագին և Թափառոտ,
Ոչ իսկ ընդ կրունկ դառնայ նայել Թէ ոք ըզհետ իւր պընդիցի։
Ճեպ ըզգիշերն ի բուն տըւեալ, և զբովանդակ օրն ի գլուխ՝
Աստանդական Թափառէր անառաջնորդ և անխորհուրդ,
Ոչ այլ ինչ լըւեալ և կամ տեսեալ զիւրև էից պատկեր՝
Բայց զաչացն իւր արտասուս և զհեկեկանըս հեծուԹեան։
Այլ մինչ արև ի լուսազարդ լուծեալ կառացն յառեղանէն
Ջերիվարաց զամոլսն ի բաց՝ խորասուզի յալիս ծովուն,
Հասեալ կոյսն յալիս վըճիտ գեղապարոյրն Յորդանանու,
Եւ իջեալ յեզըր գետոյն՝ անկեալ դընէր ընկողմանեալ։
Ոչ ինչ բընաւ ճաշակեաց՝ յիւրոց վըշտաց գըտեալ ճարակ,
Եւ արտասուաց լոկ ծարաւի. այլ քուն անդէն խաղաղաւէտ,
Հեգ մահացուաց անդորրուԹիւն՝ Թևատարած փարեալ զնո-
Ի Թըմբիր ըզգայուԹեանց՝ յախորժական ի մոռաց [վիմբ,
Արկեալ համայն և լըռեցոյց ցաւոցն ի նմա ըզխըռովուԹիւն։
Այլ և ի նինջ խաղաղ քընոյն ոչ անխըլըրտ դադարէ սէր՝
Երևոյթ կերպարանօք զանդորրուԹիւնըն վըրդովէր։
Ոչ Թափեաց ըզքունն յաչաց, մինչ ի գեղգեղ հաւուցն ի ձայն



Որք զըւարԹ ողջունէին ըզծառաստունկ ոստս անտառաց,
Եւ ի մըրմունջ յորձանաց գետոյ՝ մայրեաց տերևախիտ,
Եւ ի խայտալ քաղցրիկ օդոյ վէտ վէտ յալիս և ընդ ծաղ-
[կունս,
Ի բանալ աչացն՝ ի տես գան մենաւոր դադարք հովուաց.
Եւ ձայն տըխուր Թըւի լըսել խառն ընդ ոստոց ուռալեաց
[մըրմունջ,
Իբր ի հրաւէր ողբոց ըզսիրտըն շարժելով ի հեկեկանս։
Եւ մինչ դեռ լայրն, այլ իմն անդուստ ազդողագոյն ձայնից
[հընչիւն՝
Ընդմիջեալ և հատանէր զիւրոց լալեացն զհեկեկանս,
Պէս գունակ, որպէս էրն իսկ, հովուականաց երգոց նըւագ,
Սըրընգացն անտառային խառնեալ ընդ վանգս անփառու-
Ի վէր վաղեալ և ձայնին դընայ ըզհետ յուշիկ ի քայլ, [նակ։
Եւ տեսանէ ալեւոր ընդ հովանեաւ բազմեալ ախորժ
Առ երի մակաղելոց խաշանցն՝ ի հիւսըս կողովից
Եւ ի լուր գեղգեղելոյ երից մատաղ իւր որդեկաց։
Ըզդողի հարան տըքա նորոց զինուց ի տեսն յանկարծ.
Ողջոյն նոցա քաղցր ի ժըպտի տայր ի խրախոյս Երմինեա,
Եւ ըզհերան ոսկեծըղխս և ըզծաւի աչս հոլանեալ՝
«Աղէ ըզհետ լերուք, ասէ, ախորժ ձերոցըդ պարապմանց,
Ո՛ բարեբաստ ընտանեակ, և սիրեցեալ առ ի յերկնէ.
Ոչ խաղմարար մարտից վըրդով կազմածք զինուցս իմ այս
[ածեն
Հեշտալի ձեր վաստակոց և ոչ երգոցըդ քաղցրուԹեան»։
Յաւելեալ ապա ի բանս՝ «Իսկ զիա՞րդ այս, ասէ, հայրիկ,
Ջի բոց ուժգին մարտից ծաւալ շուրջանակի ըզսահմանօքս՝
Եւ ձեզ անդորր իցէ աստէն խաղաղաւէտ ի յօԹևան,
Աներկիւղ յաղխաբեր վտանգէ զինուց ասպատակաց»։
Իսկ նա «Որդեակ իմ, ասէ, այս ընտանեակքս և հօտքս աս-
[տէն
Անվըրդով կացին միշտ զերծ յաղուից մարտից ասպատակաց,
Եւ ոչ շըռինդ զինուց երբէք զայս մենաւոր ամբոխեաց խորշ։
Այս շնորհք երկնից իցեն, որ զհէք դասակս անյանց հո-
[վուաց խնամեալ՝
Մեծարել հաճի. և կամ որպէս շանԹիք երկնատեղաց

Ոչ ի խոնարհ ձայթել գիտեն, այլ յերկնաալիչ բարձր ի
[կատարս,
Սապէս և դու տարաշխարհիկ ի փայլ զինուցըն բարկաձայթ
Ըզգուշ թագաւորաց ևեթ ընկճէ պերճ գագաթունս,
Եւ ոչ անյագ զօրականին աւարառու տենչ ի հրապոյր։
Անարգ և անտեսեալ մոլոց, այլ ինձ ցանկալի յոյժ. [նաց,
Փարթամ գանձուց չեմ ցանկացող, ոչ արքունի գաւազա-
Եւ ոչ անյագ տենչ փառասէր, ոչ հոգք յանքոյթ սիրտս
[օթեցան։
Ցականակիտ վիժեալ առուաց արծաթափայլ ջըրոյ վըտակ
Անկասկած ի չար թունից հարկանէ զիմ պէտս ի ծարաւ.
Եւ խաշինքդ իմ այգոքիկ և բանջարոցըդ պարտէզիկ՝
Անարծաթ ինձ պատրաստեն դոյզըն սեղան սակաւապէտ։
Ձեռք յոլովից ցանկացողք, կեամք սակաւուք աստ շատա-
[ցեալ.
Դոքա որդեակք իմ են ահա, որք ըզխաշանցն ունին ըզպահ.
Ձեն իմ ծառայք, կեամ ինքնուրոյն աստ ի խըրճթիս յայս մե-
[նաւոր
Կացեալ դէտ թեթև այծից և եղջերուացն սատոսանելոյ,
Եւ ձըկանցըն կայտռելոյ ի թինդ յալիս գետոյս այսմիկ,
Եւ հաւուցն ընդ երկին թեւս ի թըռիչըս պարզելոյ։
Եղեն երբեմն յառոյգ յիմ ալս, յոր զոռանցն անփորձ
[հասակ,
Իղձք այլ ի սիրտ, և զխաշնարած արհամարհեալ կեանս հո-
[վուական՝
Խոյս ի յերկրէն իմ հայրենի ետու վարել կեանս ի Մեմֆիս.
Անդ ի դըրանիկ խումբ իշխանաց խառնեալ և ես առ ի պատիւ,
Եւ թէպէտ պարտիզաց և ծաղկոցաց վերակացու,
Տեսի սակայն և ծանեայ անդ զարքունեաց չարեաց ոճիր։
Եւ ի հրապոյր փառաց՝ յանդուգն ի յոյս եղեալ ապաստան՝
Ժուժկալեցի ընդ երկար անբերելի չարեաց ի տոկ.
Այլ տակաւ ի թառամել ծաղկափըթիթ տարոյդ տիոց
Ընդ անէակ ակընկալեաց շիջեալ յիս հուր բուռն եռանդան,
Ողբս առեալ լայի զխոնարհ կենցաղ զիմ զայս անդորրաւէտ,
Եւ անձկայրեաց խաղաղութեանն իմոյ ըղձեալ զոր կորուսի՝
Ասեմ. Մնասջիք բարեաւ, մնասջիք դուք արքունիք. և այս-
[գունակ՝



Առ ծանօթ մայրիս դարձեալ՝ դըտի զաւուրս երջանկու-
[թեան »։
Ի խօսել ծերոյն այսպէս, Երմինեա յակձիռս եղեալ [ներ.
Ի քաղցուենի շըրթանցն ի կախ կայր անշըշունջ ունկըն դը-
Եւ բանիցն իմաստութեան թափանց ի սիրտն եղեալ ի խոր
Խաղաղէր ինձ ի մասնէ զամբոխ կըրից բազմավըրդով։
Կայր մըտախոհ ցըմեծ ժամս. և հուսկ ուրեմըն հաստատէր՝
Ցայնմ ի թաքուն մեծութեան առ ժամանակ դադարել դէթ
Մինչև բաղդն հեշտաբար զելս ըզդարձին դիւրացուսցէ։
Ապա խօսել կալեալ, ասէ. « Ո՛ բարեբաղդ դու ծերունի,
Որ անցեալ երբեմն ընդ փորձ չարեաց՝ եղեր դու խելամուտ,
Ի դուլթ գորովանաց ընդ տառապանս իմ շարժեցիս.
Ժողովեա և զիս ընդ քեզ յայս օթեւանըս ցանկալի,
Մեծ է ինձ գոլ քեզ ընակակից ընդ հովանեօքըս հեշտաբար.
Թերևս լիցի դիւր սակաւուք մաշաշըշուկ կըրից սըրտիս։
Թէ ցանկալի ինչ քեզ իցեն ակունք և կամ ոսկի, արծաթ,
Այց խաժամուժըն դիցական տանի պաշտօն իբր աստուածոց,
Շատ ինձ դեռ ևս են ի լընուլ նոքօք ըղձիցդ ըզցանկութիւն»։
Եւ բանիցն ըզհետ կայլակըս սըրտառուչ ցաւոց ընդ այտս՝
Ի գեղանի աչացն ոլոռն ոլոռն հեղեալ բիւրեղափայլ,
Պատմէր նմա ըստ մասնէ զիւրոյ բաղդին ըզչար արկածս.
Ընդ որ հովիւըն գորովեալ՝ լաց ընդ նորա լալիս խառնէր։
Կարեկից դըթով ապա քաղցըր բանիւք տայր մըխիթար,
Եւ հայրենի խանդաղանօք սիրողաբար հիւրընկալեալ՝
Առեալ ըզնա մուծանէր առ տարևոր իւր ամուսին,
Զոր ըստ սըրտի իւրում երկինք էին շնորհեալ համանըման.
Կոյսն ազատ՝ ըզգեղջկականն առնու զանձամբ դըրգըլեակ խո-
[շոր.
Եւ զհերօքն ածեալ ձըրդէ անփառունակ քօղ ի ծածկոյթ.
Այլ աչացն ի շարժել և անդամոցըն վայելուչ՝
Եղանէր շատ իսկ յայտնի ոչ անտառաց գոլ ընակաւոր։
Ոչ հանդերձ գըձուձ քողարկ լինէր գեղոյն չըքնաղափայլ,
Եւ ոչ վեհիցն որ ի նմա ազնուականըն պերճութեանց.
Ի դուզնաքեայ իսկ ի վաստակս անփառունակ աշխատու-
[թեանց
Վեհ ինձ ի նմա արտափայլէր վայելչութիւն արքայակերպ։

Հօտից իւրոց ոչխարաց ի մարմանդ վայրս առաջնորդեալ,
Ի փարախ ցանկապատին անշուք ցըւոյն ածէր անդրէն,
Եւ ըղձաւ ըստինսըն նախ մեղկաշօշափ ձըմլեալ մատամբ
Ափոփ ապա շուրջանակի սեղմեալ կըթէր ըզկաթն ի դոյլ։
Յաճախ զամառնային տօթաժամաւըն կիզանուտ,
Մինչ ոչխարակըն հանգչէին մակաղեալ շուրջ ընդ հովանեօք
Ի կեղևս հաստաբուն կաղամախից և սօրդենեաց
Բազմօրինակ քանդակօք դրօշմէր զանուանըն տարփելի,
Եւ բիւրից ծառոց ի բունըս փորագրեալ տայր ի քանդակ
Ըզգըժնեայ ելըս վախճանի խիստ և ողորմ տարփիցն իւրոց,
Եւ այսրէն մատուցեալ ի քանդակացն իւր յընթերցուածն
Ի գեղահօս շիթս արտասուաց ըզնազելի զայտս ոռոգէր.
Եւ յաւելոյր լալագին. «Ո՜ ծառատունկք իմ ընտանի,
Անջինջ ի ձեզ կալարուք զայս ցաւագին վըշտաց իմ վէպս.
Զի թէ յանկարծ ըստ դիպաց հաւատարիմ ոք տարփածու
Ընդ անուշ ձեր հովանեաւ թափառական հիւր օթեսցի,
Ընդ բազմադէմ ցաւոց աղէտս իմ դըթացեալ քաղցր ի գորով,
Ասասցէ. Ո՜հ, եղեռնաւոր և ամպարիշտ դառն հատուցումն
Ի բաղդէն և ի սիրոյ տըւեալ աննենգ սիրեցողին։
Ո՜ դիտէ, եկեսցէ օր. թէ հաճեսցին երբեք երկինք
Գըթածաբար լըսել զաղերս ըզըրտառուչ մահկանացուի,
Զի և նոյն ինքն՝ ում զարդիս ի մոռացօնս իցեմ թերևս,
Եկեսցէ՝ դիպացն ի տալ՝ այսր ի մայրիս յայց ի զընին,
Եւ յածել շուրջանակի աչացն՝ ի տես գայցէ նըմա [մին,
Ուր անկեալ կայցէ ՚նդ հողով դիւրաթառամ այս հեգ մար-
Եւ ի կաթել դոյզն արտասուաց հառաչախառըն հեծու-
[թեամբ,
Զանազանն հատուցէ սակ դառն աղխտիցըս վըշտամբեր։
Եւ այսպէս, թէ կենդանեաւ հէք և թըշուառ զըտայ սըր-
[տիւ,
Ի մահուն իմում հոգիս գէթ բարեբախտ երջանկասցի.
Եւ ոսկերացըս ցուրտ աճիւն վայելեսցէ ի ցանկալին
Գութ տարփանաց սիրելւոյն՝ յոր վայելել այսրէն ինձ չէր»։
Սապէս կուսին խուլ ծառոց ողորմագին արկեալ բարբառ,
Արտասուաց կըրկին աղբիւրս ի գեղանի աչացն հոսէր։

ԴԱՍՍՈՅ. Երուսաղէմ ազատեալ։

# ՔՆԱՐԵՐԳԱԿԱՆՔ

---

## ԱՌԱՒՕՏՈՒ ԱՂՕԹՔ Ի ԴՐԱԽՏԻՆ

Արդ լըրջացաւ ամենայն և ի դաշտ անդըր փութացան.
Իսկ ելեալ ըստ կամար տընկասաղարթ հովանոցին,
Յանարգել դըտան տեսիլ այգուն ծագման և արևու,
Որ դեռ ելեալ՝ անուօք կառացն առ եզերօք քերէր ծովուն,
Եւ յերեսս երկրին ընդ լայն ըզճառագայթսըն ցօղախառն
Արձակեալ՝ մերկանայր յանպարագիր դաշտավայրի
Զարևելս ողջոյն դրախտին և զբազմերան մարգս Եդեմայ։
Խոնարհեալ պագին երկիր և աղօթիցն ըսկիզըն եդուն
Որ այգուն այգուն մատչէր ըստ արժանի յոճ կերպակերպ.
Զի ոչ ոճ նորանոր և ոչ եռանդըն սըրբանուէր
Պակասէրնոցա յօրհնել զՀաստիչն իւրեանց ի սերտնըւագս,
Որ ի թիւ խօսեալ բարբառ և որ երգեալ յանպատրաստից։
Պերճ և արագ ի շըրթանցըն խաղային բանիցն հոսանք
Հետեւակ կամ ի չափով տուեալ յօրինեալ գեղգեղաձայնս,
Անկարօտըս տաւղի և կամ փանդռան քաղցրերգութեան.
«Քոյ են այս հրաշակերտք, ծընող բարւոյն, Ամենակալ,
Քոյ է այս տիեզերացըս յօրինուած չըքնաղագեղ։
Զի՞ սքանչելի դու ինքնին իցես էակդ անճառելի՝
Որ ի վեր քան զերկինս նըստեալ հանգչիս աներևակ,
Կամ ընդ աղօտ ինչ նըշմարեալ մեզ ի տըրուպս արարածոցդ,
Որ և անդր իսկ քաջ ի բաց քան զամենայն մըտաց հասումն
Ըզքո փայլէն բարութիւն և զզօրութիւնդ աստուածեղէն։

Որ հրմուտ ևս էք ի բուն, որդիք լուսոյ, դուք հրեշտակք,
Խօսեցարուք. քանզի զնա տեսանէք դուք, և խումբ առեալ
Բոլորեալ կայք զաթոռովն յերգս պարաւոր հընչմանց յեր-
[կինս,
Անգիշեր և բերկրալից տուընջեան ի լոյս մեծապայծառ:
Ըզնա յերկրի արարածք փառաւորեսցեն համաբոլոր, [ձան:
Զինքն առաջին, զինք վերջին, զինքըն միջին, զինքն անվախ-
Դու յաստեղացն ամենագեղ, ցայգոյն յետինդ յուղարկաւոր,
Եթէ ոչ առ աշալուշըն պատշաճիս դու մանաւանդ,
Տըւընջեանն առհաւատչեայդ, որոյ բոլոր քո լուսալիր
Զայդ պըսակէ գեղածիծաղ. ըզնա գովեա ի քում շըրջանդ՝
Յելս անդ առաւօտուն, յայն նախընծայ ժամ գեղեցիկ:
Արեգակն, աչք և հոգի մեծամարմին տիեզերացս, [հրացոլ
Եւ դու զնա մեծ ծանիր քան զքեզ, և զգովութիւնըն բար-
Յարշաւանդ յաւէժընթաց, ի վերանալդ յերկինս ի վեր,
Ի բարձունսըդ ժամանել ի միջօրէ, և կարձատել:
Դու լուսին, որ հանդիպիս հապ յարեգակն ընդ արեւելս,
Հապ փախչիս անշարժ արփեօքն ի սրավար ձախըրն ըընդե-
[լովք.
Օ՜ն և դուք միւս հրեղէքին մոլորահետ բոցք թափառիկ,
Որ յօրինէք խորհըրդաւոր պար ի մէն անխուլ քեղսյարմար,
Նըրգեցէք զնորին գովեստ որ զլոյս կոչեաց ի խաւարէն:
Օդք և տարերք, անդրանիկք ծոցոյ բնութեան չորեքդիմիք,
Ընթացեալք քառահոլով ի շըրջանակ յաւերժական,
Ո՛վ դուք բազմակերպիք, որ զընաւս յօդեալ և մնուցանէք,
Յեղմունքդ անդրաւ՝ փոփոխեսցեն մեծի Հաստչիս նոր նոր
[գովեստ:
Եւ դուք մէգ և շամանդաղ, որ յայս կէտ թուխ և խըրթնե-
[րանդք
Ի բըլրոց ուլի ծըխաշունչ ըռձեն ելեալ վերապանայք,
Մինչև արև՝ ոսկեգոյն ներկանէ զծոպըրդ ասրակերպ,
Հապ՝ ծն արիք ի պատիւ տիեզերաց մեծ Արարչին:
Եւ եթէ զի թէ յարկջիք ամպովք զերկին պլագունեալ,
Կամ եթէ թէ արբուսջիք զերկիր պապքեալ ի տեղ տարափ,
Յելանելդ եւ յիջանելդ՝ հանջիք յաւէժ զնորա գովեստ:
Զգովեստ նորա, դուք ի քամից ծագաց երկրի շընչեալ հող-
[մունք,



Հընչեցէք մեղմ կամ ուժգին, խոնարհեցէք ըզգլուխսըդ,
[շոճք,
Տունկք աղբի աղբի, և դուք ծփծփեցալուք յերկրպագել:
Դուք ևս, աղբերք յընթացըս ձեր կարկաչասահք, քաղցր ի
[մըրմունջ
Օ՜ն առեալ ի ձեր խոխոջսըդ պատմեցէք զնորա գովեստ:
Խառնեցէք ըզձայնսդ ի մի, առհասարակ շունչք կենդանիք,
Թըռչունք որ երգ ի բերան յերկնից ի դըրունսըն վերանայք,
Ի ձեր թևս և յօրհնութիւնս բարձր արարէք զնորա գովեստ:
Որ ի ջուրսըն զեռունք, և որ յերկիր շըրջիք ի ձեմ,
Որ կոխէք զայն սիգապանծ և որ սողէքըդ նուաստաբար,
Վըկայ լերուք զի չըլըռեմ, ոչ վաղորդայն, ոչ ընդ երեկս:
Բըլրոյն զպարբառս իմ կամ հովտին, և աղբերաց կամ հո-
[վանւոյն
Տամ ի փոխ, և եղանակքս ուսուցանեն զնորա գովեստ:
Խընդա, Տէր տիեզերաց, լեր միշտ բարեաց առատաշնորհ.
Եւ թէ գիշեր գումարեաց և կամ թաքոյց ինչ չար, ցըրուեա,
Զոր օրինակ ըզխաւարն աւասիկ արդ հալածէ լոյս»:

ՄԻԼՏՈՆ. Կորուսեալ Դրախտն:

---

## ԾՆՈՒՆԴ ՏԵԱՌՆ

Որպէս խարակ ի ծագաց
Բարձու լերին առապար
Անկեալ թափով գըլըրդման,
Թաւալագլոր սըրավար,
՚Ի ոլորապտոյտ ափափայս
Ճախր ի հովիտըն յորսայս
Առեալ՝ մըխի և մընայ.
Անդ ուր անկաւն անյարիր
Կայ ծանրաբեռն յիւր կուտակ.
Եւ ոչ գարուց ի շըրջել
Ի վաղեմին անդր ի ծագ՝
Տեսանէ զակն արեւու,

Թէ զօրութիւն ձեռընտու
Ոչ վերանուլ զինք ջանայ.
 Սապէս անկեալ որդին հէք
Կայր յանցանացն առաջին,
Ցորէ՛ յորմէ խոստացեալ
Ցասումն անձառ, դառնագին
Արկ զինքն յաղէտըս ցաւոց,
Ուստ զիւրըն խրոխտ պարանոց
Զմարթէր այլ ևըս կանգնել:
 Ո՛վ յաւէլի ծընելոց,
Ո՛վ ոք ուրեք էր կարող՝
Ասել առ Սուրբըն սըրբոց
Ցանմատչելին՝ Նե՛րեա՛, Թո՛ղ.
Կըռել նոր դաշն յաւիտեան,
Եւ զդըժոխոց յաղթական
Առնուլ զաւարն և կորզել:
 Ահա Մանուկ մեզ ծընաւ
Ահա տըւաւ մեզ Որդի.
Դողան ոսոխ զօրութիւնք
Շարժման յունիցն առ ահի.
Նա զձեռն առ մարդ կարկառէ,
Որ ողջացեալ և յառնէ
Բան ըղձախկին փառաւոր:
 Ցեթերական կայենից
Բըղխէ աղբիւր վայրիջեալ.
Ընդ ապալերըս փըշոց
Կենդանացայտ ծաւալեալ.
Կողերք ըղմեղըր ծորեն՝
Եւ տատասկաց փոխարէն
Փըթթի ծաղիկ անդանոր:
 Ո՛վ դու Որդի, էակից
Մըշտընջենին, միշտ իւրև,
Ո՞ր դար կարէ քեզ ասել՝
Ըսկիզբն եղև քո ինև:
Որ եաղ յերկնից լայնասփիւռ
Անպարագիծ դու ի ծիր,



Զոր բանք քոյին ըստեղծին.
 Եւ դու զգենուլ յանձն առեր
Հողագանդուած զայս մարմին.
Զինչ արժանիք, ո՞ր շընորհ
Ցայսքան պատիւ զնա հանին.
Թէ ի խորհուրդս իւր Թաքուն
Ցաղթող գտանի Թողութիւն,
Անհուն է յոյժ գութ նորին:
 Ծընաւ նա՝ յսօր. յԵփրաթա
Ի նըկատեալ անդ տեղին
Կոյս ոք վեհազն էլ գընաց
Իսրայելի փառք տոհմին,
Ցըղի որդւով այնքանեաւ.
'Ստ իւրոց խոստմանց նա ծընաւ.
Ցորմէ սպասեալն էր՝ եկաց:
 ԶԱստուածորդին՝ մայրն անձառ
Պատեաց ի կտաւըս գըձուձ,
Եւ ի մըսուրն աղքատին
Մեղմագորով եդ, հանգոյց.
Եւ, երանի՜, գետնամած
Երկիր եպագ առ Աստուած,
Զոր սուրբ արգանդ իւր եբաց:
 Հրեշտակ յերկնից առ մարդիկ
Աւետաւոր բատխս այս,
Ոչ հըզօրաց սաւառնի
Պաշտպանական անդր ի կայս,
Այլ յերկիւղած մէջ հովուաց,
Խիստ աշխարհի անգիտաց,
Լուսապայծառ երևի:
 Զորով ընդ ցայգըն ծաւալ
Երամովին շուրջ գալով
Բիւր գունդք զուարթնոց փարեցան
Հրացայտ Թևօքն յածելով.
Եւ վառ. յեռանդն հեշտային՝
Փառս առ Աստուած երգեցին,
Որպէսն յերկինս անդ երգի:

Կըրկնեցին զերգն հըրճուական,
Դարձ արարեալ ի բարձունս.
Ընդ անցեալ ամպըն փեռեկ
Համբառնալով և յանհունս
Ձայնն հեռացաւ սըրբանուէր,
Մինչ զի ոչ ևս այլ լըսէր
Դասակ հովուացն երջանիկ:
Փութանակի ի խընդիր
Օթևանին այն հէքի
Եղին նոքա և տեսին՝
'Ստ ասացելոյն օրինի.
Խանձարրապատ անդ տեսին
Տղաւարեալ ի մըսրին
Ծընեալ զերկնից արքայիկ:
Նընջեա, Որդեակ, և մի լար,
Նընջեա, Զաւակդ երկնաւոր.
Ոչ իշխեսցեն ըզգըլխովդ
Շաչել մըրրիկք ահաւոր.
Կազմք յամպարիշտ ի յերկրի,
Հանդոյն ձիոց ի մարտի,
Վազել քոյին յանդիման:
Նընջեա, ով Դու երկնային.
Ազգք և ազինք ոչ գիտեն
Ով ոք ծընաւ. այլ ընդ փոյթ
Վեհ ըստացուած քո լիցին.
Եւ զԹագաւոր իմասցին
Անդ ի խոնարհ հանդըստեան
Եւ ընդ հոգով ծածկութեան:

Ա. ՄԱՆՑՈՆԻ



## ԱՌ ԼՈՅՍՆ

Լոյս սուրբ, ողջոյն ընդ քեզ, անդրանիկ դու երկնից ծը-
Եւ կամ՝ մըշտընջենին յաւէտակից դու ճառագայթ. [նունդ
Իցէ՞ ինձ անբասիր ի դոյն ըզքեզ կարդալ անուն:
Քանզի լոյս է ինքն Աստուած, և ոչ բնակեալ յաւիտենից՝
Բայց ի լոյս անմատոյց. ի քեզ ապա բնակեաց եւեթ,
Ի քեզ, ծագումն զուարթ անեղական զուարթ էութեան:
Կամ թէ լաւ ևըս սիրես ջինջ արփենի կոչել վըտակ,
Ո՞ զաղբերակնըդ պատմեսցէ. քան զարեգակն և քան զեր-
Էիր դու կանուխ, եւ յէական ձայնին բարբառ՝ [կինս՝
Ծածկեցեր որպէս օթոց ըզտիեզերս, որ ելանէր
Ի խաւարուտ յանդընդախոր ի ջուրց ի դուրս երևեալ,
Ցանպարոյր և յանկազմ ունայնութեան ծոցոյ ստացուած:
Խրոխտագոյն թևօք ի տես քո վերըստին այժմ այսրէն
Հուսկ ուրեմն աւասիկ ի դըժոխոց զերծեալ լըճէն, [դամ՝
Թէպէտ և ընդ երկար ի մըթագին վայրն ըմբռնեալ:
Մինչ ի թռիչս իմ վարէի 'նդ միջին խաւարն ու 'նդ արտա-
ԸզՎիհն երգեցի և ըզԳիշերն յաւերժական [քին,
Այլաձայն նուագօք մատանց յօրփէական ի փանդռանէն:
Երկնային ուսոյց Մուսա զիս յանդըդնել յէջսըն մըռայլ
Եւ դալ այսրէն ելանել. գործ նորացոյց և տագնապող:
Ծողոպրեալ դամ մի անդուստ՝ դառնամ առ քեզ ի քոյդ
[տեսիլ,
Եւ քո ջահ կենդանարար եւ տիրական յիս արծարծի:
Իսկ դու բնաւ չըդառնաս առնել աչացս այցելիկ այց,
Որ ի զուր թաւալին հանդիպել քոյ սուր նըշուլիցդ,
Եւ չըգտանեն աշալուշ. այնպէս ի խոր չիջոյց խաւար
Շըլութեան զակնակապիճս և կամ պըղտորեաց ճայրատ մըթեր:
Այլ ես ոչ դադարեմ ըզմուսաճեմ փարել վայրօք,
Ցաղբերս ականակիտս, ի հովանուտ մայրեաց անտառս,
Եւ ի բլուրս արեգակէտս, ի սէր զմայլեալ սուրբ նըւագաց:
Բայց դու, Սիոն, մանաւանդ, դու և վըտակքըդ ծաղկա-
[զարդ,
Որ թանան զոտըս քո սուրբ և ընթանան կարկաչահոս,

Ոչ տապախտ առնեմ ըզձեզ՝ գիշերայած շըրջել ըզձեօք:
Ոչ և զնըմանս ինձ յաղէտքըս յայտսիկ մոռանամ ինչ, —
Ո՛ տայր ինձ և ի փառըս պարծանացն հաւասարել, —
Զերկոսին մահկանացուս, զՄէօնեան կոյրն և զկոյր Թամիր,
ԶՏիրեսիաս և զՓինեւս, ըզհինաւուրցըն մարգարէս: [ւորս,
Իմաստս յայնժամ որոճեմ՝ որ չափս ինքնին տան նուագա-
Որպէս հաւըն զըւարթուն եղանակէ զերգսն ի մըթան,
Սաքրեալ ի թաւ հովանոց գիշերային գեղգեղէ ձայնս:
Այսպէս տարեաւ դառնան ժամք, սակայն առ իս տիւ
[չառնէ դարձ.
Ոչ ևս ըզքաղցըր եկս այգուն տեսանեմ ոչ զերեկորին,
Ոչ ըզծաղիկ գարնայնի, և ոչ ըզվարդ ամարայնոյ,
Ոչ ըզհօտս և զանդեայս, զաստուածագիծ ոչ մարդոյն դէմս.
Ամպք և աղջամուղջ մըշտագիշեր զիս պաշարեն:
Որոշեալ ի մարդկան զըւարճալից ճանապարհաց, [կանի,
Մատեան չըքնաղ հըմտութեանց համակ սպիտակ ինձ ներ-
Ուր բնութեան ջընջեալ են գործք և կամ քերեալ վասն
[իմ իսպառ,
Եւ բնաւ ըստ մին ի մըտիցն իմաստութիւն յինէն փակեալ:
Վասն որոյ, լոյս երկնային, ծագեա ի ներքս յիս մանաւանդ.
Յամենայն ի զօրութիւնս ոգւոյս մըտցեն քոյ ճառագայթք.
Ակն ի՛ հոգւոջըս հաստեա, բարձ փարատեա զմէգս ինմանէ,
Զի զմեռոտ աչաց տեսից զաներևոյթս և խօսեցայց:

ՄԻԼՏՈՆ. Կորուսեալ Դրախտին:

---

### ԽՈՐՀՈՒՐԴՔ ՑԱՌԱՆՁՆՈՒԹԵԱՆ

Միայն կամ ես, այլ հոգիս
Մերկացեալ յիւրն ի կաւէ,
Ի մի խորհուրդ փայլակէ
Որպէս ինչ էրն վէհ և սուրբ,
Եւ զմենութիւնն աշխարհս՝
Արարածովք ինձ լընու:
Երկնաշընորհ ինչ պատկեր
Բերէ աչացս առաջի,



Որ զիս զմայլեալ ի հոգի՝
Տանի յերկինս ընդ նըմա.
Դա ինքն Ոգին է սիրոյ,
Դա արեգակն հաւատոյ:
Երբ նայն հեծէ՝ ես ըզբոյր
Ըզգամ ծաղկանց համօրէն,
Մինչ խօսի՝ գանգ մի անդէն
Լըսեմ յեթերս ես ըզսէր.
Թէ ժըպտեսցի՝ է և շող՝
Որ արփենեացն է յաղթող:
Վէհ զիս ըզգամ ընդ նորա
Կարեաց կենացս ընդհանուր.
Ոտք իմ կոխեն առաթուր
Ըզխոշտանգանս և զյանցուած,
Իմոյ սըրտիս թըռչանաց
Զիք ոչ մի թև զուգընթաց:
Եւ ոչ երկիւղ ինչ ազդէ
Մարտ ապառնոյն յիմս հոգւոջ.
Մեռայց արդեօք, բայց ես ոչ
Կարեմ ի սոր իջանել.
Շընչոյս ցյետին տուրեաւ՝
Կեցցէ խորհուրդս իմ իսպառ:
Անկցի մարմին, այլ հոգի
Ի այն խորհուրդ լըծորդեալ
Համարեսցի յաւէժ կեալ
Ըզնոյնդունակ ցանդ ըզկեանս,
Զի չկարիցէ վեհագոյն
Գտանել ուրեք խընդութիւն:

ԳԱԲՐԱՆԻՔԱ.

## ԳԵՐԴԱՍՏԱՆ

Մինչ երեւի մանկիկ՝ շուրջ պար ընտանեաց
Խնդան ի ծաղր· յողոր և վառ այն հայեաց
Արծարծին աչք ամենից։
Եւ տխրադոյն բազմակընճիռն անդ ճակատ
Պարզի յանկարծ մանկանն ի տես սըրտակաթ
Կայտառեալ անմեղ հըրճուալից·
Թէ զսեամս ի մորչ պատէ յունիս, կամ ձըմեռն
Ըզխարուկիւ ի խուղն-ի ներքս՝ առ ի յեռ
Կըցէ զաթուս երերուն,
Երբ գայ մանկիկ՝ խինդն հասանէ բերկրավառ·
Ցընծան, խայտան, ըղձա ձայնեն, և անդ մայր
Դողայ ի քայլըն նորուն։
Մերթ արկանեմք մեք խօսս, ըղբոց շարժելով,
Ըզհայրենեացն, ըղպըւեռից, զԱստուծով,
Ջհոգւոյն՝ յաղօթս վերամբարձ·
Եմուտ մանուկ՝ բարեաւ մընայք զերկնից բանք,
Հայրենիք սուրբ, քերթողք· և լուրջ հեթեթանք,
Ի ժպիտ փոխին յեղադարձ։
Ի գիշերի՝ մինչ փառս ոգիք երազեն,
Կեղերջաձայն յորժամ ի սուգ հեծեծեն
Ալիք հեծեալ յեղեգնուտ,
Թէ այգն յանկարծ յեղերց ծագէ զերդ լապտեր,
Ի լոյսն՝ ընդ անդ զարթնու շըշուկ խընդաբեր·
Հաւուց մըրմունջ, պղինձք ի թունդ։
Մանկիկ, դու այգն ես, և ոգիս է այն գիւր
Որ զքաղցրաբոյր ծաղկանց շընչէ զօդս ի սփիւռ,
Որ առ ի քէն գայ բուրեալ։
Անձն իմ պուրակ նըսեմ ոստովք թանձրակուռ
Ի քէն եւեթ լընու յաւաչ քաղցրալուր
Եւ ի նըշոյլս ոսկեփայլ·
Զ'ի քաղցրութիւն քո գեղեցիկ աչք զեղուն,
Զի քո փափկիկ ձեռինք օրհնեալ և սիրուն
Դեռ ևս անփորձ ընդ չարիք,



Երբեք մատաղ հետքդ ի մեր կաւ կոխեցին·
Գըլուխ սըրբիկ, խարտեշագեղ հերք փայլին,
Ոսկեպըսակ հրեշտակիկ·
Դու տապանին ի մեզ անբիծ աղաւնեակ·
Ոչ ոտք գողտրիկ դեռ շըրջելոյ ի հասակ,
Թեւդ ի կապոյտ է փետուր·
Հայիս յաշխարհ, անգէտ ելով դեռ նըմին,
Կոյս երկակի· մարմին անբիծ գըլխովին,
Հոգի՝ անախտ և մաքուր։
Ո՛վ, զի՛ սիրուն քաղցր ի ժըպիտն է մանկիկ·
Մխոք դիւրալուր, ամենազգած իւր ձայնիկ
Եւ դիւրամոք արտասուք·
Թափառէ զաչս ի զարմացումն հիացիկ,
Կեանս յամենուստ շընչէ ոգին իւր փափկիկ,
Եւ ի համբոյր գան շըրթունք։
Տէ՛ր, մի՛ տացես ինձ և որ ինձ սիրելիք
Եղբայր, ծանօթք, բարեկամ և թշնամիք
Անգամ ի չարն աչարկու,
Մի՛ տեսանել, Տէր, անծաղիկ ըզգարուն,
Զվանդակ՝ առանց թըռչնոց, զըղճիճն անմեղու,
Եւ ի մանկանց զիրկ՝ ըզտուն։

Վ· ՀԻՒԿՈՅ

---

## ՄԱՆՈՒԿ ՑՈՐՐԱՆԻ

Ի նըսեմ խըշտիկ
Առ խոնարհ բագնաւ
Ի նինջ կայ մանկիկ
Մօրն ընդ ըստուերաւ·
Եւ յանուշն ի քուն
Բիբք իւր վարդափայլ
Երկրայնոց փակեալ
Երկնի տան ողջոյն։
Հեշտայինն յերազ
Դիտէ մերթ մարմանդ,

Ընդ ափամբ զուլալ
Լցեալ յադամանդ.
Բոցաճեմ զարփիս,
Ուօրինորդս ընդոյր
Ի ծղին ձիւնաթոյր
Գիրգ բարձեալ ոգիս։
Ո՛վ զմայլմանց անուրջ.
Երազէ զաղբիւր,
Եւ ձայն քաղցրաշունչ
Ի խորս անդ ի ջուր.
Քողք իւր գեղագոյն
Թռչին մերձ առ հայր,
Եւ թեւս առեալ մայր
Իւր հաւուց հանգոյն։
Բիւրք անդ հեշտական
Պարզին յանդիման,
Ի վարդ և շուշան
Տուն լցեալ համայն.
Լիճք զուարճալի
Ուր ձկունք սողին,
Այլք խորշմին
Յեղեգանց ոսկի։
Յերազեա մանկիկ
Նընջեա սըրտիս սէր.
Դու անգէտ ողջիկ
Ուր արփիդ հոսէր.
Ջերդ անշունչ մամուռ
Գրնաս դու անփոյթ
Հոսանաց ի պտոյտ.
Այլ նընջեա համբոյր։
Աղու զուարթուն.
Յուղուոջրդ քունես,
Ուանհանգրստութիւն
Ջեռամբ ցըրտակեզ
Ի ճակատդ ազնիւ,
Ուր ոչ մի կընճիռ,



Եղընգամբ ժըպիրհ
Ոչ գըրեաց. Վաղիւ։
Նընջէ անմեղիկ.
Հրեշտակք լուսագեղ
Որ գիտեն կանխիկ
Ըզմարդկան նըսեհ,
Ձնա տեսեալ անդէն
Անտըրտում անհոգ,
Ի ձեռան արտասուօք
Համբուրիկս ածեն։
Շըրթունքն անդ հըպին
Ընդ մեղուն ընտել.
Սա առ ցօղ նոցին
Մընչէ. Գաբրիէլ.
Հրեշտակն առ նըմին
Շարժէ հուպ զորրան.
Մի մատն ի բերան,
Միւսովն ի յերկին։
Այլ անդուստ մայրիկ
Յօժար յորորել,
Համարի՛ պարիկ
Զար եկեալ ընկճել.
Կայ ընդ նա յակճիռ,
Եւ լըսէ մընչել.
Եւ ի մի համբոյր
Տայ նըմին ժըպտել։

Վ. ՀԻՒԿՈՅ

---

## ԱՂՕԹՔ ՄԱՆԿԱՆ ԶԱՐԹՈՒՑԵԼՈՅ

Ո՛վ Հայր, զքեզ իմըս պաշտէ հայր,
Քեզ ծունր ածէ մանկացուն.
Քաղցր և ահեղ անուանդ՝ իմ մայր
Երկըրպագէ եռանդուն։

Ասեն թէ այս արեգ պայծառ
  Խաղ լինի է քո առաջի,
Եւ ընդ ոտիւք քոյին անճառ
  Իբր ըղկանթեղ տատանի:
Ասեն թէ դու և ծընծըղկաց
  Տաս ի դաշտի ծընանել,
Եւ աղածրի մանրիկ մանկանց
  Հոգի՝ ըզքեզ ճանաչել:
Ասեն թէ դու ես որ պըճնես
  Ըզբուրաստան ծաղկաւէտ,
Եւ ոչ առանց քո տայ պարտէզ
  Անուշ պըտուղս ի մեր պէտ:
Ի քո պարգևըս տիեզերք
  Առ հասարակ վայելեն,
Եւ ոչ զեռուն զըրկի երբէք
  Յայսմ ի բնութեան խրախճանէն:
Գառն իւր արօտ առնու զծոթրին,
  Ուլն ի յըրգին ձըգտի գիւտ,
Ճանճ ի շըրթունըս ըզնակին
  Զիմոյ կաթին ծըծէ նիւթ:
Զամբ արտուտին ետուր ըզկուտ
  Զոր սերմանող տայ հողմոց.
Ծընծըղուկ ի կալ դիմէ անձկոտ,
  Տըղայն ի մօրն իւր ի ծոց:
Եւ ես առնումք օր ըստ օրէ
  Զանհատական քո պարգևս.
Այգուն ցերեկս ի միջօրէ
  Աղերսելով ցանգ զքեզ:
Աստուած, և ես թոթով ի բանս
  Կարդամ զանունդ աշաւոր.
Բարէ, և ձայն տըխեղծ մանկան
  Ի նուագ խառնի երկնաւոր:
Ասեն թէ դու, Տէր, ախորժես
  Զաղերս անզօր մանկըտւոյն,
Զի պարզամիտք են քաղցր և հեզ,
  Թէպէտ ի միտ ոչ առնուն:



Ասեն թէ մեր պաշտօն խոնարհ
  Քեզ հեշտալուր ընծայի,
Եւ թէ զուարթնոց յերկինս է պար,
  Եւ մեք հրեշտակք եմք յերկրի:
Օ՜ն թէ լըսես յանչափ բարձանց
  Զուխտ մեր սըրտից եռանդուն,
Ես հայցեցից ջերմ ի թախանձ
  Զտիեզերաց պէտս համբուն:
Տուր, Տէր, աղբերց յըստակ ըզջուր,
  Եւ ըզփետուր ծընծըղկին,
Գառանց զըզալթ սուրբ և մաքուր,
  Դաշտաց ըստուեր ցօղագին:
Տուր հիւանդին բըժըշկութիւն
  Եւ մուրացկին հաց յագուրդ.
Տուր բնակարան ողորմ որբոյն,
  Եւ գերելոց արձակուրդ:
Բազմածընունդ արա ըզտուն
  Հօր առ ի քէն երկիւղած.
Տուր ինձ լինել զգօն ուխմաստուն,
  Եւ մայրս իցէ անկասկած:
Ուշիմ եղէց, թէ և տըհաս,
  Այն տաճարի մանկան պէս,
Այգուն այգուն զոր ի սըխարս
  Մահճիս գիտեմ բերկրատես:
Զարդարութիւն տընկեա յոգիս,
  Ճըշմարտութիւն ի շըրթունս.
Պըտղաբերցէ բանդ ի սըրտիս
  Զերկիւղ ըզբարըս քաղցունս:
Եւ քաղցրասցի քեզ իմ բարբառ
  Իբրև ըզծուխն այն գիւղան,
Յանուշահոտ զոր ի բուրվառ
  Ճօճեն տըղայք ինձ նըման:

ԼԱՄԱՐԴԻՆ

## ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԷ

Յայնժամ երկնից դրունք ոսկեղէնք բացան, և լոյսն ան-
Երևեցաւ ի խորոց սրբարանին դըղըրդելոյ. [մատոյց
Երկինք համօրէն կացին առ վայր մի հոլանի,
Եւ արդարոց հոգիք լուսեղէնք տեսին մանկիկ փայլեալ հոգի
Զի գայր հասանէր ընդ մանրերամ խառնէր զուարթունս
Յաստեղաշարդ անդ ի կամարս:
Ինքըն մանկիկըն գեղանի յերկրէ աստի գնայր փախըստեայ,
Ի կապուտակ աչկունս ըզխիստ վըշտակրութեան բերելով
[նիշ,
Եւ զգունատեալ դիմօք խարտեաշքըն խոպոպիք գեղածը-
Կուսանք երկնաձեմք ընդ յաղթանակ վըկայական [փեալ.
Ածեալ բոլորէին ի գլուխ նորա զըւարթ երգովք
Յեռեալ պըսակ անմեղութեան:
Բարբառք ընդ ամպըս լըսելի եղեն յայնժամ որ ասէին.
«Զուարթուն պատանեկիկ, ժըպտի 'նդ անբիծ փառըս քո
Ե՛կ արդ ի գիրկըս Նորին, ուստի ոչ երբ մեկնեցիր. [Տէր.
Եւ դուք որ զՏէրըն միշտ տերանց օրհնէք, բանա՛կ սրովբէա-
[գունդ,
Հրեշտակապետք և մարգարէք, դի՛ք արքային շուրջ երեսաց,
Առէք ի վկայն երգ յաղթական»:
Իսկ մանկիկն ասէր յանձին. «Ո՞ւր իմ երբէք թագաւորեալ.
Կապեալ եմ ես, չեմ ես արքայ. ի խորս անլոյս աշտարակին
Կայի յերէկն անդ ի քուն. ո՞ւր ապա իմ թագաւորեալ,
Ուստ ինձ, Տէր: Եղո՛ւկ զիս, հայր իմ ի դահճաց լեալ չարա-
[մահ.
Նոքա լեղի ինձ արբուցին. որբ ի խընդիր մօրն իմոյ գամ,
Զոր ինձ յերկինս անուրջք ցուցին»:
«Զայնէ Փըրկիչըն քո ըզքեզ, կըրկնեն անդրէն նըմա զուար-
[թունք.
Յեղեռնաւոր երկրէ զհոգի քո հրաւիրէ առ ինքն Աստուած.
Խոյս յամպարիշտ տուր աշխարհէ, ուր Խաչն տուին առնի
[կոխան,
Ուրանօր անդըր քան ըզմահ վաղեալ եղեռն արքայասպան,



Ի գերեզմանս իսկ ինչ արկեալ ըզթագաւորս յուզէ սպա-
Գըրկախառնեալ ընդ արհաւիրս»: [նող,
Կըրկնէ մանկիկն. «Ի սակաւո՛ւն ապա լըցի երկայնաւուրս,
Անցի՛ն ուրեմըն զինև վիշտք որ կային ինձ առաջի.
Իցէ՞ թէ ոչ ի յայգուն խըլթէր զիս աջ բանտապանին,
Ի յերկնաւորս անըրջոց զարթնուլ անդրէն ինձ ի շըղթայս.
Իցէ՞ թէ լուաւ ինձ Տէր, և ոչ երազք իցեն, ո՛հ, այսոքիկ.
Իցէ՞ թէ հատ Տէր ըզշըղթայս իմ, և վիճակ եւ ինձ բարի
Զրաւել ի հէք կենաց աստի:
Զըգիտիցէք դուք արդեօք ե՞րբ աւաղելի կէի կենցաղ.
Որ իւրաքանչիւր ածէր աղէտս ինձ նորանոր,
Եւ չէր ի լալ իմում ինձ մայր՝ որ երգս առ ողբս իմ յեղյե-
Կամ ի ժըպտի մայրենի հնարէր զարտօսր իմ ըսփոփել. [ղէր,
Ի պատուհաս անխախճան մատնեալ ի զոհ, ծիւրեալ ծըն-
[դեալ,
Խըլեալ ի ընէ իմմէ ի բաց արկայ ընձիւղ դեռաբողբոջ.
Զօ՞ր ի յորրանս գործեալ ոճիր: [սեալ,
Սակայն լուարուք. մինչ արհաւիրքս այս ի վերայ իմ չև հա-
Յուշ ի հեռուստ գեղանըսիհքն ինձ անկանին աւուրք փա-
Որոց շըշունջ աղօտաձայն յիս ի նիրհել իմում ազդէր, [ռաց
Մինչ ժողովուրդք ցընծալից հըսկէին շուրջ զինև ի պահ:
Այլ ի նըսեմ ի խորհուրդըս ծածկեցան յանկարծ բընաւք.
Տեսի զբախտին խոստմունս ի բաց սրացեալ յիմոցս ակըն-
[կալեաց,
Եւ անտէրունչ ի յերկրի լըքեալ մանուկ զիս ապիկար.
Ո՛հ, զի եղեն ինձ թըշնամիք:
Կենդանւոյն նոքա ի վիհ զիս ընկեցին յեղերական.
Աչք իմ նուաղեալ ի լալեաց՝ ոչ ևս ըզլոյս տեսին զարփւոյն.
Այլ դուք, զոր այժմըս ճանաչեմ, եղբայրակիցք իմ դուք
[զուարթունք.
Դուք ինձ ի քուն այց առնէիք: Յարինախանձ ձեռըս նոցա
Թարշամեցան աւուրք իմ, Տէր, այլ ամպարիշտք միշտ են թը-
[շուառ.
Մի՛ առ մաղթանս իմ, ո՛հ, փակեր հանդոյն նոցին ըզլըսելիս,
Վասըն նոցին առ քեզ մաղթեմ»:
Յայնժամ հրեշտակք երգէին. «Ե՛կ դու ըզհետ մեր արի եկ,

Ահա բանայ քեզ տապանակն, և ի ճակատ քո գեղանի
Ցեռումբ ըզմի յաստեղաց, ուր թիկնամէջըս քոյին թևս
Ընկալ ի թևս քրովբէականըս կապուտակըս ծիրանիս,
Եւ զմանկանն ի լալիս էկ ի շարժել ընդ մեզ զօրրան,
Կամ զարփից ի լուսեղէն նորել ի շունչ ըզմանկութիւն
Ի հրաճաճանչ կամարն իւրեանց »: [արդարք.
Եւ լռեցին յայնժամ զուարթունք, երգոյն ի լուր կային
Մանկիկն արկեալ զաչս ի խոնարհ ըղձըսաղեալս ի յարտա-
[սուաց,
Հոյլք աշխարհաց ի խորանարդ երկնից ըզկայ առին լուռ-
Եւ ձայն Բարձրեալն ետ՝ այսպանակ. [մուռ,
« Ի մարդկեղէն մեծութեանց ի բացեայ ղքեզ կալայ զար-
[քայդ.
Ի դահոյից ի չըղթայս անկեալ՝ ըզքոյդ օրհնեա զարկած:
Ըզգերագոյն գերութեան չառեր դու զփորձ թագաւորաց.
Թէպէտ բազուկք քո զկապուտակ առեալ ըզնիշըս չըղթա-
Այլ ոչ ճակատ քո ըզթագին: [յից,
Դու ընդ բեռամբ կենաց, որդեակ իմ, ընկճեցար վաղամեռիկ,
Մինչ զօրրանաւ քով կայր երկիր յուղեալ ի յոյս և ի նա-
[խանձ:
Ե՛կ արդ. և Տէր իսկ քոյին, թէպէտ անվիշտ եղով բնութիւն,
Եղև հանդոյն քեզ վշտամբեր, և արքունի ցուպ ի յաջում՝
Քո պէս փըշովք պըսակեցաւ »:

Վ. ՀԻՒԿՈՅ



## ՊՈԼԻԿՏՈՍ Ի ԲԱՆՏԻ

Աղբերք բերկրութեանց և աղունց մըթեր
Պատրող հեշտութիւնք, զի՞ կայ իմ և ձեր.
Մարմնոյ ուաշխարհի սէր ամօթապարտ,
Է՞ր լըքեալք յինէն՝ ոչ թողուք զիս ցարդ:
Ո՛ն անդր ի բացէ, գըրգանք և պատիւ,
Որք ընդդիմամարտ բերէք ինձ կռիւ.
Վայելք ձեր համայն
Խուսեն անկայուն
Ի քըթթելական.
Ձերդ նուրբ ապակի
Զի շողայ փայլուն,
Այլ վաղ խորտակի:
Ձեզ ոչ տենչացայց, ջանայք ի նանիր
Ի հրապոյրս այլու ածել ինձ պատիր.
Ձուր ինձ ցուցանէք զաստուածամարտից
Ընդ ոլորտս երկրի զկենցաղ բերկրալից:
Անդուստ և երկինք ցուցանեն փոխան
Զարդար վըրիժուց նոցուն դատաստան,
Որով դահավէժ
Գոռոզք տան ըզվրէժ.
Ակաւխեալ երկաթն
Իջանէ յանկարծ
Ցերջանկին գագաթն
Երբ կայն անկասկած:
Խուժադուժ Դեկոս, վագր արիւնարբու,
Քեզ Բարձրեալն յերկար թէ զիւրսըն թողու,
Ձերջանիկ բաղդիդ զահաւոր վախճան
Վայրիկ մի ևս այլ՝ տեսցես քեզ ժաման.
Վրիժառուն Ըսկիւթ դայ թափել ի քէն
Զարեան վըկայիցն և Հայոց ըզքէն.
Փըրկութիւն քեզ չէք,
Ճայթեցին յամպոց
Երկնասասա շանթիք,

Ընկըրկին ոչ եւս՝
Ի գեղջ և ի կոծ
Թէ և աշխարես։
Թող ցասմանդ ի սպանդ Փեղիքս զիս զենու.
Զաչսըն չըլացոյց նախանձորդն հուժկու.
Թող մահուամբս ըզնա կալցի իւր փեսայ,
Եւ ըստըրկաբար մարզիս տիրանայ.
Ոչինչ դըժկամակ եղէց ես ընդ այն,
Ա՛յլ են իմ տենչանք, ըղձանամ մահուան։
Ոչ եւս ինչ ունիս,
Աշխարհ դու առ իս.
Սի՜րտ իմ Աստուծոյս
Բորբոքի ի սէր.
Ըզհարսն իմ բարւոյս
Համարիմ արգել։
Ո՛վ վըսեմ խորհուրդք և սուրբ հեշտութիւն,
Ի՛բր ըղձիւք ձեր՝ սիրտ առնի պատարուն.
Ի սուրբ ի հրապոյրս ըզմայլեալ հոգի
Ցհիցս ի տեսիլ ոչ եւս պարանի։
Աւաղք ի խոստմունս և առատոգոյն
Պարգևաց ի տուրս յորդ էք լիութիւն.
Կեանքդ այդ յամերամ
Եւ մահ երջանիկ,
Որում ըղձանամ,
Քուն է անուշիկ,
Եւ անցք ի հաճոյս,
Ցանդիշեր ի լոյս։
Քեզ աստուածավառ հուրդ անշիջական,
Քեզ ըզՊաւլինէ տեսից անսասան։
Ահա տեսանեմ, և վառ ի սուրբ սէր,
Ոչ ըզգամ գեղոյն, որ զկայըն գերէր.
Աչք իմ պատարուն լուսովն երկնային՝
Ցաչացն ի չողիւն ոչ եւս բըլչակնին։

ԳՈՌՆԷՑԻ. Պօլիս։



ԴԱՒԻԹ ԵՐԳԷ ԶՅԱՂԹԱՆԱԿ ԵՒ ԶՀԱՆԳԻՍՏ
ՍԱՒՈՒՂԱՅ

Ո՜վ այն որ գայն, ո՛վ այն որ գայդ,
Լըսեմ և ոչ տեսանեմ։
Սեաւ ամպ փոշւոյ ի մըրրախառն
Ասպատակեալ հեւսխայ։
Բայց պատառի, և փայլակէն
Սուսերք ի նմա բիւրաւորք.
Ահա Սաւուղ ամբարտակեալ՝
Պատեալ ըզգլուխն հուր տըտամբ։
Երկիր Թընդէ յորոտաձայնս
Երիվարաց և զինուց,
Ծով և ցամաք ուերկինք գոչեն
Նահատակացն յաղթող գոռս։
Գայ հասանէ Սաւուղ իւրով
Ահագնացայտ զօրութեամբ,
Կառս, երիվարս և հետեւակս
Քուղէ զմիմեամբք խառն ի խուռն.
Գնան յերեսաց նորա քըստմունք
Ցօսկերս արանց ամենայն,
Ցաչաց իւրոց բըղխէ ցայտէ
Ահ և դողումն Աստուծոյ։
Ո՞ւր են պերճանք ձեր ամպարիշտ,
Ո՞ւր խաղք, որդիք Ամմոնայ,
Եւ ոտընհար լինելդ՝ արդար
Ժողովըրդեան Բարձրելոյն։
Ահաւասիկ անձուկ են արդ
Դաշտք գիականցըդ ձերոց,
Ահա դիզան մեղ կոճոպեալ
Կառափանցդ հունձք արիւնոտ.
Տեսէք ի սուտ աստուածըս ձեր
Վըստահութիւն յո՛ տանի։

Իսկ ուստի՞ այլ գայ մարտադող
Փողոյ մռընչիւն յիս յանկարծ։
Սուսերն ինքնին է Սաւուղի
Որ հողէ զազգն Եդովմայ։
Այսպէս Մովաբ, այսպէս և Սոփք
Ընդ անօրէնն Ամաղէկ
Ցրնդին փոշի. Սաւուղ հեղեղ
Ի գլուխ տարւոյն ամանոր՝
Հեղեղատէ՝ գերփէ, խլէ,
Եւ տապալէ զամենայն։

. . . . . . . . . .

Խոնջ, ծարաւի առ ափամբ
Իւրոյ բընիկ վտակին
Հանգչի քաջազն Աստուծոյ
Ի մըշտագուարճ հովանիս
Անձկացելոյ սարդենւոյն։
Զաւակ նորա սիրաքուն
Զինքն ի սփոփել մատուցեալ՝
Ընդ վիշտ նորա ասըրջանայ,
Այլ ընդ գալուստըն բերկրի.
Ցամենեցունց հընչէն ձայնք
Քաղցր և անոյշ արտասուաց,
Անհաս ի վեր քան ըղձան։
Մինն ի դըստերց լուծանէ
Զճաճանչաւէտ սաղաւարտն.
Իսկ սիրատարփ ամուսինն
Ըղթեւմն արկեալ՝ գիրկս ածէ.
Այլ ոմն ի չքեղ ճակատէն
Ըզփոշոտեալ քիրտըն իւր
Սըրբէ վըճիտ աղբերաւն.
Այլ ոք տարափ հոտաւէտ
Ծաղկանց սըփռէ ի վերայ,
Է որ ըղձեալն իւր արդոյս
Ոռոգանէ արտասուօք.
Եւ է որ կայ քըրթմընջէ,
Զի ոք զիւրն անց ի սպաս։



Սակայն արի արքունն եռայ
Ցայլ ինչ ի գործ համախումբ։
Մինչև գայցեն հօրըն դըդուանք,
Աստ մին յորդւոց գործէ գուն՝
Զինջ և փայլուն ի վերըստին
Սըրբել ըզսուսրն արիւնոտ.
Անդ ի նախանձ միւսըն մըտեալ՝
Ասէ. Ես երբ ճօճեցից
Զնիզակդ՝ յոր այժմ իմըս բազուկ·
Ոչ դըտանի բաւական։
Այլ ոք զաստարըն՝ մանկաբար
Խաղուք փորձէ զանդամովք։
Խընդութեան արտոսր
Ցաչըն ուռուցիկս
Արքային խաղայ.
Գիտէ զի աղնիւ
Տոհմին սիրելւոյ՝
Ինքն է հոգի, կեանք։
Ո՛վ չըքնաղ հանդիտ,
Ո՛վ քաղցր օթևան,
Ուր շուրջ կան ըզքև
Սէր այդպիսի սերտ,
Հաւատ սըրբափայլ։
Բայց ծածկի արև,
Լըռեն սիգք բոլոր,
Եւ ի քուն խաղաղ
Նիրհեցաւ արքայ։...
Հանգչի արքայ, սակայն անուրջք հըզօրին
Զարհուրագին կերպարանօք երևեալ՝
Մահու խուճապս առնեն նըմին յանդիման.
Ահաւասիկ պարտեալն սոսկ բըռնաւոր,
Ցիւրմէ բաղկէն սուսերահար ի մարտի,
Ոգի աւեդ՝ ոչ ևս ի ձեռս ինչ տտակ։
Ահա փայլակն՝ որ զքաջս ողջոյն շըլացոյց.
Սուսերն այն իւր՝ որ ոչ խնայէ և ոչ յոք,
Զարին բընաւ հաւասարէ 'նդ վատթարին։

Այսպէս ոչ զօրհանապաղ հընչէ անտառ
Յահաւոր՝ ահեղագոչ ձայն առիւծուն,
Զի և նա զըզգայութիւնս ի հանգիստ տայ.
Նա և ոչ ամպաբնակ քարանձաւաց
Լըռութիւն քաջալերէ զանդնդոյ դաստակս,
Ոչ տուարած աներկեան կայ յերկիւղէն,
Զի գիտէ՝ թէ ելանէ արիւծն ուխ խաղմ:
Բայց արքայ զարթնու, զէն, զէն մըռընչէ.
Ո՞ր ախոյեան կայ, կամ առ նա տայ ձայն:
Տեսանեմ ըղձեալս անհագին հըրոյ՝
Որում թըշնամի տեղի տացեն գունդք.
Զխարայելեան զէնս համակ հասարակ
Անթըլփատ արեամբ հայիմ թըլխացեալ:
Շանթեանդ փայլակն ահա սըլանայ.
Քար ի պարսատկէն ոչ այնչափ երագ
Ելեալ սըրասցի՝ որչափ խորտակէ
Երկաթ ի ձեռին յաղթողըն հըզօր:
Ի թուիչ անմատոյց մինչ ի յերկինս հուպ
Արծուի խրոխտապանծ՝ նա զթևսըն ձըգաէ
Ըզզարմանալիսն և զքաջահընչող
Եւ զաստուածատուրս յամպարըշտաց մահ
Որ ի սուտ մեհեանս անօրէն պատկերս
Իւրեանց կառուցին ստեղծագործ աստուածս:

ԱԼՖԻԷՐԻ. Սաւուղ:



## ՊԱՐ ԴՍՏԵՐԱՑ ՑԵՂԻՆ ՂԵՒԵԱՑ Ի ՏԱՃԱՐԻՆ

### ՊԱՐՆ ՈՂՋՈՅՆ ԵՐԳԷ

Տիեզերք առհասարակ լի են փառօք աստուածութեանն.
Օ՛ն նըմին պագցուք երկիր և կարգասցուք ըզնա յաւէժ.
Տէրութիւն նորա կանուխ է քան զծընունդ ժամանակաց.
Երգեսցուք, հարցուք հըռչակ ըզբարիսն իւր:

### ՄԻ ՁԱՅՆ ՄԻԱՅՆ

Զուր բըռնութիւն խիստ անիրաւ
Օրհնաբանիչ նըմին ազգի հրամայեսցէ լեզուակապս.
Կեցցէ անուն իւր անկորուստ:
Օր աւուր վկայասցէ զփառըս նորա և զզօրութիւն.
Տիեզերք առհասարակ լի են փառօք աստուածութեանն.
Երգեսցուք, հարցուք հըռչակ ըզբարիսն իւր:

### ՊԱՐՆ ՈՂՋՈՅՆ ԿՐԿՆԷ

Տիեզերք առհասարակ լի են փառօք աստուածութեանն.
Երգեսցուք, հարցուք հըռչակ ըզբարիսն իւր:

### ՄԻ ՁԱՅՆ ՄԻԱՅՆ

Նա ծաղկանց սըրտահաճոյ շնորհէ երփունս,
Պըտկէ զպըտուղս, հասուցանէ,
Եւ բաժանէ նոցա չափով
Ըզշողիւնըս տուընջենի և զզովութիւն գիշերայ.
Պարարեալ նոքօք անդոյ՝ հասուցանէ տոկոսեօք:

### ԱՅԼ ՁԱՅՆ

Տայ հրաման արեգական կենագործել ըզբնութիւն.
Պարգևք իւրում ձեռինն է լոյս,
Իսկ սուրբ օրէնքն, օրէնք ամբիծ,
Ծոխագոյնն է ի պարգևսն ազգի մարդկան ընձեռեալ:

### ԱՅԼ ՁԱՅՆ

Ո՛վ դու լեառնըդ Սինայի, պահեա յաւէժ ըզյիշատակ
Մեծափառ հըռչականուն աւուրն այնմիկ յաւիտենից,
Յորում ի գլուխ քո բոցեղէն [ուածոյ
Թանձրախիտ մըռայլ ամպովք պարածածկեալ Տեառն Աս-

Յաւս ընկէց մահկանացուս ըղձուն նըշոյլ փառաց իւրոց.
Այսմ մեզ, առ ի՛նչ այն բոց, փայլատակունք,
Գունդագունդ ծըխոյ ցոլմունք և բարկաձայթ յօդըս շըռ-
Եւ շեփորայք և որոտմունք։ [ռինդ,
Գո՞յր արդեօք ի տապալել ըղտարերաց հաստուած եւ կարգ.
Ի հինօրեայ հիմանց իւրոց
Մինթէ դըղըրդե՞լ գայր նա զերկիր։

ԱՅԼ ՁԱՅՆ

Անդ յայնժամ իջեալ նորա՝ յայտնել մանկանցն Եբրայեցւոց
Ըզօրըբոց պատուիրանաց իւրոց ըզլոյսն անապական,
Առ երանիկ գայր ժողովուրդն՝
Ըզսիրոյն իւրոյ հրաման տալ, ըզսիրոյ մըշտընջենի։

ՊԱՐՆ ՈՂՋՈՅՆ

Ո՛վ աստուածեղէն օրէնք գեղաշուք,
Ո՛վ արդարութիւն, ո՛վ բարութիւն վեհ. [տար
Ո՛րչափ ինչ են իրաւունք, զի՛նչ քաղցրութիւն ծայրապա-
Ընդ նըմին Տեառն Աստուծոյ զօդել սիրով և հաւատովք։

ՄԻ ՁԱՅՆ ՄԻԱՅՆ

Յանօղորմ լըծոյ՝ զհարըս մեր փըրկեաց,
Եւս և հայց անուշահամ ջամբեաց նոցա յանապատին.
Նոյն զօրէնս իւր մեզ շնորհէ, զանձն իւր իսկ տայ գըլխովին
[մեզ,
Փոխարէն այսքան բարեաց զինքըն սիրել պատուիրէ։

ՊԱՐՆ

Ո՛վ արդարութիւն, ո՛վ բարութիւն վեհ։

ՆՈՅՆ ՁԱՅՆ

Ջանդընդոց առ ոտս իւրեանց եհերձ զալիս,
Յանջըրդի վիմէ վըտակս ուղխից յարբուցմն ըղխեցոյց։
Նոյն զօրէնս իւր մեզ շնորհէ, զանձն իւր իսկ տայ գըլխո-
[վին մեզ,
Փոխարէն այսքան բարեաց զինքըն սիրել պատուիրէ։

ՊԱՐՆ

Ո՛վ աստուածեղէն օրէնք գեղաշուք, [տար՝
Ո՛րչափ ինչ են իրաւունք, զի՛նչ քաղցրութիւն ծայրապա-



Ընդ նըմին Տեառն Աստուծոյ զօդել սիրով և հաւատովք։

ԱՅԼ ՁԱՅՆ ՄԻԱՅՆ

Ո՛վ որ ոչըդ ճանաչէք բայց յերկիւղէ ծառայական,
Անշընո՛րհք, ո՞չ կարէ զձեզ քաղցրագութ Տէրն ածել զիւ-
Եւ եթէ ինչ դըժպըհի սըրտից ձերոց սիրել ըզնա. [րև.
Սէր իւր եթէ ձեզ տաժանիք։
Երկընչի ծառայատոհմ ի դըժընդակ ըռնաւորէ, [թեան,
Իսկ որդւոց՝ սէր է բաժին իւրեանց վիճակ ժառանգու-
Կարօտիք՝ զի նոյն Աստուած լիացուցէ զձեզ բարութեամբք,
Եւ ո՞չ կամիք սիրել ըզնա։

ՊԱՐՆ ՈՂՋՈՅՆ

Ո՛վ աստուածեղէն օրէնք գեղաշուք.
Ո՛վ արդարութիւն, ո՛վ բարութիւն վեհ. [տար՝
Ո՛րչափ ինչ են իրաւունք, զի՛նչ քաղցրութիւն ծայրապա-
Ընդ նըմին Տեառն Աստուծոյ զօդել սիրով եւ հաւատովք։

ՌԱՍԻՆ. Փոխողէ։

---

## ԵՐԳ ԱՂՔԱՏԻ

Ո՛հ, աղքատիկ եմ ես այր
Ամենեւին ամայի.
Այլ իմ սըրտիս մըխիթար
Անգամ մի գէթ ըղձայի։
Ի ծընողացս անդ ի տան
Էի մանուկ հեշտածին,
Այլ արդ նոքա թաղեալ կան,
Եւ ինձ գառինք են բաժին։
Ձօխին պարտէզք ծաղկին հոյլ,
Եւ զհասկ գիտեմ ոսկեթուռ.
Այլ իմ շաւիղս է ամուլ,
Որ վիշտս եւեթ տայ տըխուր։
Սիրեմ ցաւովք լըռելեայն
Բերկրելոց կալ յերախան,

Որոց սըրտիւս ամենայն՝
Մաղթեմ աւուրս բարութեան։
Սակայն, ո՛վ Տէր, ոչ Թափուր
Ի բնաւ Թողեր զիս հեշտից,
Քաղցր ըմփոփանս ընդհանուր
Ցաշխարհ սփռեալ քո յերկնից։
Ահա յամէն դաշտորէք
Ամբառնայ սուրբ քոյին տուն,
Եւ երգեհոն սաղմոսերգք՝
Համայն զականջըս լընուն։
Ո՜չ այդ արփի եւ լուսին
Եւ ինձ ծագին գըԹասէր,
Եւ ի զանգակ գիշերին
Եւ ես խօսիմ ընդ քեզ, Տէր։
Բացցին երբեմն բարեաց
Դուռք բարձր ի խինդ տաճարին,
Եւ ես ի զգեստ հարսանեաց
Առբազմեցայց սեղանին։

ՈՒՀԼԱՆԴ

---

## ԿԻՆ ՆԱՒԱՎԱՐԻՆ

« Զի՞նչ այդ դըդչիւն յանագանի ի լըճիս.
Դըստրիկ սիրուն, տես զի՞նչ է այդ »։
« Բադք են դըրացւոյն անկեալ ի լող ընդ ալիս.
Նընջեա՛ մայրիկ, նընջեա՛ հանդարտ »։
« Զի՞նչ այդ շըշուկ ի ջուրս յախուռն եւ ուժգին.
Ա՛հ, զանգիտեմ ես, ո՛վ դըստրիկ »։
« Մըշակ վարէ զհաւատարիմ իւր ըզձին.
Նընջեա՛, ո՛վ մայր, նընջեա՛ քաղցրիկ »։
« Մըրըրկածուփ հընչէ ահեղ շառաչիւն.
Լո՛ւր, դըստրիկ, լո՛ւր ըզվայս եւ կոծ »։
« Երգ ձըկնորսի է եւ Թիակացըն ճողփիւն.
Նընջեա՛, մայրիկ, զերծ ի հոգոց »։



« Ո՛հ աղէտք, ո՛հ վըտանգք, բա՜ց բա՜ց ինձ ըզդուրս
Զի բեկանի սիրտ ի ծոցիս »։
Եւ սըրտահար Թաղծեալ Թըռեաւ էլ ի դուրս
Ճիչ բարձեալ մայրըն ցաւալից։
Եւ առ խաղի շամբուտ ափանցն հանդարտիկ՝
Դի անկենդան տարածեալ կայր
Ի սեաւ խիճին՝ գունաԹաւալեալ եւ ցըրտիկ։
« Ո՛հ, Տէր գըԹած, դա իմ է այր...
Այժմ, իմ դըստրիկ, նընջել կամիմ այժմիկ արդ,
Նընջել այո՛ զգիշերն ի բուն.
Կամիմ նընջել քաղցր եւ յերկար եւ հանդարտ,
Զանարթնականըն նընջել քուն »։

Ռ. ՎԻՑ

---

## Ի ԿՈՏՈՐԱԾ ՄԱՆԿԱՆՑՆ ԲԵԹՂԵՀԵՄԻ

Ըզվըկայիցն հաւաքեցէք ըզծաղիկ,
Զոյս ընդ բանալ զաչս յարփին,
Որպէս ըզվարդ նորափըԹիԹ խիստ մըրրիկ
Բարձ հալածիչըն Փըրկչին։
Դուք նախընծայ սիրոյ Փըրկչին ողջակէզք,
Մատաղերամ զոհելոց,
Առ սեղանովըն պըսակեալք, մանկունք հեզք,
Արմաւենեօք պարէք հոծ։...
Մինչ բըռնաւորն ըզչարագործըն լըւաւ,
Թէ արքայից արքայ գայ՝
Հնազանդ առնել ըզժողովուրդն ընդ իւրեաւ
Եւ տալ ԴաւԹի զիւրըն գահ,
Ծանրացասումն՝ առ գուժաբերըն գոչէր.
« Յաջորդ հասեալ զիս վանէ.
Արի՛ դահիճ, յափըշտակեա՛ ըզսուսեր,
Ներկեա՛ զորրանս յարենէ »։...
ԵրԹեալ դահիճըն մերկացեալ ըզդաշոյն.
Եւ խողխողէ յախերկան՝

Ըզգեստաւորյս մատաղ մարմին մանկըտւոյն.
Հոգիքն ի վեր նորք դառնան:

Ա. Բ. ԿՂԵՄԷՍ

---

## ԶԱՆԳԱԿ

Ողջոց եմ կոչնակ.
Մեռելոց ողբակ.
Կայծակնաց խորտակ:

Որմապատեալ պինդ ի գետնի
Կաւաթուրծ ձոյլըն խոր գընի.
Երևեսցի այսօր զանգակ:
Հա՛պա, ընկերք, ժիր ի վաստակ:
Ջերմ ի ճակատուէ
Քիրտըն կաթեսցէ.
Գործքըն գովեն ըզգործօն,
Այլ երկինք տան զօրհնից ձօն:
Առ այսքան մեր խնամով ձեռնարկ՝
Խնամով և բան կարգել է հարկ.
Թէ խառնեսցի յայն ճառ բարի
Զուարթութեամբ գործն յառաջ վարի:
Ո՛ն արդ տեսցուք ուշիւ ուշոյ՝
Զի՞նչ ծագեսցէ ի գոյզն ուժոյ:
Գրեսցի խոտան և այր վատթար,
Որ ոչ խորհի զգործոյն կատար:
Պարտ և պատշաճ իսկ է մարդոյ,
Որում տուաւ ձիրք հանճարոյ,
Ի խորս սրտին քաջիկ քըննել
Զոր ըստեղծու ձեռօքն ընտել:
Աղէ, առ փայտ ըզբուն չոճի,
Այլ տես զի քաջ ցամաք լիցի.
Որպէս զի բոցն ընդոստ յաւհուր՝
Մըրցէ 'նդ երակսըն վառարանը:



Եռան եռք պըղընձին.
Տո՛ւք զանագն ընդ նըմին,
Զի զանգակին կարծըր խառնուրդ
Յօրինաւորն հոսեսցի ուրդ:
Զոր ի խորւոջ փոսակիս արդ
Ի ձեռն հըրոյ ճարտարէ մարդ,
Ի բարձրավայր զանգակատան,
Արձանասցի վկայ մեծաբան.
Կացցէ մնասցէ և յապագայն
Յունկըն մարդկան արկանել ձայն.
Գոլ ողբակից սըգաւորաց
Եւ երգակից ընդ անմեղաց:
Երկրածընացըս դէպք յոլով
Զոր բաղդն ածցէ գլուրահոլով,
Բաղխեալ ընդ շուրթըն մետաղեայ
Հընչեսցե՛ն քաջ ի բացեայ:
Տեսանի արդ ճերմակ փըրփուր.
Ուրեմն հալին քըծուարքն ի հուր.
Ո՛ն, խառնեցէք յայն զալքալի,
Զի նա երագ երագ հալի:
Ի զանգուածոյն ո՛ն անդր ի բաց
Բարձցի փըրփուրըն թանձրամած,
Զի զըտագոյն մետաղն այն
Ցըստան պայծառ տացէ ձայն:...
Տեսէք, զիա՛րդ փողք թըխանան.
Մխեսցուք ի ներքս ըզգաւազան.
Եթէ թացեալ և փայլեսցէ,
Զուլմանըն ժամ հասեալ իցէ:
Հապա ընկերք ժիր ի վաստակ,
Փորձել ըզձոյլըդ զայդ խառնակ,
Թէ զուգեսցի՞ կարծր ընդ կակղին,
Տալ մեզ նըշան թէ յաջողին:
Զի ուր հըզօր ընդ փափկին
Եւ խառնի մեղմն ընդ ուժգին,
Անտի ծնանի ձայն ներդաշնակ:...
Ժամ է սկիզբն արդ տալոյ հոսման.

Ահա նըշանք և պատուամնն.
Այլ չև հասեալ, ո՜ն, ջերմն ուխտիւք,
Եկայք՝ աղօթըս մատուսցուք.
Վերացուցէք ըզխիցն ի բաց.
Պահեա ՚նվըտանգ զտունս այս, Աստուած.
Զխարդ շըջեալ խոտորն ընդ փոս
Զեռայ հրաշէկ և ալէհոս.
Հուր բարերար է զօրութեամբ՝
Թէ մարդ վարէ արկեալ ըզըռամբ,
Եւ զոր շինէ և զոր ստեղծուն,
Է՛ երկնածիր ուժով սորուն.
Այլ ձիրդ երկնից՝ ահեղ է յոյժ,
Թէ կոտրեալ զկապանն անժոյժ
Ազատասուն բնութեան ղաւակ,
Յուկամ վազէ գնայ համարձակ.
Եւ, վա՜հ, թէ զերծ և անարգել
Թողեալ լիցի աճել վարդել,
Կոհակակոյտ խանձիւք բոցոյ
Ընդ արահետ բազմամարդոյ.
Զի ատելի է տարերաց
Ճարտարութիւն մարդոյս ձեռաց....
Կաղմակերպեալ հողոյն ի խաւ
Յաջողապէս ձեւըն լըցաւ.
Գայցէ՞ արդեօք ի լոյս երագ,
Պասկել զարուեստն և ըզվաստակ.
Թէ անյաջո՞ղ ձուլումն լցէ,
Եւ կաղապարըն պայթիցէ.
Ա՛հ, գուցէ մեր ի յուսով կալ,
Մերձենայ վտանգ դարանակալ....
Փըուզէք ինձ արդ զայդ դարիճակ,
Զի քաջ լըցաւ ԽՐըն վատակ.
Զըւարճացին աչք և սիրտ արդ
Ի տես գործոյս գեղեցկաւարտ.
Կոփկոփեսցէ ուռն անդադար
Մինչև պայթեալ ձուլոյն պատուար,
Փըշրեսցի ձեռն անպիտան,



Ուեղցէ զանգակն յերևան.
Ըզդըշշ ձեռամբ՝ կարէ ճարտար
Փըշրել ի դէպ ժամու զկաղպար.
Այլ վա՜յ, թէ չև պաղեալ համակ՝
Պղնձըն զերծցի բոցավըռակ.
Ցանթիւք ճայթմամբ խոշականաւ
Պայթուցանէ զտուն շուրջ զիւրաւ.
Իբր ի վըհիցըն սանդարաց
Ցըրջացանեալ հուր ուաւերած....
Աստուածային հըրճուա՜նք անճառ.
Տե՜ս իբր համգոյն աստեղ պայծառ
Ի պատենէն ոստչի փայլուն,
Մետաղըն ջինջ և լըպըրծուն.
Ի կատարէն ցըշըրջանակ
Արեգական ցոլայ դունակ.
Եւ ըզքաջ հնարըս ճարտարին
Նուրբ զնանշանքըն այն բարբառին.
Եկա՜յք մըտէք արդ, ո՜վ ընկերք,
Ցուրջ բոլորեալ ակումբ առէք,
Ի զանգակիս մըկըրտութիւն.
Կոչեսցի նա Զայնակցութեան.
Միահաւանս և միահարթ
Զօդել խըմբել զէնըն զըւարթ.
Ցայսմ հետէ այս պաշտօն նորին,
Յոր սակս եստեղծ ձեռք ճարտարին.
Զերկրակենցաղ թողեալ կայան՝
Յերկնից կապոյտն հասցէ խորան,
Աստեղատանց գոլ դըրացի,
Ուր խռան շանթից շարժեսցի.
Տացէ բարբառ ի բարձանց,
Հուլիցն հանգոյն լուսապանծ,
Որք զԱրարիչն օրհնեն ի պար
Եւ զամն ածեն պսակտհամբար.
Ցանկ առ վըսեմն և յարակայ
Բացցի բերանըն մետաղեայ.
Եւ զփախըստեայն ժամանակ

Կայցէ առ մէն ժամ երագ։
Լիցի Թարգման և բաղդին ժիր․
Այլ և անգութ ուանկարեկիր՝
Տատանաշարժ իցէ ընկեր
Փոփոխական կենաց Թատեր։
Եւ ուսուսցէ Թէ որպէս ձայն
Որ ի նմանէն՝ ցըրուի յունայն,
Այսպէս մնայուն ինչ չէք բնաւին,
Ուամէն երկրայքըս յապաւին։
Արդ զօրութեամբ ձիգ պարանաց
Հանէք ի գբոյ զզանգակն ի բաց․
Ի գահ ձայնից ամբարձցի վեր,
Ալորտանալ յօդս և յայեր։
Հա՛ քարշեցէք, քարշեցէք ևս․
Ահա կախեալ ճօճայ Թեթևս։
Խաղաղութեան նախն լիցէ ձայն,
Եւ ցընծասցէ քաղաքս համայն։

ՇԻԼԼԵՐ

---

# ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆՔ

---

## ՆԿԱՐԱԳԻՐ ԴՐԱԽՏԻՆ

Այսպէս ուահ յառաջ գործեալ՝ յագինային մերձի սահ-
[մանս։
Փափկութեան գլխաւոր հեշտավայր՝ յոր մօտ հասեալ էր
[նա յայնժամ՝
Կանաչ ցանկոյքն պըսակէր զերդ պատնիշաւ ինչ դաշտա-
[կան
Ըզգագաթըն սարահարթ երկնակատար առանձնոցին։
Թանձրախիտ կողք ամայեացս ի Թաւաթուփ խողանացեալ
Վայրենեալ չաւըլեալ ըստ կամս յարգարէին զայն անմա-
[տոյց։
Աճէին 'ի գլուխ նորա յանհաս բարձունս, անտառատուն,
Բարձրաբուն մայրք և շոճք, արմաւենիք և եղևինք․
Խուռնախիտ հօծեալ կարգօքն հովանի կուռ ի հովանի,
Կազմէն Թատր ինչ մայրեաց հրաշատեսիլ, վեհինաձեմ։
Այլ քան զգլխակս իւրեանց ի վեր կանգնէր գլխաւորին դա-
[լար ոլմոց՝
Որ պարզէր նախահօր մերում տեսիլ ծայրածաւալ
Շըրջափիւ ի պարագայ կողմանս իւրում իշխանութեան։
Բարձրագոյն քան զորմածն որ ընդ իւրև պարայածէր՝
Երևէր ընտիր ընտիր գեղեցկապտուղ տընկոց պըսակ,
Ծաղկունքն և մրգք ոսկեշող յօրինէին երփնից կիտուած։
Արեգակըն ըլըրտակաթ զայն համբուրէր ճառագայթիւք

Քան թէ զամպ երեկորոյ զգեղապարոյր յերկնից կամար,
Կամ զաղեղնըն խոնաւուտ մինչ առոգէ Աստուած զերկիր:
Այսպիսի էր սիրաշարժ տեսիլ գեղոյ զուարթ վայրին։
Ըստ մտնել ի սուրբ օդոյ էր անցանել ի սրբազոյն՝
Սրբատաճեշտ և գարնային ուրախութեամբք հոգեպարար,
Զօրաւոր մերժել ըզըմնաւ թախիծ, բայց ոչ զանյուսութեան։
Հեշտաշունչ սիգք թօթափեալ ըզխընկաբոյր ըզթևս իւ-
[րեանց՝
Հոտ սըփռէին անոյշ ի բնէ, պէսպէս վայրացն եղեալ գու-
Յորոց չորթեալ ածէին զաւարսըն զայն ըզխընկաւէտ: [շակ
Ի հարաւ կոյս ընդ Եդեմ անցանէր գետ լայնածաւալ
Անխոտոր ընթացիւք, բայց ընդ լերամբն անտառախիտ՝
Երկրասոյզ կորընչէր. արկեալ էր զայն լեառն Աստուծոյ
Իբրև թումբ ինչ ամբարտակ ի պարտիզին շտապ յորձանացն:
Ուխքն ընդ երակս յոքնավըտառ երկրին ախորժ ծարաւու-
[թեամբ
Ի վեր ծըծեալք՝ բըղխէին ակնավըճիտ ցըրտին աղբիւր՝
Ըզպարտէզն առոգանել առուս առուս սըփռեալ վըտակս,
Ոյց անտի խումբ առեալ և խուռնընթաց անկեալ ի վայր
Ընդ խոխոմս ինչ առապար՝ հանդիպէին անդէն գետոյն
Որ ելեալ ընթանայր ի մըթասոյզ ալեց իւրոց:
Անդ յայնժամ ի չորս առաջըս բաժանեալ ի մեծամեծս,
Յայլ և այլ կոյս արշաւեալ՝ փորէ ի փոր թափառէին
Եւ 'նդ տէրութիւնս անուանիս, զորոց ընդ վայր է աստ
[ճառել:
Ասասցուք մանաւանդ, թէ արուեստին ինչ իցէ հնար.
Ո՛րք յադբերէս շափիւղեայ ոլորտապտոյտ գընան վըտակք
Ընդ աւազ ոսկեհատնիկ և 'նդ մարգարիտս արևելեան.
Ո՛րք ի շըրջան մանուածապատ ընդ գետնատաղ հովանեօք
Ըզծորանսըն ծաւալէին յայց ուէ խընդիր մէն մի տընկոյ,
Եւ ի մնունդ երփներանգ գրախտավայել գունից ծաղկանց,
Զորս ոչ նուրբ ինչ յօրինեաց արուեստ ի կարգ, ի փունջ
[չըքնաղ,
Այլ առատ եհեղ բնութիւն ընդ բլուր, ընդ մարգ և ընդ
[հովիտ,
Ուր արև վաղորդայնի ջեռուցանէ զդաշտավայր նախ,



Ուր սաղարթք թանձրախիտք ածեն մայրեաց մութ մէջ-
Այսպիսի էր տեղին, աստընջական երանելի, [օրեայ:
Հովանուն, զարմանազան ի կերպակերպ դիմաց տեսիլ:
Անտառակք՝ որոց ճոխ փայտք ցօղեն ռետին և հոյզ անոյշ,
Դարաստանք՝ որոց պըտուղք ոսկեկեղև և ոսկեփայլք
Առ ի կախ ճօճեալ ճեմին, սիրափափագք, քաղցրաճաշակք,
Երեկորնեայ առասպելք, որ թէ իցեն՝ աստ են միայն:
Ի մայրեաց անդ ցան և ցիր կան դիւրք և մարգք անօսրա-
Եւ հօտք և անդեայք ճարակաւորք յարօտ գալար, [գեղք,
Կամ բըլրակք ամբառնան արմաւենեօք լի տընկախիտ:
Ծաղկաւէտ ծոցջըրաստուն ինչ ծործորոց սըփռէ զիւր գանձ՝
Երփնազարդ ծաղկանց երանգս, և գեղափթիթ ըզվարդ ան-
[փուշ:
Յայլ ինչ կոյս՝ այրք և անձաւք հովանաւորք, զով առան-
[ձնոցք,
Եւ այգի՝ զայնս օթոցիւ պատեալ իւրով տարածանէ
Զծիրանի ողկոյզըն՝ առատ սողոսկելով գեղեցկուղէշ:
Կարկաչոտ միանգամայն ալիք սահեալ ընդ բըլրոց շեպ
Ճապաղին, կամ ժողովեն ի մի զհոսանս իւրեանց ի լիճ
Որ ծաւալ առեալ պարզէ զապակեղէն զիւր հայելին
Առ գարևանդ խոտորկըտուր ափանց ի մուրտ պըսակելոց:
Հաւք ի նուագսըն պարապեն, որոց սըզոխք գարնանաշարժք
Զանուշից շընչեալ բուրմունս անդաստանաց և ըզմայրեաց՝
Ի մի ձայն միաբանեն ըզծածանեալ դողդոջ տերևս...:

ՄԻԼՏՈՆ

—

## ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱ Ի ԴՐԱԽՏԻՆ

Երկուք ի նոցանէն աղնըւակերպ հասակագեղ
Վըսեմաբերձ աստուածանման՝ զիւրեանց բընիկ փառսն ըզ-
[գեցեալք,
Ի մեծ շուք մերկամարմին՝ ամենայնին թըւեցեալ տեարք,
Եւ պատուոյն պարծանաց երևէին արժանաւորք: [չէին
Յաստուածային աչս իւրեանց ծագէր պատկեր վեհ Արար-

Ուղղութեամբ և հանճարով և սերտ և սեռըն սրբութեամբ.
Սեռն և սերտ, սակայն ի սոյգ որդիական ազատութեան՝
Որ նոթճէ ի մարդիկ ըզճըշմարիտ իշխանութիւն։ [դէտ.
Ձէն հաւասար երկոքեան, որպէս բնութեամբ իսկ չէն հան-
Այրն եղեալ ի մըտաւոր իմաստութիւն և յարութիւն,
Կինն ի գըրգանըս քըղցրանաց, ի շնորհ անոյշ սիրայորդոր.
Այր միայն վասն Աստուծոյ, կին Աստուծոյ և առն իւրում։
Գեղեցիկ և լայն ճակատ մարդոյն և աչք բարձրահայեաց
Զգերագոյն իշխանութիւնըն գուշակէին յայտ յանդիման.
Յակընթեայ խոպոպք վարսիցն յերկուս ջոկեալ ՚ի ճակա-
Տատանէին ողկուզօրէն և առնացի վայելչութեամբ, [տուն՝
Սակայն ոչ ի խոնարհ քան զկորովի ուսովք իւրովք։
Կինն ոսկի սքողեալ հերովք՝ որոց իջեալ ցիր և անզարդ
Մինչև ի մէջըն փափուկ՝ պէսպէս ծըփէին գեղազանգուրք
Զերդ խաւարծի որթոյն ի խիղըս ոլոր՝ նըշան կապոյ հլու-
[թեան.

Զոր ըղձօն և մեղմակոն պահանջեալ առնըն տէրութիւն,
Եւ շնորհեալ ի կնոջէն, և յառնէն լաւ ես ընկալեալ.
Ինքնարգոյ հնազանդութեամբ և պատկառոտ շնորհեալ,
[խոռխոռով,

Քաղցրախառն գիմամարտիկ սիրատենչակ զանդաղանօք...։
Ադամ՝ ամենալաւն ի մարդկանէ, յորդւոց իւրոց,
Եւա՝ չըքնաղագեղն յազգըս կանանց, իւրոց դըստերց։
Ընդ թաւաթուփ հովանեաւ որ քաղցր ի սեղ շըրշէր կա-
Բազմեցան առ ափին ականակիտ բըղխեալ աղբեր, [նաչ՝
Ի վաստակ գեղածիծաղ պարտիզին այնչափ աշխատեալք,
Որչափ հարկ էր յանուշել ըզզովարար օդոյըն սիւք, [րար։
Առ ի քաղցր ըզքունն առնել, զծարաւ և զքաղց՝ առողջա-
Քաղեցին անձամբ զխայրիս երեկորին ընթրեաց իւրեանց,
Պըտուղք ախորժահամք զոր ոստք առ ձեռն ընձեռէին,
Մինչ ինքեանք ի կողմ եղեալ ողն առնուէին առ ի հանգիստ
Ի փափկիկ սիզաբուսակ ծաղկանըկար ի բաստեռոնս։
Ծըծէին զանուշակ ուղիւղ մըրգոցն, և ծարաւեալք՝
Ըմպէին ի կեղևս նոցա զվըտակն աղբերահոս։

ՄԻԼՏՈՆ



## ՍՏԵՂԾՈՒՄՆ ԹՌՉՆՈՑ ԵՒ ԶՈՐՔՈՏԱՆԵԱՑ

Եւ ասաց Աստուած. Հանցեն ջուրքըն զեռուն բազմասե-
[րունդ
Արարած կենդանացու, և թռիցեն հաւք վերոյ երկրի [թեք։
Ի ներքոյ ՚նդարձակ երկնից հաստատութեան սաւառնա-
Եւ արար վիշապաձկունս Աստուած և զընաւ շունչ կենե-
[ղուտ,
Զամենայն կայտառ ի ջուրս և որ անդուստ եռան ազգ ազգ.
Ըստեղծ և ըզթըռչունըս թևաւորս մէն մի՚ստ տոհմից։
Եւ ետես զի էր բարի, և ըզնոսին օրհնեալ ասէ.
Աճեցէք, բազմացարուք, լցէք ըզջուրըզդ ծովածիրս,
Ըզլըճացդ և ըզգետոց, և բազմասցին թըռչունքդ յերկրի։
Իսկ և իսկ նեղուցք և ծովք, ծոց ամենայն, ամենայն խորշ
Եռացին յանթիւ սերունդ ի լուղակաց խուռն յոգնահոյլ,
Որք թևօքն և ջինջ թեփովք ընդ կապուտակըն կոհակօք
Սող առեալ վըտառ վըտառ խուռն և խըլրուտս ի ծով գործէին։
Կէսք մենակեացք կամ ընդ ընկերս ըզբուտ իւրեանց ճա-
[րակին լօռ,
Եւ շըրջին յայրըս բըստոյ, կամ խաղալով, փայլակըն սուր,
Ցուցանէին արեգական զվէտ վէտ շապիկսն ոսկեճամուկ։
Այլք հեշտիւ ի գաղտակուր խեփոր մընան ստամուկ խայծին,
Կամ ի զրահ պատենազէն սպասեն որսոյն ընդ խարակաւ։
Կորաքամակ դելփինք և որթք ծովու խաղան ի խաղաղ
Անսրի, անճուռնի և ահագին վիշապ ձըկունք [ջուրս.
Թաւալեալ յաղթահարեալ ըզմեծածուփ յուզէն մըրրիկ։
Անդանօր Լևիաթան, սոսկալիթխարն ի կենդանիս,
Ի մկանունս անդընդոցըն տարածեալ իբր հըրուանդան՝
Կայ ի քուն կամ գնայ ի լիւղ, ծըփին ցամաք ինչ թըլե-
[ցեալ,
Ականջքն ի ներքըս ձըգեն, քթափողք ժայթքեն ծով մի
[ոջոյն։
Մեղմախառն անձաւք՝ ճահիճք՝ ափունք հանեն զանթիւ
[ձագունս

Ի ձըւոյն որ Նոյնհետայն բեկեալ ի դէպ ջախջախանօք՝
Ցուցանեն ըզմերկանդամ մանկտոյն, որ փոյթ փետրազդեցին
Եւ ի թուիչըս պատրաստեալ թեւօքն ելեալ վերասլանան,
Եւ կանչիւք յաղթանակօք սաւառնացեալ յօդըս վերին՝
Քամահեն զերկրաւ՝ տեսեալ զայն ի հեռուստ ընդ բարձր
[ամպով:

Աստ արծուին և արագիլ ի քարակտուր ժայռս ափափայս
Եւ ի դիտակըս մայրից կառուցանեն ինքեանց դադարս:
Ոմանք հոլաթեւեն յոխորտաբար յօդոյն գաւառ,
Իմաստնագոյն կէսք ի ձեւ մըտեալ՝ համուռ գըծեն շաւիղս.
Խելամուտք ժամանակաց՝ ըզկարաւանըն զօդաչուս
Արձակեն, որոց յերկրի և ի ծովուց վերայ թռուցեալ՝
Օժանդակեալ միմեանց թեւօք դիւրին գործեն զիւրեանց
[փախուստ:

Խոհական խորդոցըն տողք՝ այսպէս 'ի հողմըս վերելեալք
Ամ ամ զհետըն ուղղեն, յանցին ի ծուփ ծածանին օդք
Մաղեալք և հոսեալք անթիւ փետրովքն և անհամար:
Իսկ թռչնիկք ոստ ի յոստոյ զպըւրակս երգովքն առնեն
[ուրախ,

Թօթափեալ զօրըն ցերեկ ածեալ ըզթեւսըն նըկարէն.
Եւ անդէն իսկ պանծալին ծիծառնուկ ոչ լռէ յերգոյն՝
Գեղգեղեալ ըզցայգն ի բուն զողբանըւագ զիւր հեծու-
[թիւնն:

Այլք յարծաթի ծովակս՝ ի գետս ի լիճս լուանան զմանրա-
[թեւ լանջս.

Իսկ կարապ՝ կարակնակերտ ուլամբ՝ յերկուս լուսափայլ
Ի լօդիկ շըքեղաշուք, թեւձակաձեւ լայնչի թաթիւք [թեւս,
Մըխրձ հարեալ շուրջ ածէ 'ի լոգարանս ըզպերճանս իւր.
Ըզխոնաւ տարրըն լըքեալ բազում անգամ թեւատարած
Ելանէ վերանայ ի միջնաբերձ օդոյն գաւառ: [ջին,
Այլք երկրակոխ գետնագնաց յոտիցն ի ձեռըս պարծ շըր-
Աքաղաղ՝ ցըցուննազարդ փողակարդաց լըռին ժամուց,
Եւ միւս այն՝ գեղաձըտուն փաղփեալ ի գոյն պէսպէս երփ-
Ծիրանի ծխածանին և աստղախուռն ականողեաց: [նից
Օրինակ զայս ջուրբ լըցեալ ձըկամբք և օդք թռչնոց տար-
Վաղորդայնն և երեկոյն ըզհինգերորդ տօնեցին օր: [մեւ՝



Հուսկ ուրեմըն վեցերորդ և վերջին օր արարչութեանն
Ի հընչիւն երեկորնեայ ուսաւոտին սաւղաց ծագեաց.
Եւ ասաց Աստուած. Հանցէ երկիր ազգ ազգ շունչ կեն-
[դանի,

Հօտ, անդեայ և սողուն, գազան երկրի զարմանազան:
Լըւաւ երկիր, և անդէն բացեալ զարգանդն արգասաւոր՝
Ծընաւ միանգամայն արարածոց կենդանի հօյլս,
Կատարեալ կերպարանօք՝ անդամապատ և բարդաւաճս:
Ի հողոյն՝ եբր յեւր խըշտեաց՝ երեվայրի եւ կանգնեցաւ
Ի բնիկ կայմն յանտառ անկոխ, ի թուփ՝ թաւուտ կամ ի
[քարայր:

Զոյգ առ զոյգ ընդ ծառովք յարեան կացին և ընթացան,
Նախիրն ի դաշտ մարգագետին, կէսք ցիր ընդ ցիր առան-
[ձնակեաց,

Այլք երամ երամ հօլեալ հաւանընկեր արօտականք,
Եւ բըղխեալք ի գետնոյն ի յոգնախումբ տողեալ ջոկեր:
Է ուրեք զի հողակոշտք պարարտարօտ՝ ծնանին զերինջ,
Եւ է՝ զի կխանձնեայ երևեալ շէկ առիւծ մագըլէ
Ելանել զերծուցանել ըզյետակողմ իւրոյ մարմնոյն.
Եւ գոդցես ի կապանաց լինչ ձողոպրեալ, և ոստուցեալ
Կանգնի կայ և թօթափէ զխայտաբղէտ բաշըն գեղապանծ:
Ինձ, վագր և ընծառիւծ յայտուցին ելեալ խըլըրդաբար,
Սահեալ զանձամբք ընկենուն ըզփըլխրեալ հողըն կոյտ ի
[կոյտ:

Երագոտն եղջերու բառնայ յերկրէ զգըլուխն ոստախիտ.
Բեհեմովթ, յաղթանդամն յորդիս երկրի, հազիւ զօրէ
Զվիթխարի հասակն հանել թափել յիւրմէ կաղապարէն:
Գեղմնաբարձ և բաւաշոտ խաշն որպէս տունկըս բուսանի.
Գետաձի, թեփոտ տխտեան երկմիտք ընդ ծով և ընդ ցա-
[մաք:

Ամենայն սողուն երկրի, որդն և ժիժմակ ծընան հա-
[մայն.

Են որ զձապուկ հոլահարսն ըստ օրինի շարժեն թեւոց,
Եւ զմանրիկ ըզբարեխառ պըճնեն պատկերսն յերանգ ե-
[րանգ

Եւ ի թոյրըս ձոխութեան պերճապայծառ ամարայնոյ,

Ի խայտուց ոսկեճամուկ, կապոյտ՝ կանաչ և ծիրանի։
Եւ են՝ որ երբև գիծ մի՛նդ քարշ տանին զերկայն իրանս՝
Յերկրի զհետսըն դրոշմելով ման ըզմանիւ ոլորտապտոյտ։
Սոքին ոչ ամենեքեան են ի նուաստից բնութեան ի կարգ.
Կէսք յօձից, տոհմ սոսկալի երկայնութեամբն և թանձրու-
[թեամբ,
Գալարեն ըզքընթըռնոցսըն կամակորս, և յարեն թևս։
Զեռայ նախ մըրջիւն անօրէն՝ հանդերձելոց կանխագու-
Սիրտ մի մեծ ընդգըրկեալ ի նըկնաձև դոյզն հասակի։ [շակ,
Օրինակ թերևս յապայս իրաւակչիւըն զուգութեան,
Տաւաղէ յուխտ միաբնակ ըզառհմամթիւս խառնաղանճին։
Ըզկնի մեղուն իգաբուն երևեցաւ եւ դունդադունդ,
Այն որ զեւր այր դատարկապորտ սընուցանէ քաղցրաճա-
[շակ,
Որ չինէ զըրջջաց խըցկունսըն մոմակերտըս մեղրաբուխս։
Այլք անթիւ են և քեզըն բնութեան նոցին ես խելամուտ,
Եւ անուանս եդիր նոցա՝ զորս աւելորդ է երկրորդել։
Եւ օձին չես անհըմուտ՝ խորամանգին ճըճեաց վայրի,
Որ է զի է անհեդեդ, յաղթամարմին, պըղընձակնեայ,
Թաւաբաշխւք քասքնելի, թէպէտ և քեզ անվնասակար՝
Զիչխէ ինչ մեղանչել, լըւեալ կոչդ և գայ հըլու։
Արդ երկինք ի փառս իւրեանց նըշողէին համապայծառ,
Եւ թաւալ առեալ գնային ըստ հոլովմանց բուռըն բազկի
Մեծազօր սկըզբնաշարժին արկելոց նախ յընթացս իւրեանց։
Եւ երկիր բովանդակեալ ի հանդերձան ճոխապաճոյճ
Ծիծաղէր զուարթածաղիկ, օդ՝ ջուր՝ երկիր էին խըռնեալ
Ի թըռչուն հաւ՝ ի լողորդ ձուկն՝ յանասուն երկրահոլով.
Եւ օրըն վեցերորդ չև տակաւին էր ելեալ յանդ։

ՄԻԼՏՈՆ



## ՆԿԱՐԱԳԻՐ ՎԱՀԱՆԻՆ ԱՔԻԼԼԵԱՅ

Զայս ասացեալ և ըզնա թողեալ անդէն՝ չոգաւ առ փուքսն,
Ի հուր զայնըս դարձուցեալ՝ հրաման ի գործ ետ անկանել։
Եւ քըսան փուքք անդ ի բովըն փըչէին առ հասարակ
Ըզպէսպէս դիւրավառ օդոյն շոգիսըն շընչելով, [մի,
Զի մերթ առ ձեռըն գըտցին իւրում փութոյն, և մերթ այլ
Որպէս ինքն ախորժիցէ Հեփեստ՝ հանել ըզգործն ի գլուխ։
Ըզպըղինձն անպարտելի էարկ ի հուրն, ես և զանագ
Եւ զոսկին պատուական ընդ արծաթոյն, և կանգնեցոյց
Սալ զմեծ սալն ի կոճեղն, և բուռն հարեալ առ ի ձեռին
Ըզկռանըն զօրաւոր, և ի միւսում կալաւ զաքծանն։
Եւ առեալ արար նախ ասպար մի մեծ հաստահարուստ,
Գործ ճարտար՝ կարակնակերտ, ածեալ զնովաւ ծընոտ
[պայծառ
Երեքկուղ, լուսաճաճանչ, և զբառնալիսն իւր արծաթի։
Հինգ էին վահանին պատուածք, իսկ նա ի բըն՝ անդ
Բազում ինչ հրաշակերտս իմաստութեամբ սըրտին գործէր։
Յօրինեաց անդէն ի նմա զերկին, զերկիր և ըզծով,
ԶԱրեգակն անաշխատ և ըզԼուսին լուսապատար,
Անդ զարփիսն ամենայն՝ որովք երկինք են պըսակեալ,
ԸզԲոյլսն և զԲազմաստեղս և զզօրութիւնն Որիոնի,
Եւ զԱրջըն՝ զոր և Սայլ ես անուանեն յորջորջանօք,
Որ ցանդ անդըր շուրջ եկեալ՝ դէտ յՈրիոն ակն ունի պիշ.
Եւ միայն է անհաղորդ լոգարանացն Ովկիանու։
Անդ արար յօգաձայնից մարդկան կըրկին քաղաքըս չէնս.
Ի մինն էին հարսանիք և մեծասպաս խրախունք կոչնոց,
Եւ զհարսունս յաւագաստից բոցաճաճանչ վառեալ ջահիւք
Ածէին ընդ ոստանն՝ հարսանեկան հըրչիւք բազում.
Եւ մանկտի պարաւոր շըրջան առեալ կաքաւէին,
Եւ փողք և փանդուռնք բարբառէին ըզձայնս իւրեանց,
Եւ կանայք զարմանային՝ կացեալ առ դուրս իւրաքանչիւր։
Ժողովուրդն ի հրապարակ կային խըռնեալ, յուզէր պայ-
Արք երկու կադէին ըզտուգանաց փոխարինի [քար,
Սըրկեալ առն ըսպանելոյ. մին լու ի լու հրապարակին

Պարծէր ողջոյն հատուցեալ, միւսըն չառեալ ինչ կայր յու-
Խընդրէին երկոքեան իրաւարար՝ առնուլ վըճիռ: [ռոսա.
Երկոցուն կողմանց ի նպաստ աստի անտի գոչէր ամբոխ.
Իսկ քարոզք ըզժողովուրդն հանդարտէին, և ծերունիք
Բազմէին յողորկ ի վէմս ի նուիրական հոլեալ ակումբ,
Եւ զմականս ի նուիրակացն օդաձայնից առեալ ի ձեռս՝
Նոքօք յարուցեալ առէին դատ մի 'ստ միոջէ:
Եւ ոսկւոյ կըրկին քանքար անդէն եդեալ կայր ի միջի՝
Տալ այնմիկ՝ որ զիրաւունս իւր ի նոսին ցուցցէ ճըշգրիտ:
  Իսկ ըզմիւս քաղաքն՝ երկուք պաշարէին զօրաց բանակք
Սպառազէն փայլակնացեալք, որ յերկշուիղ կային խոր-
[հուրդ.
Կամ ի սպառ սատակել, կամ բաժանել ըզբնաւն յերկուս
Որչափ ի ներքս լցեն ինչք ի ցանկալի յայնմ ապատին.
Իսկ նոցա 'մբոստացեալ՝ զինուորէին գաղտ ի դարան:
Ըզպարիսպըն սիրելի կանայքն և տղայ մանկտին պահէր
Ամբարձեալք ի նմա, և արք եւս ընդ նոսին յեցեալք յալիս:
Նոքա գնային, և Աթենաս Պալլաս ու Արէս վարէր զնոսին,
Երկոքին ոսկեղէնք և պաճուճեալք ոսկեհանդերձ,
Գեղանիք և մեծանձունք ի զէն ի զարդ իբրև աստուածք,
Ընդ հանուրս երևելիք. իսկ զօրականն էր դոյզն ընդհատ:
Մինչ սոքա հասանէին ուր ի դարան թուէր նոցա դէպ,
Առ գետով՝ ուր և ջըրարբքն էին դուարաց բոլորեցուն,
Անդ սոքա բազմէին ամրածածուկք ի պըլինձ հրաշէկ:
Մեկուսի յամբոխէն նըստէին դէտք իւրեանց երկու,
Նըկատել՝ եթէ տեսցեն զհօտս և զանդեայս կարակնեղջերս.
Նըմանէին նոքա սաէպ, ընդ որս գային կըրկին [illegible]ուարածք
Զուարճացեալք ի ձայն սրընգաց, և դաւանաց ինչ անըզ-
[գաստք:
Զայն տեսեալ նոցա հեռուստ, փութանակի տըւեալ դը-
Անդէոց երամակս, ընտիր սպիտակ օդեաց ճահուկս [ռոյթ
Օցաէին վըտարանդիս և զխաշնարածս հարկանէին:
Իսկ նոքա, լըւեալ ըզյոյժ դուժին շըշուկ առ անդէովք՝
Մինչ բազմեալ կային յատեան հրապարակի, անդէն և անդ
Ցերիվարս օդապարիկս հեծեալ ժաման լինէին շոյտ,
Եւ զտեղի առեալ զափամբ գետոյն, մարտ տըւեալ ճակատ,



Սատակէին ըզմիմեանս ի պըղնձակուռ նիզակաց սայրս:
Անդ դեգերէր Հեռ և Վըրդով, անդ և Օրհաս կորըստաբեր
Զոմն ըմբըռնեալ կենդանի նորոգ խոցով, զայլ ոմն անխոց,
Եւ զայլ ոք կենազըրաւ՝ ձըգէր զոտիցն ընդ խազմականս.
Եւ էին զուսովք իւրով ձորձք թաթաւեալ յարիւն արանց:
Շըրջէին զօրէն մարդկան շընչաւորաց և կըռուէին,
Եւ զմիմեանց մեռելոց ձըգձըգէին ըզդիակունս: [ւանդ,
  Եդ ի նմա և դեռահերկ արտ մի փափուկ, անդ արգա-
Լայնատարր՝ երեքկնարօր, և մաճակալք ի նմին յոգունք
Տանէին և բերէին շըրջեալ հարկիս այսըր և անդր.
Որոց ի գլուխ ժամանեալ արտավարին դարձադարձիւ՝
Եկեալ այր մի անդէն մատուցանէր նոցին ի ձեռս
Դաշխուրան անոյշ գինւոյ, և դառնային նոքա 'նդ ակօսս,
Տենչացեալք ի խոր անդոյն գալ ժամանել անդրէն յաւարտ:
Հարկանէր այն ի թիկանց, իբր արօրեալ, երփըն մըթին,
Թէպէտ և էր ոսկենիւթ, և հիացումն էր այս մեծ յոյժ:
  Եդ ի նըմին և արտորայ մի հասկաթուռ, յորում մըշակք
Սայրասուր գերանդիւք ի ձեռս ըզհունձս հարկանէին:
Եւ որայքն՝ էր որ յերկիր թօթափէին թանձր ընդ ակօսս,
Էր զոր կապօղք որայից առնէին զայնս ողորակապ:
Եւ որ զորայն կապիցեն՝ երեք ըզհետ գնային նոցա.
Հասկաքաղ մանկտի յետուստ բարձեալ ի գիրկըսն բերէին,
Մատուցեալ անդուլ ի նպաստ. ի մէջ նոցա պետըն լըռիկ
Ցուպ ի ձեռին կայր ի վերայ գաղջին սըրտիւ բերկրապա-
Կազմէին նուիրակք կոչունս ընդ թեղօշիւ մի մեկուսի, [տար:
Եւ զենեալ եզըն մի մեծ՝ հանդերձէին, և անդ կանայք՝
Մըշակացըն հայս յընթրիս՝ թրէին գերմակ ալիւր առատ:
  Եդ ի նմին և այգեստան մի բարդաւաճ ողկուզալիր,
Վայելուչ և ոսկեկուռ, և սեաւ ի խայծ անկեալ ողկոյզքն,
Եւ կանգուն կայր ձողաբարձ յարծաթի խեչըս ծայր ի ծայր:
Առուամէջըս կապուտակս և յանադէ զնովիմբ ած ցանկ.
Մի և եթ էր յայն շաւիղ՝ գընալ կրեղեաց ի կութս այգւոյն:
Կուսադեղ օրիորդք և պատանեակք քընքշասըրտիկք
Ի հիւսուածոյ սակառիս զանուշահամ բերան ածէին.
Ցոյց ի մէջ հընչուն քնարաւ մանուկ մի քաղցըր նըւագէր,
Եւ 'նդ աղիս բարէյարմարս գողտրիկ ձայնիւ զուգէր գեղ-
[գեղ,

Նոքա 'նդ նոյն յերգ ուր շրունչ յոտին գոփիւն զհետ կայ-
Արար ևս ի նմա եղջերաբերձ երընջոց ջոկս. [թէին:
Եւ երինջքն յօրինեալ էին յոսկւոյ և յանագէ,
Եւ բրնչելով ի գոմոցն ելանէին յարօտըս կոյս
Ըստ վըտակ մի կարկաջուն և ըստ շամբուտըն նըրբաստեղն:
Անդէորդք խառն ընդ երինջսըն ոսկեղէնք երթային չորք,
Եւ ըզկնի նոցա գամփռունք երագոտունք ինըն գնային:
Ամեհի առիւծք երկու յառաջընթաց կովուցն ի բուլ
Զբառաչօղ ցուլն ունէին յահեղ պոչիւն վարեալ ընդ քարշ,
Եւ գիմեալ գամփռունք ի նա հասանէին և պատանիք:
Իսկ նոցա պատառեալ զմեծամարմին զուարակին մորթ՝
Զփորոտին և զարիւնըն լափէին բասորաբուխ.
Հովիւքըն զուր վանէին՝ յորդորելով ըզժիր գամփռունս,
Որ խըրտուցեալ յառիւծուցըն չառնուին յանձըն գօշել,
Եւ ելեալ և մատուցեալ մօտ հաչէին և խորշէին:
Արար ևս անդ լուսակիզն հօտից արօտ մի լայնալիր
Կաղակըրկինն հոյակապ՝ ի գեղեցիկ հովտի միում,
Գոմս եղանց, մակաղատեղս և հանդըրուանս յարկածածուկ:
Դըրուագեաց անդ և ըզպար Կաղակըրկինըն հոյանուն,
Այնըմ նըման զոր երբեմն ի մեծանիստն անդ ի Կնոսոս
Դեդալոսն յօրինեաց գեղահիւսակն Արիադնեայ:
Պատանիք անդանօր և օրիորդք շըքնաղագիւտք
Ըզձեռացըն դաստակէ կալեալ միմեանց առնուին պար.
Աղջկունք նուրբ բարակաման զգեցեալ բեհեզըս կըտաւիս,
Մանկտին բաճկոն քաջոլոր՝ լուսանըկար գոյն ինչ ի ձէթ.
Եւ նոցա՝ բոլորեալ էին պըսակք գեղեցկահիւսք,
Իսկ սոցա՝ դաշոյնք ոսկիք ըզկամարացն արծաթ[illegible]ից:
Մերթ ոտիւք հանճարեղօք մանեկաձև հիւ գային շուրջ,
Թեթևակի յոյժ իբրու բրուտ մի զի կալեալ ի ձեռս ըզ-
[դուրգն
Եւ նըստեալ՝ ըզփորձ առնուցու՝ թէ ի շըրջանն ընթանայցէ.
Եւ մերթ անդրէն կարգ ընդ կարգ հարկանէին կայթս ընդ
[միմեանս:
Ցոգնահոյլք ըզանընչալի պարուն կուտեալ կային գումարք
Հեշտացեալք, և ի խըմբի նոցին գուսան աստուածեղէն
Երգէր քնարաւ, և երկուք ոք յախխիթերս անդ խաղալիկք



Ի սկըսնուլ նորուն յերգ՝ ի մէջ նոցա ճախր առնուին:
Եդ ի նմա և ըզգետոյն Ովկիանու մեծ զօրութիւն
Առ վերջին պարունակաւ ճարտարագործ վահանին այն:
Իսկ յորժամ բովանդակեաց զասպարն ըզմեծ և հաստա-
[բեստ,
Յօրինեաց և զըրահս քան զճառագայթս հըրոյ պայծառ.
Յօրինեաց և սաղաւարտ պինդ յիրանունս նորին պատշաճ,
Գեղաշուք՝ բազմաքանդակ, և գագաթնակ արկ ոսկեփունջ.
Յօրինեաց և սըռնապանս ի կռանակուռ անագ թիթղանց:
Վըճարեալ զկազմածս ողջոյն Կաղակըրկինն հըռչակա-
[նուն,
Զամենայն բարձեալ տարաւ մօրն Աքիլլեայ եդ առաջի:
Նա սլացաւ՝ իբրև շահէն՝ ի ձիւնեղէնն Ողիմպոսէ,
Վառուածս արփիագեղս աբերելով ի Հեփեստեայ:

ՀՈՄԵՐՈՍ. Իլիական:

---

## ՀԱՆԴԷՍ ՑՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՐՈԿԼԻ

Իսկ զանբաւ փայտակոյտն յորժամ լըցին աստի անտի,
Անդ նըստեալ միաժողով ակն ունէին. այլ նոյնհետայն
Հրաման ետ Աքիլլևս քաջամարտիկ Միրմիդոնայց
Վառել ի պղինձ և լծել իւրաքանչիւր ի կառս ըզձիս.
Եւ նոցա յարուցեալ փութանակի զգեցան ըզզէնս,
Եւ ի զոյգսն ելին հեծեան պատերազմօղք և կառավարք:
Յառաջոյ կառամարտիկք, հետևակացն ըզհետ գայր ամպ,
Բիւրաւորք, և ի միջի զՊատրոկլ ընկերքըն բառնային:
Ծածկէին ըզդին հերովք իւրեանց հատեալ և ընկեցեալ,
Իսկ դիւցազն Աքիլլևս ըզգըլուխն յետուստ ունէր՝ տըրտում,
Զի յուղարկէր զանարատ ընկերն ի վիհ Սանդարամետս:
Ի տեղին հասեալ նոցա յԱքիլլևսէ նըշանակեալ՝
Եդին ի վայր, և անդէն դիզին ըզփայտըն շեղջաշեղջ:
Յայնժամ քաջոտն Աքիլլևս դիւցազն և այլ ինչ արկ ի միտ.
Ի բացէ ի խարուկէն կացեալ կըտրեաց զհերս իւր գեղձան՝
Զոր գետոյն Սպերքիոսի ծաղկազըւարճ սընուցանէր.

Եւ յոգւոց ելեալ ասէ՝ ակընկառոյց ի ծովըն Թուխ.
Սպերքիէ, հայր իմ Պեղեւս ի զուր նուիրեալ ուխտ եդ ընդ
Ինձ յանդրէն ի դարձիս ի բնագաւառն իմ սիրային [քեզ՝
Քեզ ըզվարսըս խըզել, հանել և զոհ սուրբ զանդէոց,
Եւ խոյոց որձըս յիսուն զենուլ անդէն յաղբերականսդ՝
Ուր կան քեզ սըրբանըւէր անդք և բագին անուշաբոյր:
Զայս ուխտեաց ծերունին, այլ դու զխորհուրդ իւր ոչ լը- [ցեր:
Իսկ արդ զի չէք ինձ դարձ անդրէն ի քաղցուենին իմ ընիկ [աշխարհ,
Տաց ըզգիսակս ի դիւցազնըն Պատրոկլոս՝ առնուլ գընալ:
Զայս ասացեալ՝ եդ ըզգէսն ի սիրելւոյ մըտերմին ձեռս,
Եւ զփըղձուկ արտասուաց բորբոքեցոյց յամենեսին.
Անդադար մինչև ի մուտս արեգական ձըգէին կոծք,
Թէ Աքիլլէս մատուցեալ յԱգամեմնոն չասէր ճեպով.
Ատրիդէս, — քանզի ժողովքս աքայեցւոց զհետ երթիցեն
Հրամանի քում մանաւանդ, — է յագելոյ ի լալեաց ժամ.
Իսկ զարդիս ի խարուկէս արձակեա, դուլ տուր և պատուէր
Պատրաստել ընթրիս, իսկ յայս խընամ տարցուք յորոց [գնացեալս
Ի ջերմոյն է առաւել. սակայն մնասցեն աստ ընդ մեզ պետք:
Արդ յորժամ լըւաւ զայս արանց արքայն Ագամեմնոն,
Նա ընդ եռ ցըրուեաց զամբոխն ի հարթարդակ նաւեանց [նաւակս,
Եւ մնացին յուղարկաւորքն անդ և ըզփայտսըն շարեցին՝
Յօրինեալ տանաչափս հարիւր աստի անտի զխարոյկն,
Եւ ի գլուխ փայտակուտին զդիակն եդին՝ խոցեալք ի սիրտ:
Եւ բազում պարարտ խաշինս և ծանրաքայլ կորեղջիւր [ցուլս
Առ խարուկաւըն մորթեալ հանդերձեցին. և ի բնաւիցն
Աքիլլէսյ մեծանձին ըզճարպն առեալ ըզդին ծեփեաց
Յոտից ցըգլուխ, և կուտէր շուրջանակի զմորթեալ շաղեղն.
Եւ զմեղու և զիւղոյ սըրուակըն եդ յեց յանկողինն,
Եւ քառեակ երիվարս աշխպարանս յապուրակի
Արկեալ անդր ի փայտակոյտըն՝ մեծամեծս յոգւոց եհան:
Ինն արքային իններեակ շունք սեղանապատք,



Զերկուսին ի նոցանէն արկ ի խարոյկըն փողոտեալ,
Եւ զտրովեանցըն մեծանձանց երկոտասան արի մանկունս
Պըղընձով խոշոշեալ, չարեաց ոճիրս ածեալ զմըտաւ.
Ընկեցեալ անդր և զսաստիկ հրոյն բըռնութիւն ի ճարակել՝
Զայն եառ այնուհետև և զսիրելըն կարդաց զընկեր. [տին.
Ողջոյն քեզ, ով Պատրոկլէ, և անդ ի տան Սանդարամե-
Կատարեմ քեզ աւասիկ զյառաջագոյն խոստմունս ի գլուխ.
Ըզտրովեանցըն մեծանձանց երկոտասան մանկտի հուժկու
Զայն ընդ քեզ ծախէ հուրըն զամենայն միանգամայն.
Իսկ զՀեկտոր ըզՊրիամեանն՝ ոչ տաց հըրոյ լափել, այլ շանց:
Զայս ասաց ըսպառնալեօք, բայց շունք չէին յայն գիշամուխ
Այլ ի տուէ և գիշերի Արամազդայ դուստրըն Աստղիկ
Հալածէր անտի զըշունսն և ի վարդի օծանէր իւղ
Յաստուածեղէն, զի մի զնա ի քարշ ձըգելն երգիծցէ ինչ:
Իսկ Գուշակն Ապոլոն սըփռեաց զևրև ամպ կապուտակ
Ի յերկնից մինչև յերկիր, և զամենայն վայրըն ծածկեաց
Զոր դիակնըն գրաւէր, զի բարկութիւն արեգական
Մի զմարմնովն անկեալ՝ ջըլօքն և անդամովք խըռունեցուցէ:
Բայց փայտակոյտ մեռելոյն Պատրոկլոսի տոչորէր ոչ:
Յայնժամ քաջոտն Աքիլլէս դիւցազն ըզմիտս ընդ այլ տա- [րաւ.
Ի խարուկէն մեկուսի կացեալ մաղթեաց հողմոց երկուց՝
Հիւսիսոյ և Զեփիւռին, ուխտեալ զընտիր ընծայս յաշտից,
Եւ առատ հեղեալ նըւէրս ոսկի նուագաւ՝ յաղերս ածէր,
Գալ ըստէպ՝ զի զդիզափայտըն ճեպեսցի վառել ի բոց
Եւ զդիակունքն հըրդեհեսցին: Յայնժամ Իռիս երագաթև
Ունկն եդեալ խընդըրուածոյն՝ եկն առ Հողմունսն եհաս [հրեշտակ:
Սաստկաշունչ Զեփիւռոսին նոքա ի տանն առեալ ակումբ՝
Խրախ լինէին ի կոչունսն. և ընթացեալ եկաց Իռիս
Առ սեամըն կըճեայս. զոր իբրև յակն արկեալ տեսին,
Յոտն եկաց բազմականն, և մէն մի զնա կոչէր առ իւր.
Իսկ նա չառ յանձըն բազմել, այլ ըզպատգամ իւր խօսեցաւ.
Ոչ բազմոց, զի զայն հետայն յՈվկիանու գնայցեմ հո- [սանս
Յերկիրն եթովպացւոց՝ ուր անմահիցըն մատչին զոհք,

Զի 'նդ նոսին լիցիմ և ես հաղորդակից ի դահամունսն:
Այլ Աքիլլէս զՀիւսիսակ և զգոչաւորըն Զեփիւռոս
Աղաչէ գընալ առ ինքն՝ ուխտեալ զընտիր ընծայս յաշտից,
Զի զխարոյկն ի բորբոքումն արծարծիցեն՝ յոր կայն եդեալ
Պատրոկլոս՝ զոր կոծին աքայեցիք համագումար: [մամբ
Ասացեալ զայս՝ ինքըն գնաց․ նոքա յարեան անհուն գոչ-
վարեալ զամպս յառաջոյ իւրեանց մեծաւ փոթորկելով:
Եւ եկին փութանակի շընչովքն ի ծով, ալիքն ուռեան
Ի բարձրաձիչ փըչմանէն, և յարգաւանդն հասին Տրոյա․
Եւ անկեալ ի խարուկին՝ մեծ գոչեաց բոցն աստուածա-
[հրատ:
Եւ զգիշերն ի բուն փըչեալ ահեղամռունչ ի փայտակոյտն՝
Հատին բոց բորբոքախառն, և զսպրդն ի գլուխ ժիրն Աքիլ-
[լէս
Կըրկնատաշտ բաժակ ի ձեռսըն յոսկեղէն ի թակուկէն
Առեալ հեղոյր գինի յերկիր, թանայր համակ զառըստորեան,
Եւ զոգի եղկելւոյն Պատրոկլոսի ձայնեալ կարդայր: [բոյ
Որպէս հայր յողբս հարկանի՝ յայրել զոսկերս որդւոյն լե-
Փեսայի, որոյ մեռեալ ըղձեք ծընողքն ի սուգ նըստոյց,
Այնպէս ողբայր Աքիլլէս յայրել զոսկերս ընկերակցին,
Սողելով առ խարուկաւն և ստէպ ըստէպ յոգւոց ելեալ:
Իսկ յորժամ եկն Արուսեակն աւետաւոր լուսոյն յերկիր,
Ոյր ըղհետ ի ծով սփռի քըրքմահանդերձն Առաւօտ,
Թառամեցաւ անդ հըրդեհն և դադարեաց բոցոյն բորբոք․
Եւ Հողմունք մեկնեցան գնացին դարձեալ անդրէն ի տուն
Ընդ Թրակեան ծովուն անդունդս՝ որ ուռուցեալ մոլեալ
[հեծէր:
Բայց ընդ այլ կոյս Պելեանն ի խարուկէն մեկուսացեալ՝
Կողմնեցաւ վաստակաբեկ, անկաւ զնովաւ քուն անուշակ:
Այլ նոքա զԱտրիդեաւ ժողովէին միահամուռ,
Որոց զինքն ոտից խօշիւն և դոռթելոյն խընձոյ զարթոյց․
Յարուցեալ նըստաւ կանգուն և խօսեցաւ առ նոսա զայս․
Ատրիդէք, և որ համուրց ևս այլ իշխանք աքայեցւոց,
Ի գինի սևաստեսակ նախ շիջուցէք զխարոյկդ ողջոյն
Ցոր վայր հըրոյն զօրութիւն տիրեաց կալաւ առ հասարակ:
ԶՄենիտեան Պատրոկլի զոսկերսն ապա հաւաքեսցուք



Ընտրելով հաւաստեաւ․ են իսկ ինքնին դիւրածանօթ,
Զի նա ի մէջ խարուկին դընէր, իսկ այլք առոշոդի
Զեղերօքն այրէին խառնիխուռն արք և անդրուվարք:
Եւ դիցուք զայնս յոսկեղէն չեչ և ի ճարպ կրկնապատիկ,
Մինչև իմ իսկ ի դըժոխըս կափուցեալ խաղաղիցիմ:
Իսկ դամբան՝ ոչ 'եթէ մեծ ինչ յոյժ գործել պահանջիցեմ,
Այլ առ անգամ մի այսչափ․ ապա և զայն աքայեցիք
Մեծատարր և բարձրաբերձ կառուսջիք դուք որ ապրիցէքդ
Յետոյ իմմէ մընացորդք ի նաւատորմըն յոգնատախտ:
Զայս ասաց, նոքա Պելեանն երագոտինն եղեն հըլու:
Նախ ողջոյն ըզխարոյկըն շիջուցին ի սևաւ գինի [տաւ:
Ցոր վայր բոցն էր ծաւալեալ, և թանձր աճիւն զիջեալ նըս-
Եւ զոսկերսն ըստլատակս հեզահամբոյր զինուորակցին
Ժողովեալ ողբովք յոսկի չեչ և ի ճարպ կրկնապատիկ,
Եւ եդեալ ի խորանին ըսքողեցին նուրբ կըտաւով:
Եւ ծրաբոլոր կարակնեալ ըզգերեզմանն՝ առ խարուկաւն
Արկին հիմն, և կուտեցին անդէն ի նմա զհողըն քըրքեալ․
Եւ կանգնեալ զհողապատեան չիրիմ՝ անդրէն եկին ի բաց:

ՀՈՄԵՐՈՍ․ Իլիական:

---

### ՏԵՍԻԼ ԳՈԹՈՂԻԱՅ

ԳՈԹՈՂԻԱ, ՄԱԹԱՆ, ԱՐԵՆՆԵՐ

ՄԱԹԱՆ

Դըշխոյ մեծ, իցէ՞ այս վայր քո տեղի․
Զի՞նչ վըրդով զքեզ դըղըրդէ, ո՞ր ահ պատէ զքեւ սարսուռ,
Ցե՞ր իրեք խընդիր եկեալ իցես ի մէջ ոստխացդ․
Յայս տաճար անվաւեր ժըտի՞ս երբեք մերձենալ.
Մերկացա՞ր յանողոք ոխութենէն յայնմանէ, ...

ԳՈԹՈՂԻԱ

Մըտադիւր ուշի ուշով ինձ ունկըն դիք երկոքին:
Ոչ կամիմ տատանիր զանցեալն ածել ինչ ձեզ յուշ,
Եւ ոչ տալ ձեզ համար զարեանցն որ իմ հեղեալ է․

Որ ինչ գամ մի արարի, Աբեններ, պարտ ինձ վարկայ:
Ոչ առնում ինձ դատաւոր ըզժողովուրդ մի ժըպիրհ.
Որ զինչ և լու զինէն յանդըգնութիւն իւր արար.
Զիս երկինք ինքնին խընամ կալան առնել անբասիր:
Տէրութիւնն իմ կառուցեալ ի չքեղաւոր յաջողմունս՝
Առաջի Գոթողեայ ծովէ ի ծով սարսեցոյց.
Ինև խոր խաղաղութեամբ Երուսաղէմ վայելէ,
Յորդանան ոչ տեսանէ զմոլորական Արուայեկն,
Ոչ ըզվէս փղըշտացին՝ աւերածոլքն անըսպառ
Վըկանդել զափունըս իւր երբ առ ձեռոլքն արքայիւք:
Ասորին զիս առ դըշխոյս և երբ ըղջքըր իւր ունի.
Հուսկ ուրեմըն նենգագործն աղխարար իմում տանս՝
Որ մինչև առ իս ձըկտէր հասուցանել զըգըժնութիւն,
Յէու, վիրադն Յէու, ի Սամարիա կայ ի դող.
Տագնապեալ ի հզօրագոյն իւրմէ գրագւոյն յամենուստ՝
Զոր դըրդել գիտացի յելուզակին այնմ ընդդէմ,
Արդ թողու զիս ի կողմանս յայսոսիկ վէհ տիրուհի:
Համգըստեամբ ըմբոշխնել զարդիւնս իմոյ հանճարոյս,
Բայց մըղձկուտ իմըն ժըխոր յաւուրց հետէ յիս բունեալ
Զիմոյ երջանկութեանս ընդ մէջ ըզթելըն խըզէ:
Երազ մի, — և Է՞ր երբէք ինձ ընդ երազ մի խռովել, —
Տըրտմութիւն ինչ ի սըրտիս ըմնուցանէ ուտել զայն.
Այոր և անդր անդուստ խուսեմ, նա 'նդ ամենայն պընդէ
Ի պահու խաւարակուռ խոր գիշերոյն արհաւրաց [զհետ.
Մայրն իմ Յեզաբէլ եկն եկաց ինձ յանդիման,
Իբր յաւուր մահուն իւրոյ, ճոխապաճոյճ պըճնութեամբ.
Զուառութիւն իւր չէր ընաւին անաւագեալ ըզպերճանսն,
Այլ ունէր և ըզգեղոյն պայծառութիւն հնարագիւտ
Յոր հոգայր նա ի ըմնգոյր և ի ծարիր շըպարել,
Ի դարման ինչ անկարկատ թըշնամանաց հասակին.
« Դողացի՞ր, ասէ առ իս, արժանաւոր ինձ դուստր իմ.
Անողորմն Աստուած Հրէից զանցուցանէ և ըզքեզ:
Ցաւէ ինձ, զի անկանիս, դուստր իմ, յահեղ ձեռսըն իւր »:
Ի վախճան զարհուրելի սոցին բանից՝ թըւեցաւ
Թէ ուրուն իւր ի կողմըն կորացաւ անկողնոյս,
Եւ ես թևըս ձըգէի փարել զնորա գիրկ ընդ գիրկ.



Բայց ոչ այլ ինչ գըտի՝ քան քըմմնելի խառնակոյտ
Ոսկրոտւոյ, շողշեալ շաղըղոյ՝ ընդ տիղմ ընդ փեռ թաւալեալ,
Գարշելի անդամամթիւս, ձըրձեալ պատառս արիւնոտւշտ,
Զոր լափլէզ շըներամն ապշոպէին ի միմեանց:

ԱԲԵՆՆԵՐ

Մեծդ Աստուած:

ԳՈԹՈՂԻԱ

Ի սոյն շըփոթ՝ աչաց իմոց երևի
Մանուկ մի մատաղ ի պատմուճան լուսերանգ՝
Որպիսի երբայեցւոյըդ քահանայք ըզգենուն:
Տեսիլ իւր զարթոյց ըզնըւաղեալ ոգիս իմ.
Իսկ երբև ի միտս եղեալ ի մահաբեր աղմըկէս
Պըշնուի 'նդ հեզ և ազնիւ պարկեշտադէղ երեսս իւր,
Ըզգացի յեղակարծումն արիւնարբու պողովատ՝
Զոր նենգողն եհար մըխեաց ցիրախակողն ի կըշտիս:
Այնչափ ինչ գունակ գունակ իրաց խառնուրդք այլանդակ
Կըցկըցուն դիպաց յօդուած թերևըս ձեզ թըւեսցին.
Ես ինքնին առ ժամանակ մի յամօթոյ երկիւղիս՝
Արդասիս համարեցայ տըխըրատեսիլ գոլոշւոյ:
Բայց հոգիս իմ դերևալ ի յիշատակս այդոցիկ՝
Երկիցս անգամ ի քուն ըզնոյն տեսիլ յերազեաց,
Երկիցս աչք իմ տըրտմագինք տեսին հանդէպ նըկարեալ
Ըզնոյն ինքըն զայն մանուկ՝ միշտ ի խոցել զիս յորդոր:
Խոնջ ուրեմըն յորոց զիս խուճապէին արհաւիրք՝
Առ Բահաղ գնայի յաղերս՝ զի հըսկեսցէ ի կեանս իմ,
Եւ առ յոտըս սեղանոյ իւրոյ հանգիստ ինձ խընդրել.
Զինչ մըտաց մահկանացուացս՝ ոչ գործիցեն ահափետք:
Ի տաճար այսըր Հրէից մըղեաց ազդումն իմըն զիս,
Եւ անկաւ ինձ ի սիրտ զԱստուած նոցին առնել հաշտ:
Ընծայիւք ցածուցանել համարեցայ զցասումն իւր,
Թէ Աստուածն այն, զինչ և է, գայցէ նըքիմէք ի համբոյր:
Քըրմապետըդ Բահաղու, մի՛ գըներ մեզ հիքութեանս.
Մըտանեմ. Ժողովուրդըն փախչի, զոհն առնու դուլ.
Քահանայն մեծ յիս դիմէ սըրտմըտութեամբ մոլեգին.
Մինչդեռ ինքն առ իս խօսէր, ով հիացումն, ով երկիւղ,
Տեսի զնոյն ինքըն մանուկ ընդ իս մահու սպառնալից,

Որպէս ահեղ անուրջքն ի միտս ըղձոյն նըկարեաց.
Տեսի զնա, նոյն կերպարանք, նոյն և հանդերձ կըտաւի,
Ճեմելիք ոտիցն և աչք, նըկարագիր համօրէն.
Նոյն նա է։ Զոյգ առ մեծի քահանային ընթանայր.
Բայց իսկոյն անհետ ըզնա յաչաց իմոց արարին։
Ահագին է վըրդովումն որ զիս աստէն սոսկալէ կալ։
Եւ խորհուրդ ընդ երկոսին ձեզ հարցանել կամեցայ։

ՌԱՍԻՆ. Գոթողիա։

---

## ԳԵՐԵԶՄԱՆՔ ՀԱՆՃԱՐԵՂԱՑՆ ՅԻՏԱԼԻԱ

Ի սըրբազան ագարակ Սըրբոյ Խաչին պարագիր
Հանգչին աճիւնք՝ որք ըզվայրն իսկ յարդարեն սըրբազոյն.
Անմահութեամբ իմըն լի է խաղաղեալն այն մոխիր.
Թէպէտ չիցէ այլ ինչ անդ բայց յիշատակ անցելոյն,
Եւ խուն նըշխարք վեհազանց ի վիհ Թօհկեցն անկելոց.
Միքանճելոյ աստանօր ու Ալֆիերեայ ոսկրոտի,
Եւ աստեղաց հետահան Գալիլէոյ աստ դընի,
Եւ տառապանք իւր ընդ իւր. դառնայ ի հող աստ կըրկին
Մաքիաւելեայ հողն, ի վայր՝ յորմէ առաւըլն նախկին։
Սոքա հանճարք չորեքին քառից տարերց հանգունակ
Յարուցանել համօրէն ազգ նոր՝ լըցեն բաւական։
Իտալիա՛, թէպէտ բիւր ած քեզ աղէտս ամանակ
Զարքայակերպըդ գըձձեալ զարդու փառաց պատմուճան,
Սակայն զլացաւ և զլասցի շնորհել այլոց աշխարհաց
Հանճարս՝ առոյս խոյանաց յաւերժակաց իսկ միջոյ.
Անմահութեամբ տոչորեալ է տակաւին և եղծ քոյ,
Յորմէ փայլք քեզ հատանին վերակենդանք վառ ի վառ.
Այսպէս ոք Կանովա նախնեաց վեհից զուգափառ։
Այլ ո՞ւր արդեօք հանգիցեն ետրուրացիքն երեքեան,
Տանդէ, Պետրարք, ուռչ նըւաղ ինչ կամ կըրսեր ի նոսին
Ըստեղծագործն այն հանճար ուարձակ բանին երգահան,
Այն՝ որ զըրոյցըս հարիւր վիպասանեաց սիրային. [րակ,
Ո՞ւր արդ ոսկերքն այն հանգչին վեհք քան ըզկաւս հասա-



Մեծք ի մահու իբր ի կեանս. միթէ դարձա՞ն ի փոշի,
Եւ չունիցի՞ ըզնոցանէ կիծ հայրենեաց բան յուշի։
Հի՞մ ոչ հատին քարահատք՝ նորուն արձան կիսանդրի.
Որդեական հող նոցին չաւանդեցա՞ւ մօրն երկրի։
Ապաշնո՛րհ Ծաղկաւան. Տանդէ նընջէ հեռ՝ ի քէն
Սկիպիոնի նըմանեալ ի ծանակիչ քեզ ափունս.
Հերձուածք և վէճք որ ի քեզ՝ քան քաղաքի մարտից քէն
Արտասահման արարին ըզքերթող, զայն՝ զոր անուն
Որդիք քոյին և թոռունք զուր պաշտեսցեն հանապազ՝
Խայթեալ խըղճիւ հնացելով. նա և պըսակն ինքնին արդ
Զոր Պետրարքեայ ուր ուրեմն էառ ճակատ դափնեզարդ
Յերկիր բուսեալ է օտար. և կեանք նորին և համբաւ
Եւ գերեզմանն իսկ դըրժեալ՝ ի քո հող ոչ ձօնեցաւ։
Պոգաչչեոյ աւանդեալ ըզհողն՝ յերկիր հայրենեան.
Ո՛չ աւասիկ յաւագաց միջի կայցէ յանդորրու,
Եւ քաղցր և վեհ չընչիցեն մաղթանք հոգւոց հանդըստեան
Յայն՝ որ ըստեղծն ըզտուսկեան յուշկապարիկըն լեզու,
Գուսանութիւն զայն ինքնին, որոյ և ձայնք՝ երգք իսկ են,
Եւ քերդութիւն է բարբառն։ Այլ և զնորին իսկ դամբան
Հար տապալեաց ի զայրոյց նախանձամոլըն բորեան.
Զիք արդ նըշմա տեղի ուռչ ի սինըքոր գերեզմանս,
Զի մի ուրուք ծանուցեալ հանցէ և գոյն հառաչանս։
Եւ Սուրբըն-Խաչ ի վեհից արդ մոխրոց զուրկ է նոցին.
Եւ յաղագս այսր իսկ զըրկման քաջ ևս լինի նըշաւակ.
Իբր յերախանս կեսարուց՝ բարձեալ Բրուտեայ կիսանդրին
Ածէր քաջիկ ևս ի յուշ ըզՀռովմայ 'նոտրն այն զաւակ։
Քեզ երանի՛ Հռաւեննա, զի տարագիրն այն անմահ՝
Նընջէ յեզերդ հին՝ յակառըն պետութեան զաղփաղփուն.
Այլ երանի՛ և Արկուայ, որ ամբարեալ պանծայ բուն
Նըւագաւորըս նըշխարս՝ պահեալ սիրով ի գիրկս իւր.
Մինչ Ծաղկաւան զարտալած մեռեալըն հայցէ յողբ ի զուր։
Առ իմ ըլրդունքդ այդոքիկ ի պատուական ի քարանց,
Պորփիւր, յասպիս և ակատ, ընտիրք կըճեայց և գոհար,
Անփոյթ պահել զոսկրոտի վաճառական դըքապանց.
Ո՛չ աւանիկ դիւրալոյծ կայլակ ցօղոյ ամպավար
Յերեկորնեայ աստեղց վառք ախորժ ըղփաւեն զովութիւնս

Մանուածաւալ ի մարմանդ որ զմեռելոց պատէ զհող՝
Ոյց լոկ անուանքն առ Մուսայս են մահարձանք և կոթող։
Ո՞չ աւանիկ խորագոյն անդ յարգութեամբ ձեմք լինին
Քան ի շիրիմըս յըղկեալս որ ծածկեն զգլուխ գոռոզին։

ԼՈՐՏ ՊԱՅՐՆ

---

## ԲՐԳՈՒՆՔ ԵԳԻՊՏՈՍԻ

Ո՛վ վեհ արձանք Նեղոսի, շըքեղ տաճարք տըրտմութեան,
Զիա՞րդ ի ձեր գագաթունս յառեալ պարծին աչք մարդկան։
Զերոց գոռոզ ճակատուց լերինք ցածնուն առաջի,
Ստուերքդ անճոռնիք երկայնին ի բացարձակ ի դաշտի.
Այլ մահացու մարդ տըկար զձեր պատրաստեաց ըզծընունդ,
Նոյն եւ կենցաղ ձեզ անվերջ, զանմահութիւն անկապուտ։
Քանի՛ցս ի լայն ձեր յատին՝ նըստեալ ի խոր լըռութեան,
Զայն արձակեմ շուրջ ըզձեօք առ շեղջաշեղջն այն խուժան
Ազգաց ուազանց խուռներամ և դիւցազանց քաջայաղթ,
Զորս ունիք տարան վարեցին ի վեհ դարուց յորձնեռանդ.
Արքայք և պերճ բըռնակալք, ամիրապետք և սուլդանք
Տոհմք և սերունդք յոգնաթիւ, քաղաքանին և աւանք.
Անուանք երբեմն ահագինք՝ ցընորք են այժմ ուրուական.
Դուք և դարուց կայք դիւանք, և արքայից գերեզման.
Դուք գիտութեան գանձարանք, կրօնից և հին բարբառոյ,
Ի հիացումն, յառեղծուած, ի խրատ բարեաց իմաստնոյ։
Ընկալ արդ զայս իմ նըւէր, ո՛վ որ ի գատտ քո հըզօր
Ի վէմ նոցին հաստաբեստ՝ քան ըզպըղինձ կարծրակուռ
Քանդակեցեր զիմ ըզտաղս։ Անցէք շըրջանք անհամար,
Ծընունդք ազգաց և իշխանք, անցէք անցէք ստուերաբար.
Պարիսպս է իմ մըրցանակ, և յաղթական արկածին,
Ասեմ և ես անվեհեր. Կեցցեն իմ տաղք, մի՛ մեռցին։

ՏԸԼԻԼ.



## ՀՐԴԵՀ

Անդ ի բարձունս աշտարակին
Լըսեմք զվանդիւնըս զանգակին։
Դա փոթորկի է նըշանակ.
Շինեին երկինք արեան գունակ.
Ո՛չ, չէ այդ շուք տըւընջենի.
Ո՛հ, ի փողոցս աղմուկք քանի՛։
Ծուխ ծառացեալ յայերս յահուր
Ընդ պողոտայս բոց ընդհանուր.
Զայրանալով հողմոյ փըչմամբ
Իբր ի հնոցէ բոց ապըստամբ,
Օդք շառագնին, հեծանք ճըռնչեն,
Փըրթին մարդակք, լըւսանցք կըռնչեն,
Ճըչէ մանկտին, տագնապին մարք,
Ընդ փլատակօք մըռնչեն սպաճարք.
Համայն շտապի, խուսէ, փախչի,
Այգըն պայծառ ի ցայգ թաքչի։
Ձեռաց 'ի ձեռս շըղթայաշար
Յածի դոյլիկն անդ անդադար.
Կամարաձև 'ի վեր ըշտապ
Սըրսկեն ջըրհանք զալեաց տարափ։
Ճեպի մըրրիկն այն ամեհի,
Համաճարակ զհեա հըրդեհի,
Որոտընդոստ հարեալ լափլեզ,
Ըզչոր հեծանս, ըզմիրգս և դէզ.
Կամելով իմըն յարհաւիրս՝
Յափըշտակեալ ընդ իւր զերկիրս՝
Տանել հանել յերկնից սահման,
Աճէ ի գնալն՝ հըսկայանման։
Անձեռընհաս առ դիցըն սաստ
Յուսաբեկեալ մարդըս նըւաստ,
Տեսանէ զերկս իւր զեղծ խանգար,
Եւ զարմացեալ կայ վայրապար։
Այրեացաւեր եղև տեղին,

Մոլի մըրրկաց կարծր անկողին.
Լուսամըտից յուհայն փորոտ՝
Արդ արհաւիրք դարանին լուկ,
Եւ ամպք երկնից ի բարձանց
Կարկառին անդըր Թափանց:
Մարդ՝ ի վերայն ամենակուլ
Ընչից իւրոց՝ դառնայ սըրչնուլ.
Ցուպ ի ձեռին դիմէ շտապաւ,
Միթէ ծախեաց հըրդեհն ըմբռնաւ:...
Բափոփմնք կաթողին,
Կան մընան դեռ նըմին.
Համարէ զգլուխըս սիրելեաց.
Ողջ-են գլուխք, ոչ ոք պակասեաց:

ՇԻԼԼԵՐ

---

## ԾՈՎ.

Հըզօր է ծով, այլ հզօրագոյն որ վարէ զխեւըն կոհակ.
Ձեռըն քո, Տէր, կառոյց զափունս, պեղեաց զանդունդըն ան-
[յատակ.
Շունչդ որ խաղաց ի սկըզբանէ յերես նորին՝ խաղայ ցարդ,
Ի նոյն Թափոյ նհանջեալ ալեաց՝ գլորին յառնեն անկանին:
Ի գաւառայն անձրեւու ամպ ելեալ գընայ իբրու նախ՝
Արբուցանել զերեսս երկրի, ածել հովտաց ըզդալար.
Աշխարհք ազանց ապասեալ մընան հողմնավար լոյն հովա-
[նոյն.
Եւ ի տարափ տեղոյն՝ լըսեն խընդիւ զհըննոցն աւետիս:
Ես կարկառեալ հայիմ ընդ այդ համատարած կապուտակ,
Ուր տարմաբար ցընծան կայտառեն յարև կատարք բիւր ա-
[լեաց,
Իբր ամբոխի մեծի պարզեալք ի վեր բազուկք ծափ ի ծափ.
Դիտեմ զնաւս կըղզ՝ ի կըղզոյ, հըրուանդանէ հըրուանդան,
Մերթ տարադէմք յաշխարհ հեռի, յերկրէ հընոյ մերթ ի
[դարձ.



Հօղմ քո համբոյր՝ վարէ զնոսին, մինչ բարձեալ դան ակաղ-
[ձունք՝
Ցաղնապամալխէ ծագաց երկրի, և կենաց քաղցըր դանձուք,
Մինչև նաւաղն ի նաւակայս բերկրապատար արկեալ ձայն՝
Մագըլցելով ընդ կայմ ծըրարեալ խջուցանէ զառագաստ:
Այլ ո՞ հանդուրժիցէ ժուժկալել քոց մըրըրկաց.
Ո՞ բաւիցէ 'նդդէմ կալ շընչոյն ծովայարոյց ծովասաստ:
Արդարութիւն քո, Տէր, հասեալ հարու զերկիրս ի դա-
[րուկ,
Երբ ի տորմիղ կուռ խաղամաուղ՝ ընդ խրոխտ մկանունս
[պերճասահ,
Որ քաղաքայ տանին հըրդեհ ուսուեր անքոյթ պետու-
[թեանց,
Ցանկարծոյն Թափ շըրջապըտոյտն անկանիցի փոթորիկ.
Առագաստից Թռուցեալ ձըրձին հանդոյն վըշոյն ծըւենից.
Կայմք խորտակեալ քակտին, ընդ կողս ի վայր զեռան ձող-
[փան վէժք.
Ահեղ նոցին մենքենայք հոսին յանդունդս անյատակ.
Եւ ջոկք մարտկացըն վառելոց ի զարդ զինու ճակատուց՝
Ցորձանացոյզ կոծեալք կամ դի ցուրտ ի պարիխս ընկե-
[ցիկք:
Ցայնժամ ազինք աչաբեկք դուլ տան առ մի վայր ի կըռուոյ:
Ալեքդ անդուլք ծախեալ մաշեն զափունս երկրի հինաւուրց.
Դաշտք արգաւանդք զեղուն ի մօրս, տապալ գընին սարա-
[ւանդք,
Ամբոխք ծովուն վարեն զուաղ ի շինամէջս աղողակ.
Մինչ ի բացի անդր ի կանաչ միջածովուն ի սենեակ,
Ուր լայնափիւռ ծաւալին ջուրք և խորագոյնս սուզի լար,
Ուր ի քընին գործոց քոց, Տէր, չժամանէ ակն հետազօտ,
Անդ դու մարզես զօրդըն բըստոյ կանգնել զխարակս իւր
[բստուարս,
Անդ ջուրբք ցօղեալ կառուցանէ դարուց ի դար զեւր շի-
[նուած.
Մինչև բարձցէ 'նդ մըկանունս ծայր՝ կալ ամբարտակ ձիգ ա-
[լեաց,
Ուր բեկեալցըն հարսաց փշրել ցեղերս Ցարօնոյ:

Դու տաս հրաման կրակաց ի խորս ովկիանու շիջանուլ՝
Պարզել ի վեր նորակառոյց լերինս, կանգնել գագաթունս,
Ի տեղի ապաստանի մրրրկակոծ երամոց:
Հաւք և ծըփանք ալեաց ածեն ժայռից ըզխոտ և ըզծառ.
Խաղան աղբերք կարկաջահոս, շրքթեն սըզըխք ըզլըճակս՝
Որք ի խոռոչս անդ խաղաղին շուրջ ի բոլոր ծաղկածիլք:
Դու հայեցեալ յարարս քոյին և ասացեր՝ Բարի է:
Քեզ հովիտք լուռք փառըս տան սըքանչեալք ի գեղ ամարան.
Եւ քեզ մայրիք՝ յովկիական հողմոյն շարժըլեալք ի շառաչ՝
Ընդ գանչերոց ափանցն յաւերժ վերամբոյնեն երգս յաւաչ:

ԳՐԱՅԷՆԴ

---

ՁԻ

Նոյն նըման և ընտրութիւն է ձիականըն պաճարի:
Զոր գամ մի զատուցանես ի յոյս աղըխնդոլ պայազատս,
Անդըստին ի տղայ տիոց հոգ մեծաջան խնամոյ տարջիր:
Նախուստ իսկ մըտրուկ քաջազն երիվարի ելեալ ի դաշտ
Ուղղաբերձ սօս ընթանայ, զաքըլն թեթեւս առնու դընէ.
Ջեռներէց ի ճանապարհ և սպառնալից ուղխից ի փորձ
Դիմագրաւ նաւատակի և յանծանօթ գիպեալ կամուրջ.
Ի խըրտուիլ սուն ոսսաւիւն՝ ոչ սոսկալի ահիւ շըրթնու:
Բարձրավիզ և գըլուխնուրբ, սուղ որովայն, գաւակ առոյգ,
Եւ արի կուրծք քաջալանջ ի թանձրամիս թամբ յօրանայ:
Թոյր ընտիր՝ շէկ և պիսակ, իսկ յուեգոյն՝ գորշ և աշխէտ:
Իսկ և իսկ եթէ երբեք շաչիւն զինուց հընչէ հեռուստ,
Ոչ գիտէ հանդարտել, ականջք կանգուն, անդամք ի դող,
Եւ ընդ քիթս ըզմըլթերեալըն փոընչելով մըրրրկէ բոց:
Բաշքըն թաւ և զաջ ուսոյն իւր ազատուսմբ անկեալ խա-
[զան,
Եւ կըրկին ընդ թիկնամէջն ողունք ելեալ սըփռին ի վայր,
Եւ թաթուղ սալասըմբակ գոփեալ թընդայ գավր հաստանէ:
Այսպիսի էր յամիկլեան Պոլիդեկեայ նուաճեալն ի սանձ
Կիլլարոս և զոյս հելլէնըն յիշատակեն երգարանիչք.



Եւ ամոլք երիվարացն Արեայ և կառք մեծն Աքիլլի.
Ի սոյն տիպ և ինքն ըզըաշն ի ձիակերպ արկ ուլանէն
Զըրուանըն սուր ի փախուստ ի հասանել գալ ամուսնին,
Եւ ի խոխոզ խըրխընջիւն ելից ըզբարձըրն Պելիոն:

ՎԻՐԳԻԼԻՈՍ. Մշակականք:

---

ՕՁ ԵՒ ՎԻՇԱՊ

Ուսիր վառել ի փարախս և եղեւն ըզհօտեան,
Եւ զկիշապըն ծանուսս ի քաղբաննեան վանել ճենճեր:
Բազում այն է զի 'նդ անշարժ մըսրովք գըժպնհ իժ հարկա-
[նող
Դարանեալ՝ և զարհուրեալ յերկնից լուսոյն գնայ ի կորուստ.
Կամ թէ սովոր մըտանել օձ ընդ յարկաւ և բատուերաւ,
Անդէոյ ժանտ ժըպիրհ, և ի թափել թոյնս ի հօտին, [ի բիր,
Ընդ հողով բունէ, բուռն հար, հովիւ, ի վիրգ, հար բուան
Ըզխրոխտողն ըսպառնալից և զփըքացեալ շըչող ուլամըն
Հալածեա, զգլուխն ահաբեկ ի խորս աճա թաքոյց ի խոյս,
Մինչ աղխք ողին և գումարտակ ոլորտապատ վէտ վէտ ոլ-
[տան
Լուծանին, և զյամր ոլորս ընդ քարշ ածէ յետին պարոյր:
Է և այն որ ի մայրիս Կալաբրացւոցըն չար վիշապ
Ուղղաբերձ կանգուն լանջօքն հոլովելով թեփոտ թիկունս
Եւ երկայն փոր խայտաբղէտ ի մեծամեծ նիշ նըկարէն.
Որ յորժամ գետք յաղբերաց բըխեալ յորդէն, և մինչ եր-
Ի տամուկ թանայ գարուն և հարաւովք խոնաւական, [կիր
Բնակէ ի լիճս և նըստեալ ամպարըշտին անդ առ եզեր՝
Զըկամբք և շաղակրատ գորտովք լընու զըըժոխ որկորն:
Իսկ երբ խաղըն կիզեալ և ի տօթոյ պկալի գետինն,
Ի ցամաք վազեալ կայտառ և աչս ածեալ շուրջ բոցավառս՝
Ցանդըս մոլի պապքով գըժնեայ և ի տապոյն զազանացեալ:
Քաւ լիցի ներհել յայնժամ ինձ ընդ երկնաւ քուն քաղ-
[ցրանինջ.
Քաւ յորսայս յոյն անկանել ըզխոտաւէտ թիկամբ մայրեաց,

Մինչ նա զխորխն ընկեցեալ՝ նոր մանկութեամբ պայծառա-
[փայլ
Ման առնու, կամ ըզկորիւնն ի տան թողեալ և կամ զձուս,
Բարձրավիզ՝ և եռասայր լեզուք ի շուրթն յարև շողայ։

ՎԻՐԳԻԼԻՈՍ․ Մշակական։

---

### ՊՕՍ ՕԶ

Պօս դանդաղ ի ձմերան, յամարայնի եռանդուն,
Ժամանակին նշանակ, և Ասկլեպեայ սիրասուն,
Ամերիկեան անտառաց սէգ հինաւուրց բռնակալ,
Գարշ և զազիր յՆերոպէ, յԱփրիկեցւոյն պաշտեցեալ։
Հիւր է հընդկին և պահպան բազմատեսակս այս վիրագ,
Ծապուկ ի սող և ի լող, ի վազս ի թռիչըս երագ։
Մերթ դարանի յոձ անդոյ, ուր մակաղին մերձ գաւինք
Ի լուր երգոց հովուեկին հընչեալ յախորժն ի սըրինգ,
Յանկարծ վաղեալ ի վերայ՝ պատէ զորսոյն յամենուստ,
Հեղձամըղձուկ ջախջախէ, անդէն լափէ անփախուստ.
Եւ մերթ յանդունդն յարձակեալ ի կենդանիս ամէհի,
Զեղն և ըզկովլ կըլանէ զուր խուճապեալս առ ափի։
Հաւք՝ ի նմանէ սարսափին, սարսէն զեռունք, առիւծունք.
Է զի նորա կուր լինին վագերք անգամ երագունք։

ՏԸԼԻԼ

---

### ԱՄԱՐԱՍՏՈՒՆՔ Ի ԲՐԻՏԱՆԻԱ

Այսպիսի հրաշակերտ և բարեգութ օթևան
Բրիտանիկըն՝ սէգ ի սիրտ և ի հանճար խորագգաց՝
Փոյթ յուրոցըն սիրելեաց կազմէ երբեմն ի հանդիստ
Ի համբաւեալ ամարաստանս իւր, ուր ամբիծ ըզմայլումն
Ընդ լըսելիս իմ և ընդ աչս ի ներքս ի յիս ներգործէ։ [վեր,
Յանկարծ բարձեալ տանէր ոք զիս ի զուարճալիս անդր ի



Ի տեսարանս անտառայինս ի լայնասփիւռ դըրգարանս.
Յանկարծ ի գործ դալարագեղ նըստուցանէր ոք զիս անդ,
Ի մենաւոր նըսեմստուեր պատըսպարանս յայնոսիկ,
Ի մէջ հովտացն այնոցիկ, ի գագաթունս անդ բըլրոց,
Ուր ոչ եհար պատերազմիկ տապար ըզգուարթ հովանիս,
Եւ ոչ ընդ վայր խընդրեցին հիւրք նոցին անդ հաւք զիւ-
[րեանց բոյն.

Ոչ խաբեցաւ գարուն տեսեալ անհետ զանտառ իւր ծանօթ,
Զոր սաղարթիւք իւրովք դառնայր կանաչագեղ զարդարել.
Լոկ ի ձեռին ժիր մըշակի ցոլեալ երկաթ սայրասուր,
Ողորկատարր առնել զարօտ, և հըմտօրէն ըզկողերս
Հեռատտանեայց տեսլեանց ի բաց յօտել զարգելս յանդը-
[գունս։

Նրբայթք ակնահաճոյք, անակընկալ պատահմունք,
Ուղիք չըքնաղք, հովանաւոր բազմոցք և այրք հովասունք,
Վըտակք համբըք գանդաղաքայլք ընդ ծաղկաւէտ դալա-
[րիս,

Որոտընդոստ ուղխք ի ժայռից դահավիժեալ ի բարձանց,
Քարաժայռք՝ յորըս վըսեմ տըպաւորեալ արհաւիրք,
Դաշտ և ծաղկոց, արուեստ շռայլեալ և գեղջկային պար-
[զութիւն.

Հունձ ծածանեալ, և բարձրաբերձ ընդ ափափայս այծք ի
[կախ.

Հովիտ հընչեալ ի բառաչ, հընչեալ և բըլուր ի մայիւն.
Կամարաձև ընդոստուցեալ զալեօք կամուրջ վիմարդեայ,
Տաճար ծառոց անդ ի միջի սպիտակափայլ երևեալ.
Տարաշխարհիկ տերևեալ բոյսք՝ զամերիկեան հովանի
Ի Բրիտանեան արկանելով յերկիր, և ոտք՝ երգարանք
Հատեալ այլոց հաւուց ի բնէ, եղեալ մերոցս հիւրընկալ.
Ի բազմօստեան եղն ի յեղջերըս պարծ ճեմեալ ընդ անտառ,
Ըստէպ ըզգըլուխ իւր շըրջելով յետոյս ի քեզ ակնարկու։
Թիավարեալ կարապ ոսկըն թևճակօք ընդ ալիս,
Հերձանելով զարծաթափայլըն լիճ ի վիզ կորովի.
Երէոց իսկ ըզգացեալ ըզգեղ վայրացն այնոցիկ,
Եւ հիացմամբ փարեալ հոլմոց ի գագաթունըս մայրեաց.
Ո՛հ, ընդէ՞ր չիցէ և ինձ հանդարտաքայլ առնուլ անդ

Ճեմ ընդ ուղիս, և վարսագեղ ոստոցըն գիրկս ընդ երեսս
Արկելոց՝ պատըսպարել ընդ հիւրասէր հովանեաւ,
Եւ հազիւ զաշխարհական լսել մըրրիկ ի հեռուստ,
Զերարեալ զազգըս, խորտակեալ ըղձադ և զցուպ արքունի:

ՊԻՆԴԵՄՈՆԴ

---

# ՊԱՏՄԱԿԱՆՔ

---

## ԱՐՏԱՔՍՈՒՄՆ ՆԱԽԱԾՆՈՂԱՑՆ Ի ԴՐԱԽՏԷՆ

Հրեշտակն առ Ադամ կըրկնեաց և նա զյետին նըւագ...
« Իջցուք արդ ի բարձանց աստի դըլխոյ դիտանոցիս,
Քանզի ժամն եկեալ հասեալ ըստիպէ զմեզ գընալ աստի:
Տես ահա պարեկապանք կարգեալ յինէն բանակ ի բոլորդ՝
Ըսպասեալ դէտակն ունին ակնարկութեան՝ խաղալ գընալ:
Առաջոյ նոցա սաստիկ ճօճէ սուսեր մի բոցավառ
Ի նըշան տարագըրութեան. չիք մեզ հըճար այլ ևս յամել:
Երթ աղէ զարթո զԵւա. իմ հանդարտեալ և զնա ինքնին
Քաղցրաբուն բարեգուշակ իմն անըրջովք և պատրաստեալ
Զոգին ևս զամենայն ի ցածնագոյն հնազանդութիւն:
Ի պատեհ ժամու գիցես ի մտի ևւրում զոր ինչ լըւարդ,
Մանաւանդ որ ինչ արժանն է հաւատոց նորա գիտել,
Ըզմեծըն փըրկութիւն մարդկան ազին՝ ըզհանդերձեալն
Ի նորա գալ զաւակէն, ի զաւակէ անտի կընոջ:
Կեցջիք կեցջիք, ի հաւատըս համամիտք, երկայնաւուրս,
Թէպէտ և տըխրազգածք վասն առաջին չարեացն անցից,
Սակայն մեծ ևս ըսփոփեալք ի յոյս ելիցն երանական»:
Լըռեաց նա, և երկոքեան ի ստորոտ անդր իջեալ բըլրոյն,
Ընդ հասանելն ընթացաւ Ադամ յառաջ ի հովանոցն
Ուր ի քուն կայր Եւա, սակայն արթուն գըտաւ անդէն,
Եւ ընկալաւ զնոքըն բանիւքս որ այլ չէին ինչ տըրտմալիցք.
«Ուստի գաս և ուր էիրն երթեալ՝ գիտեմ ես զամենայն,
Զի է Աստուած և ի քուն, և երազովք ուսուցանէ.

Բարեշնորհս ինձ առաքեաց զնոսա գուշակ մեծ բարութեան՝
Այն ինչ ոլորեալ և յոգւոց նեղութենէս անկայ ի ննջս:
Այլ այժմիկ՝ առաջնորդեա ինձ, ոչ ևս այլ յիս դանդաղանք·
Ընդ քեզ գնալ՝ է մնալ աստէն, իսկ աստանօր առանց քո
Ելանել է աստի յակամայ կամօք բռնաբար: [մնալ՝
Դու վասն իմ ես ամենայն ինչ ընդ երկնիւք, դու բնաւ տեղի,
Որ վասն իմոյ կամաւոր մեղացս աստի գնաս տարագիր:
Բայց աստուստ բարձեալ բերեմ ինձ մխիթար զվերջին զայս [յոյս,
Զի թէպէտ և ամենայն ինև կորեաւ, այլ շնորհ մեծ
Ըստ ոչ իմում արժանի պարգևեցաւ ինձ ձրիաբար·
Ինև զաւակն աւետեաց նորոգելոց է զամենայն »:
Զայս ասաց մայր մեր Եւա, լուաւ Ադամ ուրախութեամբ,
Սակայն չետ պատասխանի, հրեշտակապետն մերձ կայր [յոյժ,
Եւ ի միւսմէ լեռնակէն քրովբէախումբն լուսադունդ
Գային իջանէին ի սահմանեալ տեղին իւրեանց,
Զեռային հրաբերձական իմն երեւոյթ յերեսս երկրին,
Իբր ի գետոյ ցոլեալ մէգ երեկորին՝ սողեալ յեղուկր
Սուրայ գնայ, գրաւէ զգետինն՝ հողագործին հետոցն ըզկնի
Ի դառնալ նորին ի հիւղ: Գային առաջեալ ահեղ ճակատ,
Յառաջոյ սուր Տեառն ի ծօծ փայլատակեալ բոց զայրագին
Զօրէն վարսաւի, և ի շողիւնս իւր տապախառն
Եւ ի շոգին հանդունակից լիբիական հրակէզ օդոյն՝
Սկսանէր աղաղել ըզհեշտախառն երկիր դրախտին:
Զաւարթնոյն յայնժամ ճեպեալ ըզծնօղըս մեր տարտամն՝ [առ ըզձեռացն,
Եւ տարեալ ուղիղ յարեգ դուռն և անտի ևս հետ ընդ հետ
Ցըլեռնոտն՝ ի ստորակայ դաշտն, և եղև աներևոյթ:
Ի թիկունս հայեցեալ կոյս, յարևելից կողմըն դրախտին՝
Որ երբեմն երանաւէտն էր գըրգարան և հանգըստոց,
Տեսին զայն վէտ վէտ շողեալ ի շանթեռանդըն սուսերէն·
Դուռն էր խըռնեալ ահագնացայտ կերպարանօք և հրազի- [նուք:
Արտասուս ինչ բնականս հեղեալ նոցա՝ ջընջեցին փոյթ·
Տիեզերք համօրէն աչաց իւրեանց կայր առաջի՝



Ընտրել տեղի հանգըստեան, և Տեսչութիւնն էր առաջ- [նորդ:
Ձեռն ի ձեռն հանդարտընթաց և դանդաղուն ի քայլս ոտին՝
Զամայի ճանապարհն իւրեանց կալան գնալ ընդ Եդեմ:

ՄԻԼՏՈՆ

---

## ՄԱՀ ԱՐԵԼԻ

Ամպք թօնընկէցք յահեղ շանթից ի դուպար
Ըստուերախիտ զերկնիւք սփռեն քօղ խաւար,
Աւերածուք հորիզոնին ի ծագաց
Աղջամըղջինք ծաւալին թեւք մըրըրկաց·
Ընդ հողմակոծ ծայրից ծառոց ոստափիւն
Վայրագ վագեր ըսպառնալեաց մռընչիւն,
Խառն ընդ ձայթմունըս կայծականց հեռաւոր
Յարուցանեն յերկրի տագնապս ահաւոր:
Պարտոխաթափ Կայեն քինուն դըժոխոց
Ժանտ յապաժոյժ քըրտանց թացեալ դէմս և ծոց,
Յերկնատեղացն յառեալ ի հուր՝ յեց ի բահ,
« Հիմ շանթահար, գոչէ, չառնես զիս, Տէր, ա՜հ·
Ծանր են ինձ կեանքս այս, ինձ դըժոխք բացցին ո՜ն,
Գըծուծ պատառք զանձն իմ ծածկել չեն ըմբռն·
Եւ ձեռքս յամառ ի ծուխ քըրտանց եռանդուն
Յերբ գործեցին անխոնջք զերկիր անբեղուն:
Կընոջըս ծոց ցամաքեցաւ չըւառին,
Սովալըլուկ հա՜ց, հա՜ց գոչէ մանկըտին:
Վասն իմ ոչ ինչ, զամենն եղբօրս յաջողէր,
Մանկունք նորին մարըն և հարբ գան ի վըսեր·
Ոյք ըզգեստուցն ի պաճուճանըս խըրոխտան,
Եւ անդէոց նոցին անթիւ է հօրան:
Ա՜ռ ինձ և զայս կըսկիծ· զի հուր բոց երագ
Իջեալ յերկնից սըրբէ զնորին պատարագ·
Իսկ զիս ատեան երկինք, և հուրըն ծախիչ՝
Իմ նըւիրացս և աեղանոյս է խոտիչ:

Սարսեա՜ց, երկի՜ր Աբէլ. հարից ըզքո կար,
Եւ զուարճացայց լուծեալ ըզվրէժ կամակար »:
Լռեաց Կայէն. յանկարծ ցելաւ պարզ այեր,
Ճաճանչ հատաւ մինչ արեգակըն ծագէր.
Անդէն և անդ ըզգնացս արգել մըրըրկին
Շող փայլակեաց էջ յԱբելայ ճակատին:
Ո՛հ ի ճակատ քո սուրբ, որդեա՛կդ Ադամայ,
Շնորհք լուսութեան անճառ գեղով լուսանայ,
Սըրտիւ խայտաս լիապատար հըրճուանօք
Որ սիրելեաց են Բարձրելոյն տըւեալ ձօնք.
Դաշնակաւոր սըրընգիւ քաղցըր նըւագ
Քան ըզմեղուի մԹերս ամբարոց անուշակ:
Գառանց ուլուց ըզքեւ տըւեալ դոյթ ի թինդ
Յերանութիւն հովուիդ կայտառեն մեծախինդ:
Երկիր ի տես սիրելւոյն եղ ի կաքաւ,
Բուրազըւարճ և ծաղկազգեստ ժըպտեցաւ
Գարշապարացդ առեալ տենչիւ ըզսուրբ հետք:
Իսկ նա զԿայէն տեսեալ դիմէ աչալըրկ.
— Եղբա՛յր, գոչէ, եղբայր՝ լինիմք գըրկածու:
— Ի բա՛ց, օձ չար, զինև պատի՛լ կամիս դու.
— Փութա՛, եղբայր, ի մըրըրկէս փախիցուք.
— Ի ցասմանէս մահաւանդ լեր խուսափուկ.
— Զինչ մեղայ քեզ. ահա ստացուածք իմ, ընկա՛լ.
— Վաստակաբեկ կորեայց, քան քեւ ճոխանալ.
— Կարդա՛ առ Տէր, և առաք զանդրս դըրացես.
— Ի՛հ, զիս մերժեաց Տէր, իբրու զքեզ մերժեմ ես.
— Ո՛հ, այդ նախանձ քո մեծ ոճիր է, եղբայր.
— Մեղք Ադամայ՝ որ Թըշուառաց եղև հայր.
— Կարկեա՛ց, յանդուգըն, հօ՞ր կարդաս դու անէծ.
— Եւ դու պանդըյր, ի՞նձ սատանս. վրէժ լուծցես մեծ...
Տրոփեաց դոփմամբ, կըշռեաց ըզձեռն ապերատ
Հարուած սաստիկ էջ յԱբելայ սուրբ ճակատ.
Ա՜հ, անկաւ նա, Տէր... և առ քեզ պաղատի.
Ներէ եղբօրն յետին յաչացն ակնարկի:
Այլ ըսպանչին դէմք հարկանին ի դալկան,
Կըրթի յապուշ, քըստմունք յոսկերս ընթանան,



Դողան դաստակք, պատէ զնովաւ ահ ոլխուր,
Քօղ առնուն աչք և ատամունք ըզսարսուռ:
Զարհուրագին գիսակք ի վեր դիզանան,
Սարսի խըղճիւ իբր հողմահար անդաստան:
Որոտընդոստ ճայթէ մըրրիկ յամպրոպաց.
Ձայն արկանէ Եւա. ո՜հ ձայն մօրն հընչեաց.
« Փութա, որդեակ սիրուն, զԱբէլ առ ընդ քեզ,
Եւ փախերուք ի փոթորկեալ վըտանգէս »:
Արձանանայ Կայէն ի շուրթըն ամփոփ.
Ի գիրկ պարզեալ մօրըն դիմէ սրտատրոփ.
Յահ և դալուկն առեալ սարսէ ի կոչոյն,
Ճիչ մեծ բառնայ, զօղէ ի խորըս մայրւոյն:

ՄՈԼՐՎՈԼ

---

## ՀԵԿՏՈՐԻ ԵՒ ԱՆԴՐՈՄԱՔԵԱՅ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԵՒ ԲԱՆՔ

Զայս ասաց կինըն տնօրէն, և ի տանէն Թըռեաւ Հեկտոր
Անդրէն ընդ նոյն պողոտայս ընդ հրապարակըն բարեշէնս:
Մինչ անցեալ ընդ մեծ քաղաքն եհաս ի դրունսն Արևմը-
[տեան,
Քանզի 'նդ այն էր նըմա ի դուրս ի դաշտ անդր ելանել,
Ընթացեալ անդ ընդ առաջ եկն ամուսինըն յոգնօժիտ,
Դուստըր մեծանձինն Էտիոնի Անդրոմաքէ,
Էտիոն՝ այն որ բնակէր յանտառախիտ Պլակայ ստորոտ
Ի Թեբէ Ստորին Պլակէ՝ Կիլիկեցւոց արանց իշխան:
Էր սորա դուստըրն լեալ պըղընձազէնն Հեկտորի կին,
Որ դիպաւ նըմա 'նդ առաջ, ի միասին գայր և նաժիշտն
Ըզմանկիկըն մատաղ բարձեալ ի գիրկս՝ անխօս տըղայ,
ԶՀեկտորեանըն սիրելի՝ զգեղեցկափայլ նըմանն աստեղ.
Հեկտոր ըզնա Սկամանդրիկ ձայնէր, իսկ այլք Աստիանաքսն,
Զի զոստանն Իլիոն Հեկտոր և եթ էր որ պահէր:
Հայեցեալ ընդ մանուկըն ժըպտեցաւ նա լըռելեայն.
Մատուցեալ Անդրոմաքէ կայր առ նըմին արտասուաթոր,

Եւ ձեռն ի ձեռն իւր խառնեալ՝ կարդաց զանունն և խօսե-
[ցաւ.
Ո՛վ վեհ, հողիդ ի կորուստ մատնեսցէ զքեզ, և ոչ գըթաս
Ի տղայ մանկիկդ և յիս թըշուառս՝ որ վաղ ի քէն մնացից
Քանզի վաղ ըզքեզ ընդ փոյթ աքայեցիք միաբանըր [այրի.
Դրոհ տըւեալ ըսպանցեն, և ինձ ի քէնըդ վրիպելըս՝
Լաւ է ի հող մըտանել. զի ոչ ևս այլ լիցէ սփոփումն,
Եթէ դաւ մի դու ի մահ յուղարկեսցիս. այլ ցաւք եւեթ.
Զի ոչ հայր է իմ համբուն և ոչ մայրիկ իմ մեծարոյ:
Քանզի զհայրն իմ կորոյս աստուածազարմըն Աքիլլէս,
Եւ քանդեաց ըզքաղաքըն մարդախիտ կիլիկեցւոց
Ըզբարձրադուռնըն Թեբէ, և զՀետիոնն արկ յարևէն. [իւր,
Բայց կողոպտեաց ոչ ըզնա, քանզի խըղճեաց զայն ի սիրտ
Այլ այրեաց ըզնա իւրով ամենարուեստ զինուքն հանդերձ,
Եւ շիրիմ կանգնեաց նըմա, և տընկեցին շուրջ նըշդարիս
Լեռնայինքն Յաւէրժհարսունք՝ ասպարակիրն Դիոս դըս-
[տերք:

Իմ եղբարք էին եօթըն հարազատք յապարանս անդ,
Եւ նոքա բոլորեքին իջին ի դժոխս յաւուր միում.
Զի Աքիլլէս ժիր գեւցաղն ըսպան զնոսա զամենեսեան
Առ յամրաքայլ անդեօքն և լուսակիզն օդեաց հօտիւ:
Իսկ ըզմայրն իմ ըզբամբիշն ի թանձրաթուփ Պլակայ սառ-
[րոտ,
Իբրև այսր եած ըզնա համայն իւրովքն ըստացուածովք,
Ընկալեալ փըրկանս անբաւ՝ ազատս անդրէն յետս արձա-
[կեաց,
Եւ ի տան հօրս Արտեմիս եհար ըզնա նետաղեարձ:
Սակայն դու ինձ ես ինձ հայր, Հեկտոր, և մայր մեծամե-
Եւ եղբայր հարազատ, և ամուսին զուարթածաղիկ: [ծար,
Այլ արդ եկ ողորմեա և կաց աստէն յամրոցի աստ,
Մի՛ զորդեակդ որբացուսցես և թողուցուս ըզկինդ այրի.
Կացո՛ զզօրն առ մոլաթուզն, ուր ի քաղաքս էն ելք աջող.
Եւ դըրանն առ պարիսպըս ճանապարհ դիւրամատոյց:
Զի այսր երիցս հինիւ հրոսեալ արի արանց ի փորձ մատեան,
Էասեանքն երկոքին և մեծանունն Իդոմենէս,
Եւ նոքին իսկ Ատրիդեսք և հաստաբուռն որդին Տիդեայ.



Կամ զի ոք պատմեաց նոցին՝ դժուարութեանց ճարտարա-
[գէտ,
Կամ զի միտք նոցա զնոսա խրախուսեցին շահատակել:
Եւ նըմա պատասխանի մեծըն Հեկտոր սաղաւարտաճօճ.
Եւ ինձ իսկ գըլխովին ամենայն այդ փոյթ է, կին դու,
Այլ պատկառեմ յոյժ ի տրովեանց, յերկայնատեւ և տրո-
[վուհեաց՝
Թէ խոյս տըւեալ վատաբար մեկուսեցայց ի ճակատուէն:
Եւ ոչ սիրտ իմ հրամայէ, քանզի ուսայ քաջ լինել միշտ,
Եւ ի գլուխ նախհատակաց գընդին տրովեանց կալ և կըռուել
Ի պարծանս հայրենի մեծի փառաց և իմ անձին:
Քանզի քաջ իսկ խելամուտ եմ ես ի միտս իմ և յոգիս,
Եկեսցէ երբեմն օր՝ յոր կորիցէ Իլիոս սուրբ
Եւ Պրիամոս և ժողովուրդ կորովատէգըն Պրիամու:
Այլ չառնեմ ես այնպէս փոյթ ըզմտաւոր ցաւոց տրո-
Ոչ նորին իսկ Հեկաբեայ, ուռչ արքային Պրիամոսի, [վեանց,
Ոչ եղբարցս հարազատից՝ որ բազմագունդք և քաջազօրք
Թաւալագլոր ի փոշւոջ անկանիցին ի թըշնամեաց,
Որպէս ըզքոյդ, յորժամ ոք ի պըղնձակուռ աքայեցւոց
Վարեսցէ արտասուագին՝ զազատութեանդ հատեալ զարև.
Եւ դուցէ յԱրգոս երթեալ՝ անկցես ոստայն այլում տիկնոջ,
Կամ ջուր կրեսցես յաղբերէն Մեսսէիսի կամ Հիպերեայ՝
Ըստիպեալ չարաչար և տագնապեալ ի խիստ հարկէն:
Եւ թերևս յարտօսրիջոյցըդ հայեցեալ ասիցէ ոք.
Բա՛ կինն է դա Հեկտորի՝ զօրագունին ի պատերազմ
Ի տրովեանց քաջաձիոց՝ ի կըռուի անդ զԻլիոնիւ:
Այսպէս ոք ասասցէ, և ցաւք ի քեզ նորոգեսցին [կեանդ:
Առ անձուկ առն այսպիսում ըզդերութեան թափել ըզ-
Այլ ըզմեռեալս հողակոյտ ծածկեսցէ զիս ի կափարումն,
Ըզկառաչ քո և ըզդեր և ըզքարշումըդ չև լըւեալ: [դեակն,
Ասացեալ զայս՝ տարածեաց Հեկտոր անհեղ դիրկս առ որ-
Եւ մանկիկն յետս ի ծոց գեղեցկամէջ իւրոյ սընուցին
Ճիչ բարձեալ խոնարհեցաւ՝ ի տես սիրուն հօր զարհուրեալ,
Պակուցեալ ի պղընձոյն ուլի ձիագէս գարդմանակէն,
Զահաւոր տեսեալ ճօճելն ի գագաթանց գըլխանոցին,
Ընդ որ հայրըն սիրելի և մեծարոյն ժըմտեցաւ մայր:

Եւ անդէն բարձ ի գլխոյն ըզսաղաւարտն ահեղն Հեկտոր,
Եւ առեալ զայն ի վայր՝ ճաճանչաւէտ եդ ի գետնի.
Եւ զմանկիկն սիրուն ողջագուրեալ ճօճեալ ի ձեռսն,
Յաղօթս եկաց և սաէ առ Արամազդ և առ այլ դիս.
Արամազդ և այլ աստուածք, տուք և ըզսա զիմըս որ-
Լինել, որպէս և ես, արժանափառ ի տրովացիս, [դեակ
Այսպէս հըզօր զօրութեամբ և քաջաբար տէր յԻլիոն։
Եւ լիցէ ոք ասասցէ, բամ սա քան զհայրն արիագոյն,
Ի՛ մարտէն յորժամ դարձցի և արիւնոտ բերցէ կապուտ՝
Սպանեալ զախոյեանն, և մայրն ի սիրտ իւր խընդասցէ։
Զայս ասաց և ամուսնոյն զորդեակն ի ձեռս ետ սիրայնոյ,
Որ առեալ ընկալաւ զնա ի գիրկս իւր բուրազուարթ
Արտասուախառն խնդութեամբ. առն յայն տեսիլ խան-
[դաղատեալ
Փայփայեաց ձեռօքն զնա, կարդայ զանուն իւր և սաէ.
Նազելիդ իմ, մի անչափ զլինէն ի սուգ հարցի քո սիրտ,
Զի յառաջ քան ըզհրամանն ոչ ոք ի դժոխս ընկեսցէ զիս.
Իսկ յօրհասէն՝ և ոչ զոք ի մարդկանէ կարծեմ փախչել,
Ոչ ըզվատ և ոչ ըզքաջ, յետ միանգամ ի լոյս գալոյ։
Այլ երթեալ քո ի տուն՝ քոյոց լրաց առնիջիր պէտ,
Ոստայնիդ և իլոյդ, և աղախնայցըդ տուր հրաման
Ըզգործովք գալ իւրեանց. հոգասցեն արք ի պատերազմ
Որ ծընեալքն են յԻլիոն ամենեքին, ես մանաւանդ։
Ասաց և առ ըզգըլխանոցըն ձիագեղ՝ Հեկտորն ահեղ.
Իսկ կինըն սիրայլին ելեալ անտի գնաց ի տուն, [տօսր։
Ըստէպ ըստէպ յետս հայելով և ջերմեռանդն հոսեալ ար-

ՀՈՄԵՐՈՍ. Իլիական։



## ԱՐԾԻՒՆ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ

Յորմէհետէ ընդդէմ երկնիցըն հոլովման
Փոխեաց զարծիւըն Կոստանդին, յոր սըլացաւ
Հընոյն ըզհետ ըզԼաւինիա վըտարողի.
Երկերիւր և աւելի ամօք եկաց
Թըռչունն աստուածատուր յԵւրոպեան ծայրս,
Մօտ առ լերամբքըն յորոց նախ ել մեկնեցաւ։
Եւ փետրոցն ընդ հովանեաւ սըրբանըւէր
Անդանօր վարեաց զաշխարհ ձեռաց ի ձեռս.
Եւ այսպէս փոխանակեալ հաս ընդ իմովս։
Ինքնակալ եղէ, և եմ Յուստինիան.
Եւ ի կամաց նախըն Սիրոյ՝ զոր յիս ըզգամ,
Յօրինաց բարձի զունայնն և զթարմատար։
Եւ մինչ չև եղեալ ի գործս այս ուշակալ՝
Մի բնութիւն գոլ ի Քրիստոս, ոչ աւելի
Հաւատայի, կալով ի նմին հաճ և հաւան.
Այլ օրհնեալն Ագապիտոս՝ այն որ հովիւ
Գերագոյն եղև հօտին՝ առ սեւըն կրօնս,
Իւրովք բանիւք՝ որոց հաւատս ընծայեցի,
Ուղղեաց զիս. և արդ ըզբանս իւր տեսանեմ
Ակն յայտնի, զոր օրինակ տեսանես դու
Յառարկուածն համայն զուղիղն և զանուղիղ։
Իբրև եղէ Եկեղեցւոյ ընթացակից՝
Կամեցաւ Տէր շնորհիւն իւր յիս շընչել
Ըզվեհ վաստակն՝ առ որ և զանձն ետու համբուն։
Առ Բելիսար արարի յանձն ըզզօրութիւնս,
Յորմէ եկաց աջն երկնաւոր յաւէտ անբաժ՝
Նըշանակեալ թէ ինձ ի ճահ էր հանգարտել։
Արդ աւարտ է աստանօր պատասխանւոյս
Առ հարցուած քո առաջին. այլ հանգամանք
Իրացն հարկեն զիս յաւելուլ ինչ ինչ կըցորդ.
Զի տեսցես թէ որքան դոյզըն իրաւամբ
Նըշանին ամենասուրբ շարժին ընդդէմ,
Սեպհականեալ ոմանք, այլոց ոսոխելով։

Տես թէ մրքան զօրութիւն զինքն արժանի
Արար պատուոյ, յետ Պալլանտեայ մեռանելոյն,
Առ ի տալ նորին ըզքարձ արքայական։
Գիտես կալաւ ըզբնակութիւն իւր յԱլպին
Աւելի քան զերեակ դար, մինչև զ'երեք
Ընդ երից մարտեան վասն իւր անգամ մի ևս։
Գիտես զինչ ի Սաբինեանց արար չարեաց
ՅըԼուկրետեայ ցաւս առ եօթամբք թագաւորօք,
Յաղթող գըտեալ դրացի ազանց չուրջանակի։
Գիտիցես և զոր արարն ի քաջազանց
Կըրեալ Հռովմայ ընդդէմ Պրէննեայ և Պիւռոսի,
Ընդդէմ այլոց պետականաց և հօլէլոց․
Որով Տորկուատ և Կուինտոս՝ վերաձայնեալն
Յանխնամ հերաց, և Դեկոսեանք և Փաբիոսք
Կալան անուն՝ որք խընկելիքն են ինձ յորդոր։
Ըզգետնեաց նա ըզխրոխտումն Արաբացւոց,
Որք անցին ըզկնի անցիցն Աննիբալայ
'Ի ապալերս՝ ուստի վայրէջք քըլին Պադոս։
Ընդ նովաւ պատանեկիկք՝ յաղթող գըլատն
ըՍկիպիոն և Պոմպէոս․ և խիստ ցուցաւ
Առ բըլուրն ընդ որով դու եկիր ի ծնունդ։
Ի ժամուն յոր ապա կամք եղեն երկնից
Համօրէն զաշխարհ առնել ըստ իւր պայծառ,
Ըստ կամացըն Հռովմայ բարձ զայն Կեսար։
Եւ զոր արար նա ի Վարեայ մինչ ի Հռենոս
Իզարա ետես ո՛ Էբրա, ետես և Սէն,
Եւ ամենայն որովք Հռոդան լի է հովիտք։
Զոր արար մինչ դամ մի էլն ի Հռաւեննայ
Եւ վաղեաց ընդ Հռուբիկոն՝ այնպէս եղև
Ալացաթև՝ զի չհասանէն լեզու կամ գրիչ։
Ի Սպանիա դարձոյց ըզզօրն, յետոյ ուրեմն
Ի Դուրացցոյ, և խորտակեաց ըզՓարսալիա
Զայն օրինակ՝ զ'և ջերմըն Նիլ ըզցաւն ըզգաց։
ԶԱնտադրոս և զՍիմոյիս՝ ուստի խաղացն
Ետես դարձեալ, և ուրանօր հանգչի Հեկտոր․
Եւ Պըտղոմեայ ապա ի վնաս դառաց անդրէն։



Անդուստ կայծակնացայտ եկն առ Յուբաս․
Դարձ ի վերջոյ արար ի ձերդ խըրթնին կոյս,
Յականջալուր եկեալ իւր փող պոմպէական։
Զոր արարն ընդ ծանրակիր հետևողին
Ի Դըժոխս հաչէ Բրուտոս Կասսիոսիւ,
Եւ Մոդինա և Պերուգիա ցաւըս կրեցին։
Ընդ որ զ՞ես լայ Կլէոպատրա տըխրագդեցիկ,
Որ ի գխմացըն փախչելով՝ ըզմահ յիժէ
Ճաշակեաց յանակընկալս և դառնալիր։
Ընդ սըմին վարգեցաւ յափըն կարմիր,
Ընդ սըմին այնպէս զաշխարհ եդ յանդորրու՝
Զի մեհենին Յանոսի դուռըն փակեցաւ։
Սակայն զոր նախ արար նըշանն՝ այն որ տայ ինձ
Բարբառել, և յետ առուրց ունէր առնել
Մահացու արքայութեան՝ որ կայ 'նդ իւրև,
Դոյզն և մռայլ կերպարանի ի տեսանել
Եթէ ի ձեռն ակնարկեսցի երրորդ կայսեր,
Լուսափայլ ականողեօք և սեռն ի սէր։
Զի կենդանին Արդարութիւն՝ որ ինձ ազդէն,
Ընձեռեաց իւրով ձեռամբ զորմէ խօսիմս
Փառս այնմիկ՝ խընդրել ըզվրէժ սըրտմըտութեանն։
Այլ աստէն ըսքանչացիր ընդ որ յարեմս․
Անդուստ խաղաց ընդ Տիտոսի լընուլ ըզքէն
Վրիժապարտ վաղընջական եղերանաց։
Եւ յորժամ զԵկեղեցի ատըր խածատեաց
Ատամըն Լոնգոբարդ՝ ընդ իւր թևովք
Կարոլոս Մեծն յաղթանակեալ՝ օժանդակեաց։

ՏԱՆԴԷ․ Արքայութիւն։

## ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՏԱՆԿՐԵԴԵԱՅ ԸՆԴ ԿԼՈՐԻՆԴԱՅ ԵՒ ՄԿՐՏԵԼ ԶՆԱ Ի ԿԱՐԵՎԷՐ ՄԱՀՈՒՆ

Բայց արդ ուանիկ հասեալ ժամուն մահաբերի
Զի կենացըն վախճան ճակատագրեալ Կըլորինդայ ։
Սայրասուր մխեալ քաջին զերկաթն ի ծոցըն գեղանի
Մըտանէ խոր ի ներքս յագեալ յարեանն արբեցութիւն ։
Զերմաջերմ լըցան ի գետ համայն հանդերձքըն ոսկեհուռ,
Դեռաբուսիկ որ զըստինսըն պընդէին գիրգ և փափուկ ։
Ըզգացեալ անդէն կուսին ըզմահաբեր հարուածն յինքեան
Ծընկօք կըթուցելովք կայր թալկացեալ ոգի զօդուով ։
Իսկ յառաջ զօրավարին վարեալ անձին ըզյաղթութիւն
Եւ ոտընհար ըսպառնալեօք ձըգէ յերկիր ըզկոյսըն խոց ։
Զև յերկիր թաւալեալ ի հեծեծանս ախողորմ
Ըզվերջին խօսըն մընչէր նորոգատուր ազդմամբ հոգւոյն,
Հաւատոյ՝ յուսոյ՝ սիրոյ, աստուածածիր պարգև շնորհաց,
Զի հանդիցէ յաղախնութիւն ըստամբակեալն ընդ կեանս
[յամայր ։
« Յաղթեցեր, բարեկամ. թողեալ իմ քեզ, թող ինձ և
[դու.
Ոչ մարմնոյս ոխութեան, այլ ո՜հ, աւաղ, հոգւոյս իմ լոկ.
Դու ընդ այնր աղօթեա՝ մըկըրտութեամբ սըրբեալ ըզմեղս» ։
Այդպիսի մեղմ մըրմունջք ողոքանօք հընչեալ ախորժ
Գորովէն ըզսիրտ քաջին, և անցուցեալ զըրտմըտութիւն
Լուծանեն զականողիս յորդոր ի լալ և յարտասուս ։
Ոչ հեռի ի վայրացն անդ ի ծոցոյ բըղխեալ լերին
Յորձանօք խոխոջաձայն վազէր գընայր վըտակ փոքրիկ ։
Փութացեալ անդէն քաջին լընու ի ջուր ըզսաղաւարտն
Եւ դառնայ տըխրադըժեաց յըսպասն ի մեծ բարեպաշտօն ։
Այլ ըզճակատն անծանօթ այն ինչ պարզեալ և նըշմարէր,
Ըզդողանի ձեռքն հարան՝ կայր ըզտեսլեան արձանացեալ
Անբարբառ ի լըռութեան, քանզի ետես անդ և ծանեաւ ։
Ո՛վ ծանօթութիւն, ո՛վ հանդիպումըն տեսութեան ։
Այլ ի պահուն զօրացեալ բոլոր ուժով պինդ ի սըրտին



Կեայր ժուժայր տակաւ ի կեանս, և օգտեալ ընդ վըշտս
[ոգւոյն,
Զոր մահացոյցըն յերկաթ՝ փոխել ի կեանս փութայր ջըրով ։
Այն ինչ քաջին աւարտեալ եռանդագին զաղօթսըն սուրբ,
Կոյսն առ խնդ լըցեալ սըրտին ժըպիտ յերեսըն փայլե-
[ցոյց ։
Եւ ասել թուէր ի մահուն թեթևաթռիչ և բերկրալիր՝
Ահա բանին ինձ երկինք, խաղաղութեան գընամ զուղի ։
Դալուկըն գեղեցիկ մածեաւ յերեսըն ձիւնափայլ,
Շուշանին որպէս ի փունջ խառըն յեռեալ թէ մանիշակք ։
Բևեռեալ ունէր յերկինս զարտևանունս ականողեաց,
Եւ երկինք ընդ արևու խանդաղակաթ թուէին հայել ։
Յըրտագին ըզմերկ ձեռն յասպետն ի վեր անդր ամբար-
[ձեալ
Եւ գըրաւ ընդ բանից մատուցանէր խաղաղութեան ։
Այսպէս ի քուն զերդ յանդորրու կոյսըն հանգեաւ հըրա-
[շագեղ ։

ԴԱՍՍՈՅ. Երուսաղէմ ազատեալ ։

---

## ԿՈՄՍՆ ՈՒԳՈԼԻՆ

Արդարև մեկնեալ էր մեր առ ի նմանէ՝
Ի՛ ահա տեսի զոյգ սառնամածս ի մի խոռոչ,
Որպէս զի գլուխ միոյն միւսումն էր գըլխանոց ։
Եւ զերդ ըզհաց ոք առ քաղցի լափեալ ուտէ,
Հանդոյն մըխեաց վերինն ի միւսըն զատամունս,
Ուրանօր կըցի ուղեղն ընդ ծոծրակին ։
Ոչ այլազգ բընաւ Տիդևս էառ կըրծել
Զկրանունս Մենալիպպեայ առ քինալոյն՝
Որպէս առնէր նա ընդ կառափն և՛զ այլն համայն ։
Ո՜վ որ այսպոյն վայրենամոլ ատելութեամբ
Սըմին ընդդէմ զոր ճարակիսդ ես ոխացեալ,
Պատմեա զվասն էրն ինձ ասացի. զայս արկեալ սակ,

Զի թէ արդար իցեն բողոքքդ ըզնըմանէ՝,
Ծանուցեալ ո՛վ ոք իցես և զմեղանս իւր,
Իմովսանն յաշխարհ վերին փոխատրեցից
Քեզ, եթէ այս՛ որով խօսիմս, ոչ չորասցի։

Ըզբերանն առ ի վայրագ կերպն ի վեր
Մեղապարտն, և յետ հերովք զայն սըրբելոյ
Կառափին, զոր ի յետուստ էր խածատեալ,
Ըսկըսաւ ասել. Կամիս զի նորոգել
Աւից ըզցաւն անհընարին, յոր ի խորհելն
Նուէթ այժմէն սիրտ իմ դեղու՛ չև բարբառեալ.
Այլ թէ բանքս ունին լինել սերմըն ծընող
Եղերանաց՝ զոր ի կըրծել կամ մատնըչիս,
Ըզխօսելն և զլալ տեսցես յիս հասարակ։
Ոչ գիտեմ ո՛վ ոք ես դու, և կամ զիա՛րդ
Այսր ի ստոր եկաւորեալ. սակայն թըւիս
Ի խօսելոյդ Փլորենտացի ինձ հաւաստեաւ։
Ես, գիտա՛կ լեր, զի եղէ կոմսն Ուգոլին,
Եւ սա արհի եպիսկոպոսն Հռուգերոս.
Որում առ ի՛նչ թէ սոյնդունակ մօտ կայցեմ, լո՛ւր.
Առաւելի իցէ ասել, զի չարանենգ
Խորհըրդոցն ի հրապուրանս եղեալ վըստահ
Ըմբըռնեցայ և կորուսի ապա ըզկեանս։
Այլ զոր լըսել չիցէ եղեալ քեզ հնարաւոր,
Թէ զորպիսի՛ մահ դառնութեան իցեմ մեռեալ,
Լըւիցես, և հմուտ ճշասուցն ինձ լինիցիս։
Լուսամուտ դըզն ի ներքոյ հաւալոցին,
Որ ըզսովու կրէ յորջորջանս ի պատճառս իմ,
Եւ յոր հարկ է տակաւին փակիլ այլոց,
Էր ցուցեալ յաւուրց հետէ լուսինս ինձ շատ
Ընդ անցըս իւր՝ մինչև տեսի զերազըն չար
Որ եհերձ ըզպատրըւակ հանդերձելոյն։
Սա թըւէր ինձ առաջնորդ և ոստիկան
Հալածելով զայդ ընդ կորեանցն ըզգայլն ի լեառն՝
Որով Պիզեանց ըզԼուկա չէ՛ մարթ տեսանել։
Վըստեհլովք փութկոտ և վարժ ասպականեաւ



ԸզԳուալանդիս ընդ Սիզմոնդեայ և Լամֆրանկի
Էր կարգեալ յառաջընթաց ի ճակատու։
Ի սուղ ընթացս երևէին վաստակաբեկք
Հայրն և խոշտարք, և տեսանել իմն ինձ թըւէր
Զի սայրասուր ժանեօք նոցուն ճեղքէին կողք։
Զարթուցեալ քան ըզվաղուին ծագել կանուխ
Եւ ահա լուայ ըզլալ որդւոցս իմ որ ընդ իս
Ի միասին ի նինջ քընոյն և զխընդրելն հաց։
Անողորմ ես և անգութ թ՛ անկարեկիր
Կաս արդ խորհեալ զոր ըզգայի ես ի սըրտիս.
Եւ թէ ոչ լաս՝ զիմէ՞ ըրնաւ ունիցիս լալ։
Ըսթափեալ էին ի քնոյ, և էր մերձ ժամն
Յորում բերեալ լինէր պարէնն ըստ օրինի,
Եւ այր այր ի մէնջ՛դ երազ իւր վարանէր։
Եւ ահա լուայ զի աղխէր դուռն առ ի ներքոյ
Ահաւոր աշտարակին. անդ հայեցայ
Ի դէմս որդւոցս, առանց բարբառ ինչ յօդելոյ։
Սալացեալ խսպառ ի սիրտ՝ ես լայի ոչ.
Լային նոքա. և Անսելմիկն իմ՝ Հայր, ասէ,
Եւ զի՞նչ է քո զի պըշուցեալ կաս այսդունակ։
Համայն ո՛չ լացի ըրնաւ, և ոչ ետու
Պատասխանի՝ զայն օր ի բուն և զցայգն ապա,
Մինչև ի նոր-ծագել արփւոյն դարձեալ յաշխարհ։
Իբրև դոյզն ինչ ճառագայթք մուծան ի ներքս
Յարդելանըն ցաւագին, և՛հա տեսի
Նոյնդունակ զիմ կերպարանս ի քառեակ դէմս։
Զերկոսին ձեռս առ վըշտիս խածատեցի.
Որոց կարծեա՛լ թէ առնիցեմ զայդ առ անձուկ
Ուտելոյ, յարեան կացին վաղվաղակի,
Հայր, նիազ յոյժ, ասելով, լիցի մեզ ցաւ
Եթէ զմեզ կերիցես դու. դու զգեցուցեր
Ըզթըշուառ զայս մեզ մարմին, և դու ինքն եղծ։
Յայնժամ զի մի՛ զցաւսն յաւելից՝ հանդարտեցի.
Զօրըն զայն և զմիւսըն լուռ կացաք համայն.
Ա՛յ կարծր երկիր, առ իմէ՞ ոչ պատառեցար։
Իբրև ապա յօրըն չորրորդ եղաք ժաման,

Աւ ոտիւք իմովք Գադդոյ անկաւ տարած
Ասելով. Եւ զհա՞րդ ոչ օգնես ինձ, Հայր։
Այդրէն մեռաւ, և որպէս դու զիս տեսանես,
Տեսի զերիցն ես անկանել մի՛ստ միոջէ
Ընդ հընգեակ տիւն և վեցերորդ. ապա սկըսայ
Արդէն կոյրըս խարխափել զմիով միով,
Զորս և երիս կոչեցի տիւս յետ վախճանին.
Յետոյ քան զցաւն առաւել քաղցն եղև կարող։
Ասացեալ՝ զաղանադէմ ակնողեօք
Խարկ դարձեալ յողորմ կառափըն զատամունսն,
Որք կարծրատոր առ ոսկրն եղեն իբրև ըզշան։

— ՏԱՆԴԷ. Դժոխք։

---

# ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

---

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ Ի ԲՆՈՒԹԵՆԷ

Աստուած ծածկեալ, այո՛, Աստուածն այն է մեր,
Որում հաւատըս պարտ է մեզ ընծայել.
Սակայն թէպէտ ծածկեալ, թէպէտ և թագուն,
Այլ առ ի յայտ առնել ըզփառըս նորուն,
Քանի՛ վըկայք ո՛ն յաղաղակ բարձրաձայն
Ո՞չ առաջի իմ բազմահոյլ խըռնեալ կան։
Տուք ինձ երկինք պատասխանի, տո՛ւր ինձ ծով,
Եւ դու երկիր աղէ խօսեաց լըրիւ քով.
Ո՞յր խոկ բազուկ, կաճառք անթիւք աստեղաց,
Օդակառոյցս ըզձեզ յերկինըս կախեաց.
Ո՞ զքև, գիշեր աստեղազարդ բազմաշող,
Ո՞ զգեղեցիկըդ զայդ ըզքև էած քող.
Եւ դու կամարդ երկնածիր վեհ և վըսեմ,
Ի քեզ ըզՏէրն և զարարիչ ճանաչեմ.
Որ անաշխատն ըզքեզ արար յոչընչէ,
Եւ որ ի դաշտըս քո զաստեղըդ ցանէ,
Ոչ ինչ այլազգ քան զոր ի ստոր ընդ երկիր
Ի յանապատըս մեր փոշի համասփիռ։
Ջահըդ հըրքնաղ՝ զոր արշալոյսն աւետէ,
Աստըղ միշտ նոյն և միշտ նոր, յո՞յր հրամանէ
Դու ի ծոցոյ ալեաց արփիդ հանապազ
Ըզբեղնաւոր քո զշողդ յերկիր սըփռել գաս.

Անընկալեալ հանապազօր քեզ մնամ,
Հանապազօր դու դարձ առնես միւսանգամ։
Ե՞ս ինչ ըղձեմ առ իս կոչեալ հրաւիրեմ,
Ո՞ աղէ զքոյդ զարշաւասոյր ուղղէ ձեմ։
Եւ դու, ով ծովդ ահարկու, դու որ ի քոյդ
Կլանել զերկիր համայն կամիս ի զայրոյթ,
Ո՞յր ըղձեմ աջ փակէ ի քոյդ շուրջ ի ծիր.
Քակտել դու զբանտ քոյին ճըգնիս ի նանիր։
Լեռնակուտակ սաստ ամէհի ալեաց քոց
Նուաճեալ յափանցըդ բեկանի շուրջ ի ծոց.
Եւ զփորձ յաճախ վրէժխնդրութեանըդ քոյին
Տաս դու առնուլ օգտածարաւ ափահին,
Որ ընթանայ զպարանակալ խորոց քով,
Անձամբ զանձինըն պատուհաս խնդրելով։
Աւա՜ղ, հասեալ նըմա կորուստ առընթեր,
Ուղերձէ ուխտ, հայի յերկինս անդր ի վեր,
Ուստի միայն է եղկելեաց օգնութիւն.
Անլուռ ի վտանգն յայն յետին՝ ինքն իսկ բնութիւն
Տայ ամբառնալ նըմա ըղձեռս ի վերոյ,
Առ ապաւէնըն մահացուաց գերագոյ.
Ըսպաս, զոր միշտ ընծայէ սիրտ աչաբեկ
Տեառն՝ որ ցայնվայր չէր նըմա յուշ լեալ երբեք։
Զայն տիեզերք բարձեալ կոչէն զիս առ նոյն,
Հրատարակէ երկիր ըղփառըս նորուն.
Ինձ՞ ինչ ես, ասէ, հաստեալ արդեօք կամ,
Կամ թէ ինձէ՞ն պըճնիմ ի զարդըս փարթամ.
Նա ինքն հիմունս արկ ինձ, և զպէտըս քոյին
Ի հրամանաց եւեթ լընուլ ի նորին։
Որ ի նմանէ առ իս պարգեւք իջանեն
Քեզ պարգեւէ նա զայնոսիկ համօրէն.
Զգեցեալ ծաղկամբք գեղազարդիմ, զոր ձեռք իւր
Սըփռեալ զինեւ տարածանեն համասփիւռ,
Բանայ նա զձեռն իւր և լընու ըղծոց իմ.
Եւ յԵգիպտոս, ուր անջրդի ծարաւիմ,
Սփոփէ նա ինքն ըղմըշակին յոյս անյագ,
Շնորհեալ ընդ դաշտս ի սահմանեալ ժամանակ



Զեղուլ ալեաց Նիլոսի շուրջ ի յափանց,
Առբերելով անդր ընդ հեղեղս իւր ըղգանձ։
Ի դուզնաքեայցս իսկ առ էից աստի դու
Ի ճանաչումն Հաստչին կարես գոլ հասու.
Հայեաց ի ծառս անդըր՝ որ յիս վերաճեն.
Այն ինչ սըփռեալ հիւթն ի յարմատըս յինէն,
Ընդունի բունըն զայն և յոստըն բաշխէ.
Խընդրեն ըղնոյն ապա սաղարթք յայնցանէ,
Եւ բաժանորդս առնեն իւրեանցըն բարեաց
Հաւատարիմքն ըղնոսա ոստք աննախանձ։
Զանգօսնէ վարդ և ապիկար իսկ ռամիկ
Զանփառունակ տեսիլ տընկոյս այսոցիկ,
Իբրաւապէս յարդեանց նոցին ի ճաճանչ,
Լեալ սինլըքորն իսկ յոյլ որեարն հիացքանչ։
Թէ գիտիցես դու զխոտաբոյժ ոյժ նոցին,
Ցերկարեսցեն նոքա զաւուրըս քոյին.
Եւ մի երբեք դու տարապարտ վըշտակիր
Ընդ կարճատեւ կենցաղ նոցին եղանիր.
Անդուստ ի ծնէ իւրաքանչիւր ոք բուսակ
Անմահ յինքեան բերէ զիւր զարմ և զաւակ.
Իւրաքանչիւր ոք ի ծոց իմ բեղնաւոր
Ըղյաջորդաց իւրոց գտանէ զըրաւ նոր։

Լ. ՌԱՍԻՆ. Ի Կրօն։

---

## ԳԱՂԱՓԱՐ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌ ԱՄԵՆԱՅՆ ԱԶԳՍ

Յաւէրժ Էին չէք ազգ որ ոչ խոնարհի,
Յորմէ բնաւք սարսեն ազինք և դողան,
Եւ բնաւք նըմին լեզուք լինին խոստովան։
Ո՞ր ըղհանուրըս նըւաճեաց զօրութիւն.
Էի՞ն ինչ փառք զարընել շըղթայս իւր մարդոյն։
Գտանեմ համայն ուրեք տաճար և սեղան,
Բուրմ և նըւէր և զոհ և սպաս պաշտաման.

Ընդունիլն զուխտըս միշտ երկինք և զխունկ մեր․
Կարեմք այժ՛ խոստովանիլ անվեհեր,
Ըստրուկք մերոյս ըղձայութեանց՝ եղծանել
Զաստուածութեանըն զխնկաքանչ ըղձատակեր։
Զաստուածականն ահա զդաշտոն Եգիպտոս
Բառաչողացն ընծայէ դից իւրայնոց․
Այլ ի յանսուրբըն զոր պաշտէ ի յարջառն
Երկըրպագել նա Ապիսմարոյն կարծէ տեառն։
Ո՜վ բազմավրէպ միտք մարդկեղէն․ ծաղրելիս
Նանրահաւատք ըստեղծին ազգք իւրեանց դիս․
Տարապարտ դիցն էր այնցիկ այս սպաս,
Այլ հեստելոյն հատանէր միշտ պատուհաս։
Ատելիք միշտ եղեն Սալմին և Մեղենա,
Սոսկումն անուանըն Կապանեայ երթայ զհետ․
Այր ամպարիշտ առ ամենայն ազգս յաւէժ
Զարհուրական ինչ թըւեցաւ գոլ հըրեշ․
Եւ որ հնարէրըն ծածկապէս զիւրն աղանդ
Առ ի մերժել յինէն ըզդիցըն զահանդ,
Տեսանեմ յոտս Արամազդայ զԷպիկուր,
Եւ հիացեալ ընդ պարտութիւն անձին իւր,
Լըսեմ զի կայ խոստովանի աւասիկ,
Գոլ զօրութեան իմիք ըզմարդ խաղալիկ,
Եւ թըշնամի անտես՝ որ դնէ ի փոշի
Ըզմեծութեանց մերոց ըզշուք փառացի։
Ազգք և ազինք և թագաւոր և իշխան,
Մաշու ընդ հուպ փոխանեալք գուք համայն․
Աստ Ըսպարտա անկեալ, Աթէնք անդ կործան,
Քանի՞ք յաւերն Ելլադա կոյտք դիական։
Զի՞նչ ընդ հանուր իսկ տեսանեմ ընդ երկիր․
Ծածկեն անկեալ զայն ապարանք բարձրաթիռ,
Գահք տապալեալք, վաղաթարշամ զայն դափնիք
Եւ դաւազանք ծածկեն բեկեալ արքունիք։
Ո՞ւր են քո, խորոխալդ Մեմփիս, ո՞ւր արդ չըքնաղ
Հրաշակերտից հոյլք․ զաւերակս իսկ քո վաղ
Հետախաղաղ ծածկեաց եկուլ ժամանակ․
Պե՛րճ խիտ առ խիտ կանգնեալ շիրմայ ամբարտակք,



Արձանք չըքեղք անդ մարդկայնոյ չըքութեան
Վըկայք յերկինս ի վեր յոխորտք ամբառնան։
Արդ այնպիսումըն զօրութեան ահարկուի
Ընծայէ սպաս ազդ համօրէն մահացուի,
Առ բագնաւ դիցն աւասիկ խունկն իսկ անդուլթ
Ըզպատակչին ածէ յողրք ըզչայրոյթ։

Ղ. ՌԱՍԻՆ. Ի Կրօն.։

---

## ՄԱՐԴ

Պետն և իշխան, որում ի պէտս արարան
Զըքնաղ էիցս այսոցիկ հոյլք ամենայն,
Ամբառնայ զվէհ մարդ ըզճակատ իւր ի վեր,
Եւ ի բարձունըս կայ դէտակն ընդ եթեր․
Ճակատն այն թատր՝ ուր գայ հոգին յերևան,
Մերթ ճառագայթըս ծաւալեալ խընդութեան,
Եւ ի նըսեմ մերթ պաշարեալ ի թախիծ․
Լուսաճաճանչ զիւրոյն ի նմա ըզխանդից
Մըտերմութիւն քաղցր և աշխոյժ վառէ զհուր․
Զորոյ հնարի չարանախանձ նենգ ի զուր
Կեղծել ըզդէմըս, նենգ ի գոյն կապուտակ
Զըգեալ ըզհետ իւր ըզմախանս արբանեակ։
Շիկնի ի սուղ ինչ բան ամօթ անդ ցածուն,
Եւ անկեղծիկ բազմի ի նմա պարզութիւն․
Արհամարհանք ընդ մեծարանս անդ համեստ,
Եւ զկայ ցասումն իւր անդանօր առնու հեստ․
Ահ և ընկեր իւր անդ դալուկն անմեկին,
Որք օգնութիւն ինձ և նըպաստ պաղատին,
Երագագոյնք և քան ըզձայն իմ ի ճեպ,
Յորժամ արկածք ինձ մահաւիթք լինին դէպ։
Նոյն ձայն ի վայր հեռի, ի սպաս իմ պատրաստ,
Առնէ զխորհուրդս իմ ի կամըն իմում ազդ․
Հրեշտակ հոգւոյս, նոյն և սըրտիս գոլ թարգման,
Որ զկենակից տայ ինձ զախորժ քաղցրութեան։

Որքանեա՜ց աչն ամփոփէ յինքն էից հոյլ
Քանզի ի ծիրն անձուկ դրուելն շողք ի սփիւռ.
Անդ ամենայն ինչ հետ ընդ հետ նըկարի,
Հարեալ ի տիպ շարժականին պատկերի.
Ձիւք անդրուվարք զայնս ի յուղեղըն տանին.
Խուռն անդ թելից հիւսք զի՛ տըկար, ո՛վ երկին:
Այլ ի նոսա ուշ իմ եղեալ ապաստան,
Անդ աննկորուստ գտանէ աւանդ պատուական,
Որ ինչ ինձ աչք և լսելիք ընծայեն.
Կարէ նա գնել անդ և բառնալ միշտ անդրէն.
Նոյն ինքըն պահ ունի գանձուց իմոց անդ,
Հաւատարիմ ի տալ անդրէն զիմ աւանդ:
Ոգիք անդ նուրբք կազմք յարաժամ և պատրաստ,
Դէտ նըշանին կան որ առնէ նոցին ազդ.
Հրաման հոգի իմ տայ, և հլու արբանեակք
Սըփռեն յանդամս իմ ի ճապուկս անդ երագ:
Հպատակք անտեսք, ընդ ո՞ր գընայք պողոտայ.
Ո՞ զփըրկաւէտ եռանդն արեանս իմուս տայ.
Նա զկարևորն, առանց իմոյս հրամանի,
Ըզջերմութիւն տածէ յիմումս մարմնի,
Ի հաւասար շարժէ նա զսիրտ իմ ի յոյզ.
Ի կենսականն անդ զիւրն ի բնի կազմեալ հոյզ.
Ձեռուցանէ զիս ի սըրնթաց իւր ի ճեմ,
Յակն իւր անդրէն եղկ և յուշիկ եդեալ զիմ:
Միշտ ըստպաճ, նորոգի միշտ վերըստին.
Խողովակացն ընդ որ գընացք են նորին,
Բացեալ դըրունք մուտս համարձակ նըմա տան,
Պատրաստք ի գնել դարձելումն յետըս խափան:
Թանձր ի ջամբից արիւնըն ջինջ մածանի,
Եւ փոփոխումն այն ձըգէ միւս այլ ըզկնի.
Յեղաշըրջի նա թանձրանայ ի մարմին,
Եւ ընդ անդամս իմ, որ նովաւ ուռոգին,
Փոխակերպի ի գոյութիւն իմ ի բնիկ:
Ե՞ս ինչ ունիմ պահ օրինացս այսոցիկ,
Կամ թէ իմո՞վ ինչ հրամանաւըս կացին.
Հաւու ևեթ հաղիւ կարեմ գոլ նոցին.



Ինձ ըզնոցին միտք ուշիմ օր ըստ օրէ
Քօղածնըդըրեալ զհանճար և զկարգ հոլանէ.
Զխմանալւոյն այնորիկ ծ՛ն ըզկարգին
Զարարչապետն ի միտ առցուք ի նոսին:

Լ. ՌԱՍԻՆ. Ի Կրօն.:

---

## ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

Ա՞յս տուն բնութ. քո իցէ, ա՞յս գերեզման քո, ո՛վ Սէր.
Եւ կարիցէ՞ լուծանել մահ ըզմեծ հանդոյցն հոգեկցաց:
Մինչ խորհուրդք անսահմանք, ամբարձաթռիչք ինքնաշունչք,
Խնդրակք մըտաց յաւերժից, Հօրն ամենայն խորհըրդոց,
Մինչ իցեն վայրապար գերեզմանի ապաարկուք:
Եւ բնակիցէ՞ն ի խաւար՝ որք յանըստեղծ ի լոյսոյն
Յարքայութիւնըս պայծառս հանդիպեցան և կեցին.
Կեցին յահեղ ճառագայթս աթոռոյ այնըմ Միոյն՝
Որ փարելի ձեռօք բաց առեալ զմարմնոյ վարագոյր,
Խըտրոց ընդ ինքն և ընդ մարդ, երևեցոյց զայն փառօք.
Աթոռ՝ հանդէպ որոյ նա և այժմէն իսկ հոգիք մեր
Գուշակօրէն իմն ազդմամբ երկըրպագէն և խայտան,
Եւ ընդ ինքեանցըն բնութիւն ահաբեկեալ զանգիտեն:
Հոգիք՝ որ զքեզ ճանաչէն խորհըրդաւոր ըզգացմամբ,
Ըզքեզ, ո՛վ ահաւոր Ներկայութիւն և անտես,
Տիրանիցէ՞ն ինչ արդեօք՝ թէ վառիցին հանապազ,
Ծածկեալք յաչացըս մերոց լուսով աւուրն անվախճան,
Որպէս զաստեղըս փայլունս պատէ արև լուսազգեստ:
Մինչ եղծցի՞ համայն սէր մեր ընդ եղծման շինուածոյս.
Եւ խորարմատ կանդադեալք և բողբոջեալք վերարձակ
Սաղարթացեալքն անթառամ ի ջեր սըրտից զուգակցաց,
Որք ի կորով և ի գեղ զարգանային բարգաւաճք,
Անըզգայից պէս չըքնաղ ծաղկանց խամրեալ և անկցի՞ն:
Մինչ խորհուրդքն այն և կիրք՝ որք տան բարբառ բերանոյ,

Որք արձակեն ի շըրթանց ըղձալական գեղգեղմունս,
Որք վառեն յաչս ըղձոյն՝ զանձառելեաց նըկատիչ,
Այս ամենայն՝ պատահմունք իցեն մարմնոյ անկայունք,
Աւ ի կեալ լոկ ընդ նըմին, և ի նորին մեռանել՝
Անցանիցեն որպէս բոց շիջեալ ճըրագի սպառելոյ։
Ո՛հ մահացուք, լըսարուք զարմանալի բարբառոյդ
Որ ի ներքուստ խօսի՛նդ մեզ. «Ո՛վ մարդ, դու մի՛ ընաւ [մեռցիս»։

Զայնք երկնայինք ի յոգւոջ եղանակեն զայդ մերում.
Սաղմոսարանք՝ հրեշտակաց դըրդեալ մատամբք ներդաշնակ,
Ընդ համաձայն երգս հեզոց առաւօտեան աստեղաց՝
Քաջահընչեն անդուլ զերդ անմահութեան մեր մեծի.
Գընդաձև հոյլք համախումբք և գեղեցիկս այս մեր մարդ,
Երկնահաստ Թըխսաթոյր լերինք և ծովք խորամուսունչք՝
Միաձայնեն յընդհանուր ի վսեմական յայս նըւագ։
Լուարուք հոգիք մեր, և զայդ յօդոց հանուրց ծըծեցէք.
Նա ի մեղմիկ լոյս լուսնի, նա ծածանի միջամուխ
Ի խոնարհեալ տուընջեան փառս. արջնազգեստեալըն գիշեր
Մերձեալ յուշիկ ի մահիճ մեր՝ շըշընջէ զայն յականջ.
Յայդ և ցերեակ, տիւ պայծառ և երեկոյն մըտախոհ,
Ամենայն ծագք ուամանակք, տարածութիւնք անսահմանք,
Իբրև միակ մեծայաղթ խորհըրդաւոր նուագարան՝
Յաներևոյթ բաբախեալ ուլի կենդանի ձեռանէ, [լեան։
Լարք ըղձայունք՝ խընդութեամբ Թըրթռան յայս մեծ յոբե-
Օրհնաբանք լըսեն զայն. և մինչ տակաւ ձայնք երկրի
Զանխըլացեալ հեռանան, դըրդեն զոգիս յելս իւրեանց՝
Ճեպել խառնել յերկնային դաշնակութիւնս յայս ի սոյն։

ՏԷՆԱ



ԱՂՕԹՔ ՀԱՍԱՐԱԿԱՑ

Դուստր իմ, աղէ կանխեաց առ Տէր։ Տես ժամանեալ է [գիշեր.
Ոսկենըշոյլ աւանիկ դուռն յեղերց ի բաց ցելու զամպեր.
Նըսեմաձիգ բըլրոյն ի մայլ շուրջ վայրք ի դող լուծանին.
Հազիւ հեռուստ ի մըթան անուոյն ի գիւղ լըսի շաչիւն.
Համայն ուրեք ճեպեալ հանդըստ. և ծառք ուղղոյս ի շըր- [շիւն
Զօրընջեան ի սաղարթից յանոյշն ի սիգ Թափեն զփոշին.
Տես վերջալոյս ըզգիշերի ծածկոյթ ի բաց պարուրեալ
Լուսաճաճանչ տայ տատեղաց անձնիւր ծագել բոցափայլ.
Արևմըտից կարմրավառ ալօտանան ծոպք վերջաւոր,
Եւ արծաթի ջըւրց ըզգիմօք նըշոյլք ի ծուփ տատանին.
Խառն ի խուռն ակօսք և ցանկք անտես յաչաց կորընչին,
Եւ ըզքայլից ոտնըն ի յոյզ կայ վարանեալ ուղևոր։ [խեմ.
Ի տուընջեան կարիք անբաւ, աշխատութիւն և հեւ դըժ-
Աղօթեսցուք. ահա գիշեր. գիշեր պայծառ և վըսեմ.
Ալևորիկըն անդէորդ, հողմք ի փեռեկըս դըղեկին,
Աստ եղաւրք, և խաչինք անդ ի բառաչ իւրեանց բեկբեկ.
Համայն նիրհեն ի քուն. և ընութիւն վաստակաբեկ
Հանդըստեան և Աղօթից, Սիրով քաղցու կարօտին։
Աւանիկ ժամ և ժամանակ զի՛նդ զըւարթունս խօսին [մանկունք.
Մինչդեռ այն ինչ հեշտալիս ախտից փութամք մեք երա- [գունք,
Դեռաբուսիկ մանկութիւն աչս ամբարձեալ ի վեր յերկին
Զեռնամած և բոկանի կըրկնեալ ըղծունը ի ցուրտ վիմի,
Առհաւարակ ի նոյն ժամու ի նոյն բերեալ յաղօթս ուխտ՝
Համարակաց հօրն ըզշընորհս ի մեր Թիկունըս պաղատին։
Եւ մըտցեն ապա ի քուն։ Անդուստ ի սուրբս սկսի ա- [նուրջք
Աղմըկայոյզ երամ երամ սաւառնաթև կայտռելով շուրջ՝
Զորս յաւուրն անդ խոնարհել երկնեաց շըշուկ մի յետին,

Ի բացուստ նոցուն դիտեալ ըզլար շըրթանցըն վարդաշէղ,
Քան մեղուք դիմեալ յանձուկ անուշահամ ծաղկանցն ի գեղ՝
Գան թափին սիրայորդոր առ պաղպաջունս հոսեալ նոցին:
Ո՛վ անուշակ քուն խանձարրոց, ով աղօթից մանկութեան.
Ո՛վ ուղերձ սիրայորդոր անախտաշունչ մըրմընջից ձայն.
Ո՛վ կըրօնիցն ամբըծութեան, որ բերկրահոյլ ի խնդ ժըմ-
Ախորժալո՛ւր նախերգանք մեծահանդէս այն գիշերոյն. [տի.
Իբր ընդ թեւօք պարածածուկ արկեալ ըզգլուխ իւր թըռչուն՝
Մանկիկ մատաղ յաղօթս ի քուն առնէ զանմեղ իւր զոգի:
Դուստր իմ յաղօթըս կաց առ Տէր, յուշ նախ բերեալ
[սըրտառուչ
Զոր ընդ գիշերս առ քեւ ի բուն չարժէր զորոյդ անպաճոյճ.
Որ ըզփափկիկըն քո զոգի յերկնից ի ծոց իւր տարաւ,
Որ ի լոյս ըզքեզ երկնեաց, որ ապա մայր որդեգորով՝
Ըզգառնութեան կենաց ճաշակ անձին եւեթ առբերելով՝
Զամբէր խորխս քեզ մեղու, կերակրելով ինքըն լեղեաւ:
Եւ վասն իմ աղօթեսջիր, կարօտելո՛ւմս ինձ առաւել.
Նա քեզ հանդոյն բարեհամբոյր սուրբ և անկեղծ է ի սիրել.
Ականակիտ է նորա սիրտ, ճակատ պարզեալ լուսապայծառ:
Ցոլովք յիւրմէ բարեբարեալ, ընդ ումեք ոչ տանի նախանձ.
Ինքն ըզգօն և նազելի ժուժկալութեամբ բերէ կենաց,
Եւ ըզչարեացըն կըրելոց, ուոչ առնելեաց խընդրէ համար:
Ձեռք նորա հոյլ ընդ հոյլ ի ծաղկաքաղ անուշաբոյր
Սուրբ յաւէրժ՝ պատկառեցին մատչել ախտից փուշս յան-
[համբոյր,
Ծուղակք ըզնա ի զուր ժըտեն յիւրեանց զըւարթ ձըգել
[պատկեր.
Անցելումն անյիշաչար՝ անտես նոցին լինի խաղառ. [թար,
Եւ համայն իսկ անծանօթք առ ի նմանէ խորհուրդք վատ-
Որ ըզմոգըն տողակին զերդ զերեսօք ջուրց մուժ ըստուեր:
Անծանօթք են ի նմանէ, ո՛չ և ի քէն ո՛ մայր յաւէժ.
Ցաւխտենիս խուժան աղէտք, ուր սիրտ կոծի գահավէժ,
Պատիր հեշտանք, ունայնութիւն, խայթ և վարանք հալե-
Կիրք որ ի սիրտըն ծըփելով իբրու զալիս փըրփրադեղ. [մաշ,
Եւ ընտանին յիշատակք պատկառանաց ամօթակեզ
Որ ըզդիմօքն ի ծաւալ շառագունմանս ածեն անբաւ:



Այլ ես, որդեակ, գիտեմ զինչ կեանք. ի դոյն և զքեզ,
[ո՛չ, վարժեցից,
Այն ինչ զարդուն դու ի տիս՝ պէտք կարեւոր հասցեն վար-
[ժից,
Թէ պըսակաց պընդել ըզհետ, ճարտարութեանց և բաղ-
[դին
Անմըտութիւն է և ոչինչ, և զի փոխան յաճախ պատուոյ՝
Ամօթ՝ յերեսս արկանէ բաղդի սափորըն գիպուածոյ.
Եւ թէ ի դոյն խաղալիս ոգիքն ի զուր կորընչին:
Հոգին ի կեանս այլափոխի, և թէպէտ ցանդ յամենայնի
Ընդ պատճառըն թափանցիկ նոյն և վախճան յանդիմանի,
Այլ ընդ կարեօք ախտամոլ մեք ծերանամք տարապարտ.
Աստ կենացն յապաւրիզի մոլորի մարդ, գայթէ ոգին.
Համայն թողումք ինչ կառեալ ի մայառուտ ճանապարհին,
Խաչինք ըզգեղմն ի թիկանց, և զլաւութիւնս իւրեան մարդ:
Աղօթս, որդեակ, աղէ վասն իմ: Զայս միշտ գոգջիր դու
[առ Տէր.
« Ով Աստուած իմ և հաստիչ, գորովագութ դու հայր ես
[մեր.
Գոհութիւն քեզ, որ բարիդ ես. գոհութի՛ւնք, Տէր, զի մեծ
[ես »:
Թող զի խղճըրդ անդ թուլցեն՝ ուր քոյին սիրտ վերառաքէ,
Այցաւորին քեզ մի՛ գընացք ըընաւ ումպէտ վիշտ ածէ,
Եւ կամ ուղի զոր հարկանեն տագնապիցէ ինչ ըզքեզ:
Աստէից ամենայնի է ինչ ձըգին յոր հակամէտ.
Գետք ընդ դաշտս ոլորաճեմ ի ծով փութան ըզձաւէտ.
Մեղուն ըզթիւմ ճանաչէ ուստի անոյշ հոյզք պատրաստին.
Թեք ի թուխս գաշերձիկ յանձնիւր ի թառըս երագին.
Անդղ ի տապան խոյանայ և բարձր յարև սուրայ արծուին
Ծիծառն առ գարուն, և պաղատանք չէշտ յերկին: [թըռչի,
Յորժամ մըրմունջ քո վասն իմ յԱստուած ի վեր հեղիկ
Իմ զերդ ըստրուկ ապիկար ըըստեալ ողորմն ի հովտի
Ի վայր յուսոցն առնու զբեռինս առ եզերօք ճանապարհին,
Խընդամ թեթեւացեալ. զի զբեռըն զայն վըշտալից [խիծ՝
Ի մխատուցս բարդեալ մոլար զոր յիս տանիմ ծանրաթա-
Ո՛հ քո անմեղ մըրմընջիւն վերաբառնան բարձր ի ձեռին:

Երթ, վասն հօր քո դիր աղերս. արժանաւո՛ր զի լինիցի
Կարապնափայլ յանուրջս զեւրև դիտել հրեշտակ լուսար-
[փի,
Զի ընդ խընկոյն անուշութեան և իմ ծըխի սիրտ ի բորբոք·
Ի բաց ըղձեղս իմ մերժեսջիր անբիծ ի շունչ, ով իմ դըս-
[տրիկ,
Ո՛հ, զի և իմ վերասցի սիրտ յանմեղութիւն լուսատենչիկ,
Իբր ըղջաստակ սեղանոյն զոր ընդ երեկս լըսան՝ նորոգ·
Ի կենդանեաց և վասն որոց յայս երկիր
Սահին նըշդեհ, դուստր իմ, ըղՏէր մաղթեսջիր·
Վասն այնոցիկ որոց շաւիղ բազմակոծ
Անհրևոյթ յալեաց ծածկի և հողմոց·
Վասն անմըտին որ ըղըըրտին իւր հըրճուանս
Յուկեձամուկ գընէ շողեալ պատմուճանս,
Կամ յօդապարն երագասլաց երիվար·
Վասն որք ի ցաւըս վատակին վըշտահար,
Վասն այնոցիկ որոց զերծեալըն գառնան·
Որոց բարխըն գործեցին կամ խոտան։
Վասն այնորիկ՝ որ հեշտութեանց ի հրապոյրս
Զգեշերն ի գըլուխ մեղկին անսուրըն ի համբոյրս·
Որ յաղօթիցըն ծընրադիր վըսեմ ժամ՝
Ի պարանցիկ մըլի խընջոյս բաղմերամ.
Եւ զանձաւակ հարկանէ մատն ի քընար.
Այն ինչ հոգին ի գիշերայց սիրաբար
Մըրմունջս ի վեր քաղցրաձայնէ ցօղալից,
Եւ յեռանդուն խոկ շիջանել աղօթից
Նա զնըւագաց դեռ բիծ գեղգեղս յերկարէ,
Արդեօք զի Տէր յերկնից բարձանց լըսիցէ։
Մի յաղօթիցըդ անտեսել և զնոսին՝
Զորովք թաւալ անկանի վէմ տապանին·
Սեա՛ւ դահավէժ որ ժամ ի ժամ դըժպըհի
Ըսպառնալեօք մեզ յանդիման փեւեկի·
Անդ եղկելի հեծեն ի վըշտըս հոգիք
Ազատութիւն պաղատելով երջանիկ,
Որոց ի ժանդ մարմինքն հիւծին հինաւուրց
Մերո՜ց կարօտ պաղատանաց վըշտալըյծ·



Յերկնի աղէ՛ խջցեն աչկունք մեր, որդեակ,
Նընջեցելոց փոյթ ի գորով օժընդակ։
Ի ծո՜ւնր, ո՛հ, ի ծունր, ի դոյն յայդ հող երկըրպագջիր [դիր·
Ուր հայրըս քո առ իւրն հարամբ, և մայրդ առ մարբ կան ի
Ուր երբեմըն կենդանիքըն՝ արդ կան ի քուն մահադուշակ·
Անդո՛ւնդք՝ ուր ելևել փոխի՛նդ փոխի խառնաշփոթ
Եւ ընդ հարամբք խոկ մեռոլ նոր գիպլին մեզ հարք անծանօթ,
Իբրու ալիս ընդ ալեօք վերամբառնան ծովք անյատակ։

Վ. ՀԻԿՈՅ

---

## ՄԱՂԹԱՆՔ ԵՐԵԿՈՐԻՆ

Քաղցր է, այո՛, հոգւոյ անբիծ
Առաւօտու պահուն մաղթանք,
Մինչ համագոյք ժըմտին՝ յարփեցն
Ի լոյս նախկին ցոլ երփներանգ,
Այլ քաղցրագոյն մաղթանք նըմին
Ի լըռութեան երեկորին։
Մինչ գեղջեկցն յաշտարակաց
Զերդ փոխադարձ ձայն ներդաշնակ,
Մեղմ և յուշիկ առեալ տարած
Սուրբ զանգակացըն հեկեկանք,
Խառնին՝ դ մաղթանս անբիծ սըրտին
Ի լըռութեան երեկորին։
Լուսոյն այն շող յերկնից կամար
Որ ընդ աղօտ ըոփաւի ծաւալ,
Ամպն որ քողէ զլուսապայծառ
Զարեն ի մայր իւր խոնարհեալ,
Են ի մաղթանս հրաւէրք նըմին
Ի լըռութեան երեկորին։
Եւ մենակեաց տատեղք ի ցեր,
Որ կաթեն շող ակնապարար,

Բոյլք կանթեղաց են լուսալիր
Որ յԱրարչին ի վեհավայր
Օրհնեն մաղթանս հանէն նըմին
Ի լռութեան երեկորին:
Երբ խումբ յուղւոյն ոտնակառեալ
Ըզմիջօրյաւ ճանապարհին,
Բազմի պանդուխտն աստուածարեալ
Ոգի առնուլ վերայ վիմին,
Հընչէ մաղթանս ի թելս սըրտին
Ի լռութեան երեկորին:
Երբ յանպաճոյճ խըցկին յանկեան
Ի գուճս ածեալ զպար որդեկաց,
Այրին մընուկ անօգնական
Ակնողէօք արտասուաթաց,
Վերառաքէ մաղթանս յերկին
Ի լռութեան երեկորին:
Եւ ընդ անտառ ընդ ծովափնեայ
Ծածկեալ զանխուլ ի ստուեր խըրթնի,
Յառանձնակեաց ընդ վանորայ
Միանձն յանդորր ի սիրտ ճեմի,
Մըրմընջելով մաղթանս լռին
Ի լռութեան երեկորին:
Եւ յո՞ր ափունս, կամ յո՞ր աշխարհ,
Ուր մարդկութեան բարբառ հընչէ,
Ի խորագոյն կամ յո՞ր անտառ
Վայրագասուն թէ ազգ բնակէ,
Ոչ վեր ելցեն մաղթանք յերկին
Ի լռութեան երեկորին:
Ո՞ ոչ ելաց ըզսիրելին
Յափըշտակեալ վաղամեռիկ,
Եւ ոչ ի ցաւս ուսաւ վըշտին
Ընտրել զանուն կեանս երջանիկ.
Ապա մաղթանք սուրբ քաղցրասցին
Ի լռութեան երեկորին:
Յունկն իմ դեռ ևս հընչէ ժամն այն
Յորում բարձաւ մայրն իմ յինէն.



Սիրտս ի խորոց առ նա տայ ձայն
Սիրողաբար որ ինձ լըսէն,
Եւ մաղթանացս իմ ձայնակցի
Ի լռութեան երեկոյի:
Ո՞ զիս ի խինդ նորա զլասցի,
Քաղցր ի գըրկայն ո՞ զիս քեցէ.
Ըզմեզ սափոր նոյն ընկալցի,
Ըզմեզ երկինք նոյն ծրարեսցէ.
Մաղթանքն ապա թէ կարճեսցին
Ի լռութեան երեկորին:

Յ · ԳԱԲԲԱՐՈՑՑՈՅ

---

## ԽԱՉ

Ո՛վ, զոր առի ես ի շըրթանցն ոգեսպառ,
Ընդ շունչն յետին և ողջունիւ իւր վերջնոյ,
Նիշ սուրբ և սուրբ, պարգև ձեռինըն տըկար,
Պատկեր իմոյս Աստուծոյ:

Ո՛րչափ լալեօք ոտք քո թացան պաշտելի
Ի սուրբ ժամէն՝ երբ ի ծոցոյ վըկային
Անկար ի ձեռս իմ դողդոջուն յերերի,
Ի շունչն յետին դեռ ջերմին:

Ցայտէին ջահք սըրբանըւէր առկայծ բոց.
Մընչէր երեց զերգըս մահուն քաղցրաձայն,
Հանգոյն զոր կին եղանակէ երգ ողբոց
Ի նիրհ հանգչել անդ մանկան:

Ի ճակատուն կայր հետք յուսոյն բարեսէր.
Եւ վսեմափառ գեղով փայլեալն ընդ դիմօք
Մահուն շըքեղ վայելչութիւն նըշմարէր,
Վաղանց ցաւոյն շընորհօք:

Գըրգուեալ հոգւոյն ըզհերարձակն իւր գըլուխ,
Մերթ մըրկանայր և մերթ ծածկէր ըզդիմակ.
Յրպէս ի ծուփ ծածան ըստուերք նոճեաց թուխ
Յարձան չիրմին ըսպիտակ:

Ի մահադոյժ կախէր մահձայ մին բաղուկ,
Միւսն ի սրտին վերայ կրկնեալ թուղթի,
Գոգցես խընդրէր դեռ ի շըրթունսն առ անձուկ
Պընդել զպատկեր Յիսուսի։
Համբուրաշարժ շըրթունքն էին կիսամեռ,
Այլ էր թռուցեալ հոգին ընդ սուրբն այն համբոյր.
Զերդ սըլացիկ խունկ չև ի հուր կիզեալ դեռ
Ծախ' ի բոցոյն սպառըսպուռ։
Առ ցուրտ շըրթամբքն հանդչէր համայն ինչ յայնժամ.
Շունչք լռեալ ի խոր ծոցոյն նիրհելոյ,
Եւ հոլովէր կիսով ամփոփ բիբն ական —
Յաչըն թմփուրս ի տեսոյ։
Եւ երկիւղիւ զանխուլ հարեալ ես յոտին,
Ո՜չ բաւէի առ վեհ նըշխարն այն մատչել,
Իբր այն մահու թէ վեհութեանըն լռին
Սըրբագործեալ զայն լինել։
Ոչ բաւէի... այլ լեալ ըզգաստ լռելոյս,
Յըրտասարսուռ կալեալ մատամբքն ըզխաչիկ,
« Ա՜հ՛ յիշատակն, աւէ երէցն, ու' ահա յոյս,
Կա՛լ, որդեակ իմ, զայսոսիկ »։
Այո՛, կացցես դու ինձ, բաժին ոլխրական.
Եօթնիցըս ցարդ մերձ առ շիրմաւն անանուն
Տընկեալ ծառոյս ոստոց սաղարթք փոխեցան.
Դու ոչ լըքեր զիս համբուն։
Ուր ընաւք մաշին, աւա՜ղ, ի սիրտ մերձ դու յայս
Զինքն անմոռաց կոչար յաւէտ յամս ամաց.
Եւ շիթ առ շիթ ի գիրգ կակուղ փըղոսկրայս
Կընքեցան հետք իմս աչաց։
Աստուածաթև հոգւոյն վերջին դու ընկեր,
Ե՛կ լեր ի սիրտ իմ, խօսեաց դեռ ու' սասաջիր
Զոր բարբառէրն՝ երբ ըզմըրմունջ իւր երէր
Դու լոկ համայն լըսէիր։
Ի պահն այն խէթ, մինչ ամփոփեալ յինքն հոգին,
Փողածածկեալ ըզմեր բըբօք մըթալից,
Զոփայ տակաւ զերծ յաղդելեացըս ցըրտին,
Անլուր վերջին ողջունից։



Մինչ գայթ ի գայթ ի մէջ կենաց և մահու
Առ գիշերաւ շիրմին հոգիս կախեալ կայ,
Հանգոյն անջատ յոստոյն պըտղոյ մի ծանու,
Ի՛ առ մէն մի շունչ իւր դողայ։
Մինչ երգախառն հեծեծանաց սըրտմութեան
Զարթուցանէն ոչ այլ զոգւոց մեր թըմբիր.
Մած ի շըրթունս օրհասական անկելոյն,
Զինչ բարեկամ սիրալիր,
Զանձուկ շուղին առ ի գիւրել զանհափետ,
Առ ամբառնալ առ Տէր զաչխունսն աղեկեզ,
Համբուրելըդ դու մըխիթար երկնաւէտ,
Զինչ բարբառիս, ասա՛ մեզ։
Ըզմեռանել դիտես և դու, և յուհայն
Աղօթըս քո աճեղամեծ գիշերոյն,
Ըզձիթենւոյն ոսս արտասուքդ աստուածեան
Թացին ցայգուէ մինչ յայգուն։
Առ մեծ խորհուրդս յառեալ քո զակն ի խաչէն,
Ընդ լալեաց մօր տեսեր ըզսուգ բընութեան.
Ըզսիրելիս թողեր հանդոյն մեզ աստէն,
Եւ ըզմարմինդ ի տապան։
Լիցի հիքիս վաղըն մահուանս այս, իցէ,
Տալ ի ծոցին քում զհւըրն ըզշունչ ցաւագին.
Ո՜վ, որ մեռար, յիշեա ըզժամ քո լըրիւ
Ի գալ պահուն այն վաղն իմ։
Գըտից ըզվայրն՝ ուր դա շըրթամբք ոգեսպառ
Զանդառնալին մընչեաց ողջոյն ոտից քոց.
Եւ ռահահորդ հոգին՝ զհոգիս իմ թափառ
Ածցէ իւրում Տեառն ի ծոց։
Տա՜յր ոք, ո՜հ, տա՜յր, անդ ի մահճին իմ ոլխուր,
Իբրև զուարթուն յարտօսր անդորր և տըրտում,
Սըրտագըգեցիկ ոք ի շըրթանցս իմ առնոյր
Զօծեալ բաժինս իմ այսդոյն։
Պընդեա՛ ըզքայլսն և գիւրեա՛ զժամ իւր յետին.
Եւ գրաւըրդ սուրբ ա՛կընկալեաց սիրալի,
Գամ քան ըզգամ ա՛նց յայնմանէ որ մեկնին
Առ մընացեալսն ի յերկրի։

Մինչև զկամարս հերձեալ նըսեմ՝ եօթն անգամ
Ձայն մի զմեռեալըս կոչեսցէ ի յերկին.
Եւ զհանգուցեալսըն զարթուսցէ միաբան
Ընդ հովանեաւ միշտ խաչին։

ԼԱՄԱՐԴԻՆ

---

## ԲԱՐԵԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂԵՐՍ ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ

Կո՛յս գեղեցիկ, պըսակազարդ, աստեղալից,
Արփիազգեաց. որ հաճոյ վէհ գըտար Արփւոյն՝
Մինչ զ՚ի քեզ ծածկել ըզլոյս իւր հաճեցաւ.
Ըզքէն խօսել վառէ զիս սէր յորդորագոյն,
Այլ կարօտիմ յըսկիզըն առնել քոց նըպաստից,
Եւ նըմին՝ որ սիրալիր ի քեզ հանգեաւ.
Ըզնա կարդամ ես յօգնութիւն՝ որ միշտ լըւաւ
Հաւատով զինքըն հայցողաց։
Եթէ երբէք, Կոյս գըթած,
Ընդ մահացուաց սիրտ քո աղէտըս յուզեցաւ,
Ունկըն դիր աղերսագին իմս հայցելոյ,
Յօգնել մարտիս իմ նայեա՛ց,
Թէպէտ ես հող և դու երկնից լիցես գըշխոյ։
Կո՛յս իմաստուն, և ՚ի Թըւոյ ընտրելոց
Երջանիկ ըզգօնամիտ կուսից դասուն,
Նա՛ պարաւաջ և քան ըզընաւըս լուսալից.
Ո՛վ ոգւոց վըշտագնելոց վահ՝ աններկուն
Ընդդէմ Բաղդի և Սրհաւին բուռն հարուածոց,
Որով յաղթող լեալ և փըրկիմք ի վըտանգից.
Ո՛վ անդորրիչ բոցաձարակ զահացու կըրից
Մոլորամիտ մահացուաց.
Ըզմեզմանոյշ բիւս աչաց՝
Որք տեսին ըզկերպարանս անգութ դըոշմից
Յանձկալի անգամն որդւոյ քում սիրելոյ,
Ի վարանեալս յիս յառեա՛ց,



Ա՛ռ անհանճարս՝ ի քոյ խորհուրդըս դիմելոյ։
Կո՛յս ամբիծ, ամենեւին իսկ սըրբափայլ.
Դուստր և մայր շընորհաշուք քում զաւակին,
Որ լուսաւոր զայս կեանս առնես, և սըփռնես զայն.
Քև որդին քո և գերագոյն Հօր որդին,
Ո՛վ պատուհան երկնից շքեղ և լուսափայլ,
Եկն ի փըրկել ժամանակացն ի կատարման.
Ում յամենայն հողեղինաց՝ բընակարան
Եղեր միայն դու ընտրեալ,
Ամենասուրբ Կոյս օրհնեալ,
Որ զՆախամօրն ողբըս փոխես ի բերկրաձայն.
Արա՛ 'րժանի զիս՝ որ կարող ես իւր շնորհին,
Ո՛վ երանեալ միշտ յաւէտ,
Պըսակաւորըդ յարքունիս անդ վերնային։
Կո՛յս, որ սուրբ ես լինել շնորհօք համայն,
Սա խնկագոյն և վեհափառ խոնարհութեան
Ելեալ յերկինս՝ ուստ աղօթիցս ունկըն դըներ.
Դու ածեր ի ծնունդ զԱղբիւրըն գըթութեան
Եւ զԱրեգակն յաւէժալոյս արդարութեան,
Որ փարատէն զախտից մըռայլը հոծ՝ ի յերկրէս.
Յանկալի անուանս երկս յանձին կըրես,
Մօր և Դըստեր և Հարսին,
Ո՛վ Հրաշափառ Կուսածին.
Տիրուհի Թագաւորին՝ որ զմեր պէսպէս
Հաղբըս լուծեալ՝ ծընաւ ազատս և երջանիկ.
Որոյ ի սուրբ վերան հայցեմ
Սըրտիւս, անխարդ ուրախարար, հանգչել այժմիկ։
Կո՛յս միայն անհամեմատ աստ ի յերկրի,
Որ սըրտակաթ գեղովդ զերկինս արարեր.
Ում առաջին ոք կամ երկրորդ չեկաց հանգոյն.
Յամբիծ խորհուրդս ո՛ ի բարի գործըս սըրբասէր՝
Անուստ Բանին՝ մաքրազարդեալ և կենդանի
Եղեր տաճար ի կուսութեան լիաբեղուն.
Դու լոկ մարթիս տալ ինձ կենաց զըւարթութիւն,
Թէ յաղօթից քոց հայցուած,
Ո՛վ Մարիամ կոյս գըթած,

Ուր նախ մեղաց՝ լցի շնորհաց արդ լիութիւն։
Մըտօք ի ծունըր խոնարհեալ պաղատագին
Հայցեմ լինել առաջնորդ,
Կամ ըզգըրահեա վարեալս ուղղել անդր ի բարին։
Կոյս պայծառ և անփոփոխ ի յաւիտեան,
Աստըղ ալեօք մըրըրկածուփ յայս ի ծով,
Վարիչ անվրէպ յուսոյ դ՛ անդունդըս նաւելոց·
Տես, զնաւդ կոծակոծ, ամբոխախառն
Տագնապիմ ես անտէրունչ այսպէս՝ միայն,
Եւ մօտալուտ են ինձ վերջին արդ ձիչքն ողբոց·
Այլ զանձն հոգիս իմ հաւատայ քոյդ խընամոց·
Վըհասապարտ ոչ ժըխտեմ,
Այլ ի քէն, ով Կոյս, խընդրեմ
Մի կորըստեամբըս բերկրեսցի ոսոխն հոգւոց·
Աղէ յիշեա, զի ի փըրկել զմեզ ի մեղաց՝
Զգենուլ մարմին մարդկեղէն
Ի կուսական քում արգանդէ յանձն առ Աստուած։
Քանի՛ արտօսր, ով Կոյս, հեղի ցարդ աւասիկ,
Եւ հրապոյրս և ապաչանս որչափ ունայն
Աղիողորմ ի ցաւս՝ ի վիշտս ինձ վըտանգի·
Ցորմէհետէ ծընայ զափամբքն առնոսական,
Այսր և անդր համապազօր լեալ աստանդիկ,
Աւուրք կենաց իմ միշտ եղեն ի տագնապի·
Գեղ մանկացու, գործք և բարբառ հընչմանց ձայնի
Ըզհոգիս իմ գերեցին·
Կոյս սըրբուհի երկնային,
Մի յապաղեր, զի մերձ է ամն ինձ օրհասի·
Կենացս աւուրք քան ըզկայծակն երագասոյր
Անցին ի հոգս և ի մեղս,
Եւ մահ եւեթ ինձ ակն ունի աւուր աւուր։
Ո՛վ Կոյս, արդ հող է նա, և ըզաչերս իմ
Ցաւեցոյց, որ կենդանեաւն ես արտասուել։
Ի բիւր չարեացս ըզմին իսկ ընաւ ոչ գիտէի,
Եւ ի գիտելս՝ որ ինչ եղև հարկ էր լինել·
Զի այլ կամք իւր ամենայն մահ էր վասն իմ,
Եւ վասն իւր եղեռնաւոր անուն վասն·



Օ՛ն, Տիրուհի երկնից, ով մերս Աստուածուհի,
(Թ՛ է ասելի և օրէն),
Քեզ ամենայն յայտնիք են.
Եւ զոր ոչ ոք, Կոյս վեհափառ, առնել մարթի,
Ոչինչ իմն է առ մեծազօր քում զօրութեան.
Ի ցաւոցս իմ զերծ ա՛ զիս,
Զ՛ ինձ փըրկութիւն և քեզ լիցի պատիւ անուան։
Կոյս կարող, ի քեզ յուսամ ամենևին,
Զի և կամիս լինել ի պէտս ինձ օգնական.
Մի զիս թողուր ի վերջին հետս ոտընփոխիս.
Մի հայիր յիս՝ այլ յոր ըստեղծ զիս Ինքնակամ.
Ոչ արժանեաւս՝ այլ պատկերաւն իւր երկնային
Որ յիս կըրեմ՝ ողորմեսցիս ինձ վատթարիս.
Մեդուսա եւ կամք մոլար՝ արարին զիս
Վէմ՝ յորդահոս սին հիւթոյ.
Դու, Կոյս, սըրտիս ի խորոց
Բըղխեցո՛ սուրբ արտասուս եռանդնալից.
Զի ջերմագին գոնէ իցէ արտօսրն յետին,
Անխառն ի սին երկրաւոր,
Ցիմարութեամբ որպէս եղև լալն առաջին։
Կոյս մարդասէր, հակառակորդ վէս սնքանաց,
Առ սէր ծագման հասարակաց գորովալիր,
Ողորմեա՛ց ապաշխարող բեկեալ սըրտի.
Զի թէ զդոյզըն ցընդելի հող մահակիր
Սերտ հաւատով այսպէս սիրել անձն իմ կարաց,
Զի՞նչ ինչ ըզքէն, ո՛վ հրաշագեղդ, խորհեսցի։
Ի հանգամանս իմ չուառական և եղկելի
Եթէ ձեռամբ քով յառնեմ,
Առ քեզ սըրբեալ և նուիրեմ
Ո՛վ Կոյս, զխորհուրդս իմ և զհանճար և զոճ բանի,
Զլեզու և սիրտ, ընդ հեծութեանցս և արտասուաց.
Հան ի բարի զիս ի հունն
Եւ զյեղափոխ ընկալ ախորժ իղձըս կամաց։
Մերձենայ օրն և հեռի գոլ իսկ չըմարթէ,
Այսպէս սլանայ ժամանակ,
Ո՛վ Կոյս միայնդ և միակ,

Եւ զնիրս՝ մերթ խիղճ, և է զի մահ տագնապէ.
Այլ յանձն արասջիր զիս որդւոյ քում,
Մարդ Ճշմարիտ և Աստուած,
Զի զվերջին շունչս ընկալցի 'խաղաղութիւն:

ԲԵԴՐԱՐՔԱ.

---

## ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ

Կոյս և մայր, դուստրը որդւոյդ դու քոյական,
Բարձր և խոնարհ քան զարարածըս համօրէն,
Խորհրդոյն յաւիտենից վախճան կընքեալ:
Դու ինքն ես՝ որ զբնութիւն մարդկային յայն
Ազնուացուցեր, զի ոչ անարգ համարեցաւ
Արարչագործն իւր՝ արարուած լինել նորին:
Յարգանդի քում վերստին վառեցաւ սէր,
Որոյ ջեռանդն՝ յաւիտենից 'ի հանգըստեան
Ծաղիկս այս հանգունակ բողբոջեցաւ:
Մեզ սիրոյ ես աստանօր ջահ միջօրեայ,
Եւ 'ի մէջ մահկանացուաց այդր ի խոնարհ,
Անկընկալեաց յուսոյ աղբիւր ես կենդանի:
Այնչափ մեծ ես, Տիրուհի, և՛ այնչափ կարող,
Զի որ կամի շնորհս և ոչ առ քեզ դիմէ՝
Սաւառնել խղձք իւր կամին՝ ոչ թևաւորեալք:
Քոյդ բարութիւն ոչ օգնական լինի միայն
Ում խնդրէ, այլ և յաճախ բազում անգամ
Կանխաժաման է քան զհայցուածս ինքնայորդոր:
Ի քեզ ողորմութիւն, ի քեզ գորով
Ի քեզ մեծ վայելչութիւն, միաւորին
Ի քեզ համայն որ ինչ բարիք են յարարածս:
Արդ սա ուրեմն որ 'ի վըհէն անդընդային
Տիեզերաց է յակն արկեալ մինչև ցայսվայր
Մի առ մի զհանգամանս ոգեղինաց,
Ընդունել 'ի քէն հայցէ ոյժ այնքանի՝



Զի կարասցէ 'ի վերագոյն ևս ամբառնալ
Զականողիւն՝ առ հուսկ վերջինըն փրկութիւն:
Եւ ես երբէք ոչ աւելի ժըտեալ աչացս
Որչափ ժըտեմս արդ վասըն իւր, աղերսալիր
Քեզ պաղատիմ, ո՛հ, մի լիցին ինչ ապարդիւնք:
Զի զամենայն մեռելոտի դու մառախուղ
Աղաչանօք քո 'ի նմանէ փարատեսցես,
Զի գերագոյն նըմին հաճոյքն ընձեռեսցին:
Եւ ևս հայցեմ 'ի քէն, Դշխոյ, զի կարող ես
Զոր կամիս, զի քաջառողջըս պահեսցես
Ըզտենչանսն զկնի տեսլեանըն այնքանոյ:
Հովանի քո զմարդկային կիրսն ընկճեսցէ:
Տես զԵրանեակ և որքանի երջանկաց դասք
Կան առ քեզ ընդ աղաչանս իմ ձեռնամածք: —
Աչքն արդոյք Աստուծոյ և փարելիք
Բևեռեալք պնդ առ խօսնակըն՝ յայտնեցին
Ո՛րչափ հաճոյ նըմին աղօթք են սըրտառուչ:
Անդուստ առ լոյսըն յառեցան յաւէժալոյս՝
Յոր չէ մարթ հաւատալ զի մըխեսցի
Հանգունակ լուսապայծառ ակն եղական:

ՏԱՆԴԷ. Արտայ-Բեան:

---

## ԼՈՒՍԻՆՆԵԱՆ ԱՂԱՉԷ ԶԴՈՒՍՏՐՆ ԴԱՌՆԱԼ Ի ՀԱՒԱՏՍ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ

Տէր Աստուած, իմ 'ի քո փառս 'ի ռազմ մըտեալ վաթ-
[սուն ամ,
Կործանեալ տեսի զտաճարդ, և զխաչակ քո ջընջեալ.
Յահաւոր բանտի լըքեալ զընդանարգել ամ քըսան,
Արտասուք իմ վասըն հէք որդւոցս առ քեզ գոչէին.
Եւ 'ի գալ ժողովել ազգատոհմս քև առ իս,
Մինչ ըզդուստր իմ գըտանեմ, է նա քոյին թըշնամի:

Վա՛յ իմում թըշուառութեանս... հայրըդ քո՛ ես աւասիկ.
Բանալին իմ միայն ի քէն զհաւատըս քո մերկացոյց:
Դո՛ւստըր իմ, անուշակ պըտուղ վըշտացս իմ յեանց,
Տես աղէ, տես դէթ զարիւնն որ յերակունըդ խաղայ.
Արքայից բազմաց արիւն՝ քրիստոնէից իբրև զիս,
Դիւցազանց է այն արիւն ախոյենաց հաւատոյս,
Վըկայից արիւն է այն... ո՛հ դուստր իմ յոյժ սիրուն դեռ,
Գիտիցես զեղեռըն քո. քեզ ո՛վ իցէ մայր՝ գիտես.
Գիտիցես զի՛նդ եղանելն ի լոյս կենաց ի ծոցոյն
Այդր յետին և տառապեալ շառաւիղն հէք սիրոյս,
Տեսի զինքըն խողխողեալ ի մոլեկան սուսերաց,
Ի ձեռաց սըրբիկայիցն՝ որոց դու զանձնդ ես մատնեալ:
Քո եղբարք սըրախողխող իմ առաջի նահատակք,
Զարիւնոտ թևըն յերկնից բարձանց առ քեզ կարկառեն:
Արարիչդ որ ուրանաս, Աստուած զոր դուդ հայհոյես,
Վասըն քո՛ վասն աշխարհի յայսմ ի սըմին տեղ մեռաւ,
Ի տեղւոջս՝ յորում բազուկս ըսպառ եհար նըմա տէգ,
Ի տեղւոջս՝ ուր յիմ բարբառ խօսի առ քեզ արիւն իւր:
Ցո՛րմըդ տես, տես ի տաճարդ՝ ի քում տերանց խառնա-
[կոխ.
Ամենայն պատմէ զԱստուածն՝ ում հայրքդ եղեն վըէժխըն-
[դիրք:
Դարձի՛ զաւըրդ, գերեզման իւր յապարանս այսր է հուպ.
Այս է լեառն յորում յաղթոյ մեղաց ըզմեզ լուանալով՝
Յանձն էառ յամպարըշտէն անըշընչանալ թագաւոր.
Անդ ըզկեանս իւր կոչեաց առ ինքն յերմէ տապանէն:
Ո՛չ ունիս ընթանալ ի վեհաւայրս աստ տեղի,
Ո՛չ կարես քայլ մի փոխել՝ և չըգտանել զԱստուած քո.
Եւ քեզ չէ՛ք մընալ աստէն՝ չըլինել կըրկին զհայրդ յուրաստ,
Եւ զպատիւդ՝ առ քեզ խօսուն, և զուխատուն քո զԱս-
Տեսանեմ ահա զի լաս և յոյժ զփաս ի դիրկս իմ. [տուած:
Ի սըրտագոյն ճակատուդ դրոշմէ Աստուած զապաշաւ.
Տեսանեմ զճշմարտութիւն եկեալ իջեալ ի քո սիրտ.
Գըտանեմ ըզդուստրըդ իմ՝ զոր ի յինէն կորուսեալդ.
Եւ զգենում զերանութիւն իմ և ըզփառս առաջին՝
Թափելով զիմ որդեակն յանհաւատից օրինաց:

ՎՈԼԴԷՐ. Զայիր:

# ԵՂԵՐԵՐԳԱԿԱՆՔ

---

## ՈՂԲ ԷԼԵԿՏՐԱՅ Ի ՎԵՐԱՅ ԵՂԲՕՐՆ

Ո՛վ իմոյ դեռ սիրելւոյս ի մարդկանէ յիշատակ,
Որեստեայ հոգւոյն Նըշխար, զիարդ օտար ի յուսոյս,
Նա և ոչ որով յղեցիս, առեալ ըզքեզ ընկալայ:
Որ զի արդ զեղեալդ ոչինչ՝ բարձեալ կըրեմ 'ի ձեռին.
Այլ ես, ո՛վ որդեակ, պայծառ յըղեցի զքեզ ի տանէս:
Երանի թէ իմ կանխեալ էր պակասեալ ի կենաց,
Մինչ չև զքեզ տակաւին յերկիր օտար առաքեալ,
Գողացեալ սովին ձեռօքս ուի մահուանէ թափեալ զքեզ.
Յայնժամ թող մահացեալ անկեալ գնէիր յորըն յայն՝
Մասին հայրենի գերեզմանին լեալ հաղորդ:
Իսկ այժմիկ՝ տարաբնակ յօտար երկիր տարադիր
Կորեար չարաչար՝ ի քում քեռէդ ի բացեայ.
Ոչ ի ձեռըս սիրոյ՝ թըշուառականս ես՝ ըզքեզ
Լըւալեօք պաճուճեցի, և ո՛չ որպէս էր ի դէպ՝
Բարձի յամենածախ հրատէն ըզբեռըն ողորմ:
Այլ յօտար ձեռըս, եղո՛ւկ, ի գերեզման յուղարկեալ՝
Ժամանես խուն մի կուտոց ի դուզնաքեայ սափորի:
Ո՛հ հեքիս՝ վասն առաջնոյ քոյ վայրապար սընընդեան,
Զոր ըստէպ՝ քաղցըր երկօք զքև գործեալ ջամբէի,
Զի ոչ մօրդ ինչ առաւել քան ինձ սիրուն էիր դու:
Եւ ոչ ընտանիքն, այլ ես էի քո սնուցող,
Եւ միշտ հանապազօր՝ քոյր քոյր՝ առ իս կարդացեր.

Իսկ այժմիկ՝ այս ամենայն յաւուր միում չըքացաւ
Ընդ քեզ վախճանեալ, քանզի որպէս մըրրիկ
Զամենայն խըլեալ թըռեար. հայրըն գընաց, ես մեռայ,
Դու մահուամբ եղեր չեք, և թըշնամիք ծիծաղին.
Մայրն ոչ մայր՝ շամբշեալ մոլի առ մըրցական հեշտութեան,
Զորմէ դու զըրոյցս յաճախ առաքէիր ի ծածուկ՝
Թէ ինքնին դու գըլխովին երևեսցիս վրէժխընդիր:
Այլ և զայս ի մէնջ եհան չարադև բաղդ քո և իմ,
Որ ըզքեզ այսպէս յիս յըղեաց մոխիր և ստուեր անօգուտ,
Փոխանակ վայելչագեղ և սիրասնունդ երեսաց:
Ո՛հ ինձ ահ. ով մարմին ողորմելի, վա՛յ աւաղ.
Ո՛՛նդ դըժնեայ ճանապարհս, եղո՛ւկ զինև, առաքեալ
Անձկալիդ, ո՛վ գըլուխ եղբօր, ե՛ր ըսպաներ զիս սպաներ:
Եւ արդ դու յայսըմհետէ յայդ ի քո յարկդ ընկալ զիս,
Զոչինչս առ ոչինչդ, որպէս զի ՚նդ քեզ ի ստորինս
Բնակեցից այսուհետև. զի մինչ էիրդ և ի վեր,
Էի ՚նդ քեզ բաժորդ ի նոյնս, և արդ այժմիկ ցանկանամ
Մի զըրկիլ ի քումմէ գերեզմանէդ ի մահուս.
Քանզի ոչ տեսանեմ ըզվախճանեալսըն տըրտմեալս:

ՍՈՓՈԿԼԷՍ. Էլէկտր.

---

## ՕՐ ՄԵՌԵԼՈՑ

Ըղտըրտմաւոր ըսկէք գանչւն դարձադարձ,
Դըռընչելով ըզմեր յարկօք սըգազգեաց.
Մխտարար ընդ օդ ղօղանջ զանգակին
Վերահըրնչեալ բարձր ըզգըլխովք տըխրագին,
Ազդ տայ մարդոյ հրաւիրելումն ի վախճան՝
Նընջեցելոց մաղթել զանդորր հանգըստեան.
Յարդել ըզկեանս յօդունց վըշտաց նըշաւակ,
Մի յոխութեան ծախիլ ի քէնս հակառակ
Ըզւին մանուած սահմանափակ վայրկենի
Զոր բընութիւն չափեաց վաղանց մահացուի:



Ո՛վ փոքր պեղեալք, քանի՛ յանձուկ ի սահման
Դընի յորմունքս՝ ազանց նըշխար մահական:
Յանյաւէ աստ վայրքս և ի շիրիմս յայսոսիկ
Մահ, ժամանակ՝ կան մանգաղօք խաչակնիք:
Քանի՛ մեռեալք չեղջակուտեալք յալս երկրի:
Ոչինչ է թիւ աստ առ ամբոխս ամայի:
Ո՛ւմ ոչ սոսկումն ածէն ոսկերցս այս մահիճք,
Բեկորք մարդկան ըլքեալք հողմոց խաղալիկ:
Ա՛խ, թէ նկարեալն հանուրց պայման մեզ աստէն
Տըխուր տեսլեամբն ահ և սարսուռ ցուրտ ազդէն,
Քանի՛ ապա տուժից սըրտի գտան ի յուշ
Սըրտաճըմլիկ ցաւոյն ի մեզ հարցի փուշ.
Փեսայն ի ծաւնկս ողբոյ անձկաւ նազելույն,
Քեռն աչք քամեն արտօսր յեղբայր իւր սիրուն.
Մայրն արտասուէ զորդեակն հընձեալ գարնանի,
Յոր կայր յեցեալ յոյս զառամեալն հասակի:
Որոց հեզուքդ՝ այդ արտասուք դեռ քաղցր են,
Զի հեծութիւնքդ են փոքր մարդկան համօրէն.
Այլ ոյց ողբայքն՝ հատաւ վըճռոյն հուսկ պատգամ.
Մահ՝ կէտ նոցա, և փոխ՝ կենցաղս է միայն:
Զի՞նչ ազդքն իցեն. ըստուեր ըզհետ ըստուերի:
Կեամք առ անբաւ մեք յաւիտեամեանս ընդ պահ մի,
Եւ շիջանին ընդ մեզ տըխուր յիշատակք.
Գոյ, ժամանակ, զերծ ի սասանիցդ և այլ կեանք:
Ամբարձ զաչօթս, ո՛վ մահացուդ, մինչ յերկին.
Հայցեա յՆէն՝ ոչ զի արկեալն հող շիրմին
Թեթևասցի վախճանելոցն ոսկերաց,
Զի չեն ինչ պէտք անդ հանգըստեան մահացուաց.
Եւ որ էլք ըզկաւեղէն մասն՝ հոգին,
Խընդրէ յաւէտ իւր կայս ի գիրկս Անեղին:

ԼԸՄԻԷՐ

---

### Ի ԶԱՆԳԱԿՆ ՅՕՐ ՄԵՌԵԼՈՑ

Շատ է, մի՛ այլ հընչեր պըղընձդ ողբական,
Մի՛ զքունն յաւէժ, ո՛չ, ինձ գուժեր զահագին·
Ահա մըտօքս ես իջանեմ ի դամբան
Որ խիստ ժանեօք փութայ լափել զիմ մարմին:
Արկ զիս այժմէն մահ յերկեղուան ի դագաղ,
Զոր հարցն իմոց արեամբ ներկեաց դահճաբար·
Վառին ճրագունք ի՛նչպէս աղօտ և նըւաղ,
Թընդայ վերջին երգոցն ի ձայն սուրբ տաճար:
Զիմորդ յինէն զիրկ մենացեալ մինչ ի սպառ
Իմ ընտանեակք լան զիս ի քօղ սեւաթոյր·
Եւ յարկս ողջոյն հեծէ՛նդ նոսին անբարբառ:
Այլ մերկ հոգիս ցընծա՞յ յերկինս ի յանդորր,
Եթէ զոփայ դառն ի տանջանս գեհենին:
Լըռես պըղընձդ. ահա սարսափիմ և պաղիմ:

ՄԱՆԱՐՍ.

---

### ԲԱՐԵԱՒ ՄՆԱՑՔ

Դեղին տերևք սարսռեն դողան,
Սաղարթքն ի վայր անկանին·
Ո՛չ, բնաւ որ քաղցրն էն և հեշտին
Թօշնեալ գըլլին ի տապան:
Մայրեայն ի ծագ ի փայլ ոըխուր
Արփւոյն ճաճանչ հարկանի·
Դա՝ ամարան որ մեռանի
Արդեօք յետին է համբոյր:
Ինձ արտասուք յաչս անդ ցողան
Առ ի խորոց ի սըրտէ·



Այս ինձ պատկեր ի յուշ ածէ
Ըզբաժանմանս մեր վայրկեան:
Զքեզ ինձ թողուլ առաջի կայր,
Զի մեռանիմ՝ գիտէի·
Ես բացագնայ ամառն էի,
Դու մեռանողն այն անտառ:

ՀԱՅՆԷ

---

### ՆՈՐ ՏԱՐԻ

Տէր, դու ես հայր ժամանակաց և իշխան,
Ամք բիւրաւորք առ քև մի օր էն միայն·
Դու ի ծայրից քոյոց լերանց մըշտընջեան
Դիտես զաւուրս որ սըրացան և որ գան·
Ի մի նըկատ՝ մինչև եղեալ տեսանես՝
Թէ զո՛ր պըտուղ դարս հանդերձեալ երկնէ մեզ·
Աղաչեմ, Տէր, զի՞նչ ինձ ձեռօք կեղակարծ
Այս ածէ ամ՝ յոյսն և երկիւղ մահացուաց·
Ցիմոց աւուրց տարիս յանկուած յաւելեալ
Իցէ՞ հիւսիւք սիրոյ շնորհաց յօրինեալ:
Համբուրեցի՞ց զայն իբր ըզքո ինչ պարգև,
Թէ դոչեցից· Ի բաց գնասջիր, ա՛նց զինև:
Այլք ի տարեաց անցին ի գիրկս ակաղձուն
Կուտեալ ինձ տենչ, զեղջ, արտասուս, անձկութիւն.
Խաբեպատիր սին երևոյթս ուրուական,
Խինդ միօրեայ, հրաժեշտ անդարձ անդարման,
Եւ դառըն բերս՝ որոց կեղեւք աղաղուն
Մնան ի սըրտիս իբր ըզփուշ անկայուն:
Զոր չունէի՛ն՝ ես ի նոցունց խընդրէի,
Եւ ցանդ զաւա՜ղն ի փոխճանի կըրկնէի:
Եւ իմ կալոյց ակն ի դարուց աշխարհիս,
Հիմն ի յաւազ արկի և սերմն ի յալիս:
Արդ ժամ է, Տէր, զի զգաստացեալ և իմ սիրտ,

Զակն անքըթիթ հարեալ ի բան քո ճըշգրիտ
Քեզ ձօնեսցէ զերագընթաց ըղձարկն՝
Զորս արատեաց ցարդ բազմաթիւ ի չարիս։
Տեսցէ անշուշտ թէ աւուրք քո պատարուն
Ծախեալք ի քնար և սեղանոյդ ի պաշտօն,
Յուսումն՝ ի սէր քո սըխրալի սքանչելեաց,
Զըգեալ անքուն մինչ յընդմիջել գիշերաց,
Զաղերս խոնարհ մըն վայրկենից եդեալ կետ,
Եւ զհեծութիւն ժամուցն ի քայլս եա ընդ եա,
Այսպէս յինէն թռուցեալք ի բաց ստուերն,
Այսպէս թափուր և լոկ զոգիս իմ թողեն,
Որպէս այս ամ որ յընթացիկն ի. սպառուած՝
Թիւ սոսկ յաւել ի շար ամուրց իմ կենաց։

ԼԱՄԱՐԴԻՆ

---

## ՈՐԲ ՄԱՆԿՈՒՆՔ

Դաշտք կան պաղեալ, անցին աւուրք գեղապանծ.
Վայ աղքատին որ չէք տուն,
Այլ մահ մնայ լքելում,
Հանգոյն երկրի թէ սիրտք իցեն ցըրտամած։
Ամանորայ հասեալ գիշերն առաջին,
Ամբոխ մարդկանն եկեալ յաւուրն հանդիսից
Ճեպէր ի դարձ բերկրալից.
Եւ խուռն ՚նըսեհ եա ինչ այցէր հիւղեկին։
Նըստեալ մօտ դրանն առ սեմովք
Տըղայք երկու, կէս մերկք, գունատք առ վըշտի,
Գութ արկանեն անցաւորաց խիստ սըրտի,
Մընչեալ մըրմունջ տըրտմասուգ։
Զաղէտ նոցին լապտէր առ ոտս հոլանէր,
Փոխան հեղլով իւր հայցուած։
Եղանակէր լալով կըրտսերն ի յերեր.
Միւսըն հըգաէր ձեռս ապառում մեծատանց։
« Մեր երկոցունցս ահա մանկանց այլ չէք մայր.



Մեռաւ յերէկն, առ մեզ նա զիւրն հաց տալով.
Եւ կայ՝ ուր մեր նընջէ հայր։
Տուք, զի ՚նեղեալ հալիմք ցըրտով և սովով։
Ծարուն ասէ. երթայք. իմ դոն ընտանիք.
Ձեր ինչ խընամք ինձ մընայ։
Տեսաք զի իւր լայր գըստրիկ.
Այլ մեռանիմք մեք ահա »։
Եւ ձայնն ողորմ ողբարար
Խուլ բարբառով կոծէր զօդ.
Անմըտադիր ամբոխն ի ճեպ ընթանայր,
Մինչ ոչ մընաց ոք անցորդ։
Ըզգուշըն սուրբ բախէին,
Զի մայրն ասէր, եթէ Տէր ոչ մոռանայ.
Սոսկ արձագանգ պատասխանէր տաճարին.
Հուպ մօտալուտ հասեալ մահ,
Դեռ լոյս վառէր լապտերին,
Եւ տըխրաբար ըղկէս գիշեր ժամն ազդեաց։
Հեռուստ գուայր շաչիւն տօնիցըն կառաց.
Այլ ձայնն հատաւ լալագին։
Առաւօտին՝ քահանայն
Յերթալն յաղօթս յեկեղեցին յայգուն լոյս,
Տեսեալ զնոսա զկնմաւն անկեալ ձիւնասոյզ,
Զայն արկանէր տրտասուելով... անշարժ կան։
Ահ, փարելոցն, եղուկ, զանձամբք գըրկապինդ
Զան էր անշուշտ պահել զնըշխար ջերմութեան.
Եւ գալկահար վիմատառեալ երկոքեան,
Դեռ ձեռս ձըգեն պաղեալ խիստ։
Երէցն՝ յեղբայրն հովանացեալ կիսովի.
Ըզձեռն արկեալ ունէր նորուն ի բերան,
Իբր յարգելուլ ըղվայրապար ձայնն հարցման,
Եւ ցուցանել՝ թէ գըթութիւն չէք յերկրի։
Նընջեն յաւէժ, այլ դեռ լապտերն անդ հըսկէ։
Ողբան մարդիկ, քան ի նըպաստ կազմք ի լաց,
Անդր յամենուստ խըռնեալ ի կոծ արտասուաց,
Այլ չէր որ գայր յերկնէ։

Լ. ՔԵԼՄՈՆԴԷ

## ՏԵՐԵՒԻՆ ԱՆՏԱՌԻ

Անջատեալ քոյդ ի ցօղնոյն,
Ո՜վ հէք տերև աղաղուն,
Ո՞ւր գընաս դու: Զգիտեմ զայն.
Զկաղնին մըրրիկըն եհար
Որ ինձ նեցուկ էր միայն:
Ի շունչ առեալ անդադար
Զեփիւռ և կամ հիւսիսի
Ցարդ զիս յածէ հողմավար
Ի յանտառէն ի դաշտի,
Եւ ի լերինս ի հովտոյն.
Եւ յոր վարիմ ըստ հողմոյն
Ըզհետ անահ ընթանամ.
Գընամ ուր գնայ ամենայն,
Ուր գնայ տերևըն վարդի,
Ուր և տերևըն սարդի:

ԱՌՆՈՅ

---

## ԱՆԿՈՒՄՆ ՏԵՐԵՒՈՑ

Անտառակին աւարաւ
Աշուն գալուկ արկ զերկրաւ.
Թուփք և մացառք հոլանիք,
Սոխակ չունի դայլայլիկ:
Ցայն ինչ կենաց այգուն փայլ
Մանուկ հիւանդ յամրաքայլ
Խաղայր գընայր յերթ վերջին
Ցիւրն անտառակ սիրելին.
«Մայրիդ ողջ կաց... ընկճիմ ես.
Սուգ քո գուժէ զիմ աղէտս.
Ցամէն անկման սաղարթու
Դիտեմ զգուշակըն մահու:



Եպիտաւրեան պատգամ խիստ
Ասաց. «Մայրիդ ոստախիտ
«Աչացդ հանդէպ գալկասցին,
«Այլ էցէ այն և յետին:
«Ցաւէրժ պատի զքև նոճին.
«Ի գերեզման տապանին
«Գունաթափեալ քան զաշունդ
«Անկցի խամրեալ մանկութիւնդ,
«Նախ քան զծաղիկըն դաշտին,
«Եւ նախ քան զուռ բըլրակին»:
Մեռանիմ ես... Ցըրտաշունչք
Եւ թուխք հայրին զիս հողմունք.
Եւ իբր ըստուերս խուսափուկս
Տեսի զգարունս ի փախուստ:
Անկիր տերևդ առօրեայ,
Ցաչաց զուգիս զայս քօղեա,
Թաքո յանդոյմ իմ մօրէ
Զվայրն ուր հանդեայց յայսմհետէ:
Այլ թ' ի մեկնակ ճեմելին
Իմ հերարձակ սիրուհին
Գայ լալ ի մուտս արեգին,
Զարթո քո մեղմ ի խօշիւն
Պահ մի սփոփեալ զիմ ուրուն:
Ասաց, գընաց անդարձակ...
Եւ հուսկ տերևն որ անկաւ
Եա զօրհասին նըշանակ:
Եգին ի հող ընդ կաղնեաւ...
Այլ չըդարձաւ սիրուհին
Այցել մեկնակ դամբանին.
Հովիւ դաշտին միայնակ
Երթ, յածել լոկ ոտին,
Ըզլըռութիւն տապանին:

ՄԻԼԸՎՕԻԱ

## ԱՌ ԾԻԾԱՌՆ

### ԵՐԳ ԲԱՆՏԱՐԿԵԼՈՅ

Ո՛վ դու նըժդեհ ծիծառն անմեղ,
Ի վարանաց դարեալ բունիկ,
Զի՞ տըրտմագին յընդհատ գեղգեղ
Նըւագս հընչես, ողորմ հաւիկ։
Թէ տարանջատ քոյդ վարուժան
Ըզքեզ միայն աստէն եւեթ՝
Յանմըխիթար սուգ ինձ նըման,
Ողբա, ողբա, ողորմ հաւիկ։
Այլ երանի՛ քեզ բիւր հազար,
Զի թռչիս առեալ ընդ սար ընդ ձոր,
Ազատ յայերս յածիս կածիս
Կըրկնեալ ըզքո զերգ տարփաւոր։
Յանկարծ և ես... այլ զիս եղո՜ւկ,
Դառն արտասուք են իմ բաժին.
Հեծեմ տըխուր ի յարկս անձուկ,
Յիշեալ ըզփառս իմ զառաջին։
Ոչ ինձ արփւոյն ծագէ նըշոյլ
Յաղջամղջին յայս օթևան,
Եւ ոչ հողմիկ հեշտին ի սոյլ
Հասուցանէ զիմս առ քեզ ձայն։
Յառաջ խաղայ և այս աշուն,
Եւ դու կազմիս յերկայն ուղին.
Շէնք և աւանք և ծովք անհուն
Քաղցր ի ձայնէդ ողջունեսցին։
Իսկ ես այգուն այգուն ի կոծ
Զաչս իմ բացեալ արտասուալից,
Եղերական քոյին երգոց
Յայնժամ մըտօքս ի լուր կացից։
Մինչ տարափով ի խիստ մըրրիկ
Թօթափեսցի ձիւն փըքալից,
Ես կարծեցից թէ քո ձայնիկ
Ինձ և յայնժամ է ողբակից։



Ո՛վ դու նըժդեհ ծիծառն ազատ,
Ըզքեզ առնեմ ես երգմընի,
Գընա ողջամբ յերկիր ի զատ,
Ողջամբ դարձցիս ի գարնայնի։
Խաչ մի դըրացես դու աստանօր,
Ի նմա հանգիր զայն երեկուն.
Տո՛ւր ինձ զյետին ձայնիդ համբոյր,
Եւ երթ ողջամբ, հաւիկ սիրուն։

ԿՐՈՍՍԻ

---

# ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆՔ

ԱՐՁԱՆԱԳԻՐ ԴՐԱՆՑ ԴԺՈԽՈՑ

Ընդ իս մուտք են ի քաղաքն աղետաւոր.
Ընդ իս մուտք են ի տանջանս յաւիտենից.
Ընդ իս մուտք են առ ժողովուրդն կորուսեալ:
Զարարողն իմ վեհ դըրդեաց արդարութիւն.
Ած ի գոյ զիս զօրութիւնն աստուածեղէն.
Գերագոյնն իմաստութիւն, սէրն առաջին:
Արարածք յառաջ քան զիս չէացան այլք՝
Բայց յաւէրժք. և կամ մնամ ես յաւիտեան.
Ընկեցէք զամենայն յոյս՝ որ մտանէքդ:

ՏԱՆԴԷ. Դժոխ.:

—

ԴԵԴԱԼՈՍ

Դեդալոս յայնժամ ի ծանրատաղտուկ աքսորն ի Կրետէ
փակ էր անդընդովք և ի հայրենին կարօտ ի յերկրէ:
« Թէպէտ ըզցամաք արգելու, ասէ, և զալիս ծովուն,
Սակայն առաջի մեր բաց են երկինք երթիցուք ընդ սոյն.
Թէ և համայնից տիրեսցէ Մինովս, ոչ տիրէ օդոյս »:
Ասէ, և անդէն նորոց արհեստից անկանի ի յոյզ:
Փոխէ ըզբնութիւն, փետուրըս հաւու արկանէ ի կարգ,



Զերկայն ըզփոքու յարելով ըզհետ ի կարճէն ցաւագ.
Որ այնպէս գոգցես ի բնուստ էր աճեալ ի զառ ի վերակ,
Իբր ի հովուական շարէն յերգիոն տողազոյգ վարսակք.
Եւ լարով ընդ մէջ և զծայրսըն մոմով ըզնդէ հաստատուն,
Գալարէ դուն ինչ՝ զի ճըշգրիտ ի տիպ գործեսցէ հաւուն:
Մանուկն Իկարէ կացեալ առընթեր, և բնաւ անգիտակ,
Թէ անձամբ անձին ըզմահկանացուն հիւսէր ըզվըտանգ.
Զուարթերես դիմօք՝ մերթ ըզփափկահերս բռնէր ի փե-[տրոց՝
Ցորս ի շարժիւն բաւեսցէ շընչել հեղասահ հողմոց,
Եւ մերթ ըզխարտեաշ մոմըն լըմելով բոյթ մատին ի ծայր՝
Մանկաբար խաղուք ըզհօրն արգելոյր սըխրալի արար:
Զեռնարկեալ գործոյն մինչ յամբոկ եհաս՝ կըշռեցաւ յայերս
Ինքնին իսկ Ճարտարն յեցեալ յերկուսին յիւրակերտ ի [թեւս:
Ապա և զորդի դաստիարակեալ, «Իկարէ որդեակ,
Ընդ միջինն ընթա՛, խրատ տամ քեզ, ասէ, շաւիղ անվըտանգ,
Գուցէ ընդ խոնարհ թէ գնաս ընդ ուղի, յալեաց ծանրա-[ցին,
Եւ թէ ընդ բարձունս՝ խանձոսին փետուրքդ ի բոց հըրա-[տին.
Ընդ երկաքանչիւր հեռոյն ընդ միջին թըռիր, որդեակ իմ:
Ահա պատուիրեմ չհայել քեզ համբուն ի դէմս Եզոլին,
Եւ ընդ Արջըն մեծ կամ ընդ մերկանդամ ընդ Հայկեան նի-[զակ
Մի ակնարկեսցես. առաջնորդութեամբս իմ լեր հետեւակ »:
Եւ նըմանապէս թեւադրեալ նըմին զօրէնս թըռչնոց,
Անհըմուտ ուսոյն ապա զանծանօթ թեւըն յարմարեաց:
Այլ զոյգ ընդ խրատուն թանան համօրէն երեսք ծերունւոյ,
Եւ զոյգ ընդ գործոյն սասանին ի դող բազուկք հայրենիք:
Համբոյր ետ անդարձ, և թեւատարած թըռեաւ առաջին,
Այլ սիրան երկիւղիւ դողայ տատանի ի տես ուղեկցին:
Զոր օրինակ հաւ՝ որ առ ի բարձուէ ընտանի բունոյն
Ըզմատաղ ձագուցն արձակէ երամ ընդ այերս օդոց,
Զայնէր զիւր կընի և ի մահառիթըն մարզէր արհեստ.
Բախէր ինք զիւր թեւս, և զորդւոյն դիտէր բախիւն զու-[գահետ:
Բայց այն ինչ մանուկն ըսկըսաւ խայտալ բուռըն թըռչնօք,

*Մանկական աշխոյժք եթերայ բարձանց վառին տենչմանօք·*
*Եւ զառաջնորդին լքեալ ըղձալից թռուցեալ ի բարձունս,*
*Ի սաստիկ տօթոյն կակղի հոտաւէտ թևոյն ամրութիւն:*
*Հալեալ էր մոմոյն· Ինքն ըզմերկանդամըն շարժէր զբազուկս*
*Ի թևոց թափուր և ոչ դոյզն մի ընկալեալ ըզսիւք·*
*Շրթունք հայրակոչ յալիս կապուտակ ջուրցըն սուզանին,*
*Որ և յայսմանէ ընկալաւ այսօր զանուն ըզնորին:*
*Եւ հայրն հեղգացեալ, այլ ոչ ևըս հայր, «Իկարէ ասաց,*
*Իկարէ, ո՞ւր ես, և կամ յո՞ր գաւառ քեզ հանդիպեցայց·*
*Իկարէ...» ասաց, և ի ծուփս ալեաց փետուրս նըշմարէ·*
*Անէծ զիւր արուեստ· ամփոփէ զմարմին· զանուն տեղին առէ:*

ՕՎԻԴԻՈՍ· *Այլաբանութիւնք*:

---

## ՀԱՄԲԱՒ

*Վաղ ընդ քաղաքըս մեծամեծըս Լիբիոյ գընայ համբաւ,*
*Համբաւ չարագոյժ՝ քան զոր չիք ինչ երագընթաց. [թիւն.*
*Գնալով երթայ և ստուարանայ, աճէ գնացիւք ի զօրու-*
*Դոյզն ի սկըզբան առ երկիւղի, յայերս ընդ հուպ վերամ-*
*[բառնայ.*
*Յածի ընդ երկիր, և յամպս ըզգլուխ իւր ծըրարէ:*
*Մայր երկիր ի ցասմանէ դիցըն գըրգռեալ, ըստ զըրուցաց,*
*Ենկելադեայ և Կէոսի ծընաւ ըզնա քոյր կըրտսեր·*
*Երագոտն երագաթև հըրէշ ահեղ հըսկայաձև,*
*Որոյ որչափ են փետուրք՝ նոյնչափ հըսկեն աչք ընդ նոքօք,*
*Նոյնչափ լեզուք, նոյնչափ բերանք հընչեն, նոյնչափ լըսեն*
*[ականջք.*
*Ոչ խոնարհէ զարտևանունըս քաղցր ի նինջ, բազմի ի տուէ*
*Դէտ ի տանեաց բարձր ի գըմբէթ և յաշտարակըս բար-*
*Արհաւիրս ի մեծամեծ քաղաքանըն արկանէ, [ձրաբերձ,*
*Մերթ եղերանց և կեղծեաց, մերթ հաւաստեաց պատգա-*
*[մաւոր:*

ՎԻՐԳԻԼԻՈՍ· *Ենէական*:

# ԹԱՏԵՐԱԿԱՆՔ

---

## ՅՈՎՍԷՓ ՅԱՅՏՆԻ ԶԱՆՁՆ ԵՂԲԱՐՑ ԻՒՐՈՑ

*Յովսէփ, Ասանէթ, Տանէթ, Յուդա, Բենիամին ընդ այլ եղբարս Յովսեփայ*

ՏԱՆԷԹ

*Ահաւասիկ, տէր, առաջի քո յանցաւորք ածեալ կան:*

ԱՍԱՆԷԹ

*Ամենեքին անկեալ յերկիր յոտըս քո:*

ՏԱՆԷԹ

*Եւ ոչ խօսել ինչ ոք իշխէ ի նոցունց:*

ՅՈՎՍԷՓ

*Զի՞նչ էն, անմիտք, իրքըդ զոր դուք գործեցէք·*
*Ո՞չ գիտէիք զի հմայելով հըմայէ այր իբրև զիս:*

ՅՈՒԴԱ

*Զի՞նչ տացուք, տէր, պատասխանի· զի՞նչ խօսել,*
*Զի՞նչ իրաւունըս ցուցանել կարիցեմք·*
*Յիշեաց Աստուած ըզծառայից քոց ըզմեղս,*
*Եհաս մեզ ժամ տալ զեղեռան մերոյ վրէժ:*
*Յաւիտենից Տէր, ճանաչեմ ըզձեռըն քո վրէժխընդիր:*
*Եւ տեսանեմ զարդարութեան քո զդատաստանս*
*Ընդդէմ մեղաց սահմանեալ:*

Վառես ի սիրտ չարագործին
Բոց՝ որ ըղձիւ և ըղձիւէր
Ծախէ զնորին երիկամունս,
Մինչև լիցի նա խելամուտ
Զի իւ իւիք ոք մեղանչէ՝
Նոքիմբք տանջեալ պատուհասի։

ՅՈՎՍԷՓ

Մի՛, քաւ լիցի ինձ խըստանալ ձեզ ցայդ վայր.
Առ կըրտսերոյն գըտան գողօնքն, ապա նա ինքըն միայն
Կացցէ մնասցէ աստ ծառայ.
Իսկ դուք երթայք խաղաղութեամբ առ հայր ձեր։

ՅՈՒԴԱ

Այլ մեք որո՞վ երեսօք, տէր, դառնալ առ նա կարիցեմք։

ԲԵՆԻԱՄԻՆ

Ցիս տէր, և զի՞նչ. կացի՞ց ես աստ միայնակ։

ՅՈՎՍԷՓ

Դու միայնակ, այլք մեկնեսցին ո՛ն ի բաց։

ԲԵՆԻԱՄԻՆ

Կացէք, լուարո՛ւք ինձ, ո՛հ, ո՞րպէս կաս ի խոստման քում,
[Յուդա.
Գոնեա զհամբոյր հրաժարական ընկալարո՛ւք, եղբարք իմ.
Ահա մեկնիք դուք, ես մընամ աստ գերի։
Հայր իմ, զիա՞րդ տառապեսցիս ի լսել քո զգոյժըս զայս։
Եթէ իցէ ձեզ ՚ի սըրտի
Գութ ընդ եղբայր ձեր եղկելի,
Գէթ դուք, եղբարք իմ, դուք ընդ իմ
Գոգջիք նըմա զի ես կեամ,
Գոգջիք զի զինքըն սիրեմ.
Այլ ասիցէք մի՛ նըմա
Թէ՛ յո՛ր աղէտըս կամ աստ։

ՅՈՎՍԷՓ (ի ծածուկ)

Համբեր, սիրտ իմ, վայրիկ մի ևըս ժուժեա։

ՅՈՒԴԱ

Իցէ՞ երբեք թէ զիջցի, տէր, սաստ քոյին։



ՅՈՎՍԷՓ

Ետու հրաման, կացցէ, մի՛ ևըս դարձցի։

ՅՈՒԴԱ

Լուր ծառայի քում, տէր, և մի՛ բարկասցիս։

ՅՈՎՍԷՓ

Փութա՛ ասա՛, և զի՞նչ ասել ունիցիս։

ՅՈՒԴԱ

Յիշե՞ս զի տէրդ ի գալ մերում ի սկըզբան...

ՅՈՎՍԷՓ

Յիշեմ այո, հրամայեցի զԲենիամին ածել ինձ.
Եւ ասացէք զի ծերունի հայր նորա՝
Զուրկ ի նմանէ չըկարէր կալ, մեռանէր.
Եւ յաւելի սպառնալ ձեզ,
Առանց նորա զերեսս իմ մի՛ երբեք յուսալ տեսանել։

ՅՈՒԴԱ

Դարձաք այդու քո հրամանաւ առ հայր մեր.
Նա զմեզ դարձեալ յորժամ առ տէրդ յուղարկէր,
Ի զուր է մեզ, ասեմք, գընալ՝ թէ չիցէ
Բենիամին ընդ մեզ եղբայր մեր կըրտսեր։
Ասէ ցըմեզ ծառայ քո հայր մեր լալով.
Ո՛հ, անզաւակ լիցի ուրեմն ինձ մընալ.
Երկու միայն ի Հռաքելէ, գիտէք, եղեն ինձ որդիք.
Գազանակուր կորեաւ ինձ մին ի նոցունց,
Դուք ինձ ըզգոյժըն ետուք,
Ոչ ևս, աւա՜ղ, տեսի զերեսըս նորա.
Եթէ ըզսա ևս տանիցուք արդ յինէն,
Եւ թէ արկած ինչ պատահէ զճանապարհայն դըմա չար,
Ըզծերութիւն իմ ի դըժոխըս տըրտմութեամբ իջուցջիք։
Սաստկանայր սով, ըստիպէր հարկ, և զի՞նչ առնել էր նըմա.
Եթէ առ իւր կամէր զորդեակն ունել՝ սովով կորնչէր,
Իսկ թէ թողոյր նըմա մեկնել գալ՝ առ վըշտին մեռանէր։
Սիրեցեալ հայր, ասեմ նըմա ի վերջէ,
Հաւատա յիս զորդին քո.

Եթէ առանց նորա լիցի ինձ դառնալ,
Զիս մեղապարտ այնուհետեւ կալցիս միշտ։
Երդւաւ նա ինձ, եւ մեկնեցաք, տէր, ըստ հրաման քո լըցի։
Հայր ես եւ դու, եղեալ երբեմն եւ որդի.
Ըզկիրս իմ արդ բեր առ վայրկեան մի յանձին.
Ասա որո՞վ սըրտիւ առ հայր իմ դարձ առնել կարիցեմ,
Առանց զորդեակն ինձ աւանդեալ ի միասին ածելոյ։
Ո՛հ, մի լիցի, տէր. Թող դարձցի Բենիամին առ Յակոբ,
Եւ ծառայ քո կացցէ մնասցէ աստ գերի,
Զի մի տեսցեն աչք հիքիս
Ըզհօրն աղէտըս վըշտաց։

ՅՈՎՍԷՓ (Ի ծածուկ)

Սիրտ իմ գելու, մորմոքիմ։

ՅՈՒԴԱ

Ընդէ՞ր ծածկես զերեսըս քո, տէր, յինէն.
Եթէ չիցեմ ես արժանի գըթութեան,
Գըթա ի հայրն աղիողորմ տառապեալ։
Եթէ զկեանն համբոյրըս իւր տեսանէիր հայրենիս,
Հոգին նորա ընդ սիրելւոյ որդեկին
Թըւէր յիւրմէ բաժանել.
Ողջ երթ ասէր եւ կըրկնէր,
Եւ հրաժարեալ՝ դարձեալ փարէր ըզնովաւ.
Էր զի մտում ի մէնջ եւ էր զի միասում
Ըստէպ ըզնա ապըսպարէր յանձն առնէր.
Լայր եւ յիշէր ըզՀռաքէլ,
Յիշատակէր ըզՅովսէփ,
Եւ զերկոցունցն ըզկերպարան ի դէմս որդւոյն նըկատեալ,
Ողբայր ի նմա զերկաքանչիւրըցն կորուստ.
Եւ զամենայն... այլ դու ընդէ՞ր արտասուես,
Թերեւս ի գութ եւ զքեզ ածէաք մեր չարժեն...
Ամենակալ Տէր, դու ի սիրտ նորա յաւել ըզզօրով։

ՅՈՎՍԷՓ

Ո՛հ, բաւ է արդ, ընկճիմ, ոչ եւս ունիմ ժոյժ.
Ի կեղծ սաստից աստի ստիպիմ դադարել.



Եկա՛յք ի գիրկս իմ արդ, ես ինքն եմ Յովսէփ։

ՅՈՒԴԱ

Յովսէփ։

ԲԵՆԻԱՄԻՆ

Տէր տէր։

ՇՄԱՒՈՆ

Եղո՜ւկ զինեւ։

ՏԱՆԷԹ

Ո՛ հրաշք։

ԱՍԱՆԷԹ

Յապուշ հարկանիմ։

ՅՈՎՍԷՓ

Մի երկընչիք, մի՛ 'նդ վաճառել ձեր զիս, եղբարք իմ, հո-
Անտի եհաս Եգիպտոսի, եւ ձեզ իսկ [գայք.
Յեղեւանէ անտի եհաս փըրկութիւն.
Յարքունիս այսըր վաղագոյն քան ըզձեզ
Յըղեաց զիս Տէր վասըն ձեր։
Դարձիք դուք արդ առ հայր իմ,
Եւ պատմեցէք նըմա ըզփառըս որդւոյն.
Գոդջիք նըմա զի եկեսցէ լինել հաղորդս այնոցիկ։
Ո՛հ, զի՞ լռէք, մի՞ դուցէ դեռ կասկածէք.
Խօսեա՛ց Յուդա, եւ դու Շմաւոն ըսփոփեա՛ց,
Մատիր առ իս Բենիամին եղբայր իմ։

ՄԵԹԱՍԹԱԶԻՈՅ. Յովսէփ Գեղեցիկ։

## ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱԳԱՄԵՄՆՈՆԻ ԸՆԴ ԴՍՏԵՐՆ

### Ագամեմնոն, Իփիգենի, Եւրիպիդէ

ԻՓԻԳԵՆԻ

Տէր, յո՞ւր ընթանաս. և զի՞նչ ըշտապ տագնապի
Գողանայ զքեզ ի գըրկաց մերոց անդէն առժամայն.
Ո՞ւմ պարտիմ մեղս գըրել զյանկարծակի զայս փախուստ.
Մեծարանքս իմ ետ տեղի ուրախութեանց դըշխոյին.
Վայրկեան մի և ինձ ո՞չ ներեսցի կալ ընդ քեզ,
Եւ հըրճուանք իմ չիշխեսցե՞ն ինչ երևել յաչըս քո:
Չիցէ՞ մարթ...

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Օ՜ն մատիր, դո՛ւստր իմ, և զքո հայրն ողջունեա.
Սիրէ նա միշտ զքեզ:

ԻՓԻԳԵՆԻ

Որպէս զի քաղցր է ինձ սէրդ.
Ո՜վ մեծի հեշտութեան՝ զքեզ տեսանել և գիտել
Ի նորոգ փառըս յայս որով փայլես յաչըս իմ.
Ո՜վ պատիւ, ո՜վ զօրութիւն. վաղուց հրաշակ համբաւուն
Նորաքանչ զըրուցիւք էր արարեալ զիս հըմուտ.
Բայց մօտուստ նըկատեալ զշքեղազարդեղ տեսիլս այս,
Իմանամ զի ցընծութիւն և հիացումն իմ աճեն:
Ո՜վ, որո՜վ սիրով մեծաւ հելլենաստան պատուէ զքեզ.
Զի՜նչ և ինձ բաղդ և պարծանք՝ դուստր այսքանոյ լինել հօր:

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Դուստր իմ դու երջանկագոյն եըս հօր ես արժանի:

ԻՓԻԳԵՆԻ

Եւ ո՞ր այն երջանկութիւն ի քում ըղձիցըն վրիպեալ.
Իցէ՞ հնար թագաւորի մեծ եւ փառաց ակն ունել.
Ես միայն շընորհս երկնից մատուցանել կարծէի:



ԱԳԱՄԵՄՆՈՆ (ի ծածուկ)

Դի՜ք հզօրք. պա՞րտ իցէ զի՞նքն յաղէտըս իւր պատրաստել:

ԻՓԻԳԵՆԻ

Թանգուղես յինէն, տէր, և հառաչել թըւիս ինձ.
Աչք քո յիս իբր յակամայ կամս ինչ եկեալ հանդիպին.
Անհրաժա՞ն արդեօք ի քէն թողաք ելաք ըզՄիկենս:

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Դուստր իմ, ես միշտ ի քեզ նոյն աչօք ակնարկեմ,
Այլ փոխեալ են ժամանակք, որպէս և վայրք իսկ տեղեաց.
Այս զըմբաղ անագորոյն՝ է ի խընդիրս ապըստամբ:

ԻՓԻԳԵՆԻ

Ե՜հ, հայր, մոռա՛ զքո բարձ աւագութեան առ աչս իմ.
Իմանամ ըզխըստութիւն յերկարատւոր անջատման.
Եւ վայրկ մի հայր լինել չիշխես առանց չկնելոյ:
Առաջի քո չիք ոք այլ՝ քան թէ բամբիշն օրիորդ,
Այն որ ես պարծեցեալ էի զառ իս քո սիրոյդ.
Բիւր անգամ խոստանալով զիմ խնամս և զքո բարութիւն՝
Փառըս մեծ յաչըս նորա զերջանկութիւն իմ ցուցի.
Այժըմ զի՞նչ խորհեսցի զանփոյթ մըտաց սըրտի քո:
Սընոտի՞ արդեօք յուսով փաղաքշեցի զսիրտ նորա:
Ըզճակատդ այդ տըխրալի ո՞չ պարզեսցես դու ի լոյս:

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Ո՜հ, դուստր իմ:

ԻՓԻԳԵՆԻ

Խօսեսջի՛ր, աղէ՛ ո՜վ տէր:

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Ոչ կարեմ:

ԻՓԻԳԵՆԻ

Կորիցէ՞ տրովադացին պատճառ մերոյ խռովութեան:

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Այլ կորուստ իւր՝ յաղթողին ծանր եղիցի արտասուաց:

ԻՓԻԳԵՆԻ

Հաճեսցին դէք մանաւանդ լինել կենացդ հովանի։

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Դէք յաւուրց ինչ հետէ խուլ են առ իս և անգութ։

ԻՓԻԳԵՆԻ

Պատրաստէ Կալքաս, ասեն, շքեղաձոխ պատարագ։

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Տայր ոք ինձ յառաջագոյն մեղկել զնոցին ժանտութիւն։

ԻՓԻԳԵՆԻ

Մատուսցի՞ զոհըն փութով։

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Քան զոր կամիմ փութագոյն։

ԻՓԻԳԵՆԻ

Ներեսցի՞ և ինձ արդեօք աղօթակից ձեզ լինել.
Ազգատոհմ քո երջանիկ երևեսցի՞ առ բագնին։

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Վա՜հ աւաղ։

ԻՓԻԳԵՆԻ

Լուռ լինիս։

ԱԳԱՄԵՄՆՈՆ

Լիցիս անդ դու, դուստր, ողջ եր։ (Գնայ)

ՌԱՍԻՆ. Իֆիգէնէ։



## ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԳՈԹՈՂԻԱՅ ԸՆԴ ՅՈՎԱՍՈՒ

Յովաս, Յովսաբեթ, Գոթողիա, Զաքարիա, Աբեններ, Սաղոմիթ,
Երեք Ղեւտացիք, Պարք, արբանեակք Գոթողեայ

ՅՈՎՍԱԲԵԹ (առ Երեքս Ղեւտացիս)

Ո՛վ դուք Տեառըն պաշտօնեայք, արթուն լերուք, հըսկե-
ի վերայ մեծագին սոցուն մանկանց սիրելեաց։ [ցէք

ԱԲԵՆՆԵՐ (առ Յովսաբեթ)

Աներկիւղ լեր, բամբիշն, յիս կան զօրքըն յերաշխի։

ԳՈԹՈՂԻԱ

Ո՛հ, երկինք, որչափ հայիմ յերեսըս իւր և զննեմ...
Նոյն ինքն է։ Վերըստին խըռովին քըստմունք ընդ ոսկերս։
Ամուսինդ Յովիդայեայ, դոյն ա՞յդ իցէ որդին քո։
(Ցուցանէ զՅովաս)

ՅՈՎՍԱԲԵԹ

Ո՛վ, տիկին. սա՞։

ԳՈԹՈՂԻԱ

Դա ինքնին։

ՅՈՎՍԱԲԵԹ

Ո՛չ. ոչ եմ ես սորա մայր։
Ահաւասիկ իմ որդեակն։ (Ցուցանէ զԶաքարիա)

ԳՈԹՈՂԻԱ (առ Յովաս)

Իսկ դու, քո հայրն ո՞վ իցէ,
Մանկիկ, տո՛ւր պատասխանի։

ՅՈՎՍԱԲԵԹ

Երկինք մինչև ցօրըս ցայս....

ԳՈԹՈՂԻԱ

Զի՞ փութաս պատասխանի տալ փոխանակ ընդ նորա.
Նըմին անկ է խօսել։

ՅՈՎՍԱԲԵԹ

Ի դեռաբոյս հասակէն
Ի՞մ իմիք տեղեկութեան կարես բնաւ ակն ունել։

ԳՈԹՈՂԻԱ

Այդ անմեղ է հասակ, և պարզութիւն իւր ինքնին
Տակաւին չայլայլէ զճշմարտութեան սեռնութիւն.
Թոյլ տուր ինքըն խօսեսցի որ ինչ միտքն զինքենէ։

ՅՈՎՍԱԲԵԹ (ի ծածուկ)

Հաճեաց, Տէր ամենակալ, դնել զիմաստդ յիւր բերան։

ԳՈԹՈՂԻԱ

Անուն զի՞նչ կոչի քեզ։

ՅՈՎԱՍ

Եղիակիմ անուանիմ։

ԳՈԹՈՂԻԱ

Իսկ ապա հա՞յրըդ քո։

ՅՈՎԱՍ

Զրուցեն թէ որբ մի եմ ես՝
Անդըստին ի ծննդենէս անկեալ ի գիրկս Աստուծոյ,
Եւ զծընողս իմ բնաւ երբէք իմ չիք ծանուցեալ։

ԳՈԹՈՂԻԱ

Անհա՞յր ես և անմա՞յր։

ՅՈՎԱՍ

Ընդ վայր հարին զիս նոքա։

ԳՈԹՈՂԻԱ

Իսկ զիա՞րդ. յորմէ՞ հետէ։

ՅՈՎԱՍ

Յորմէհետէ ծընեալս եմ։

ԳՈԹՈՂԻԱ

Զիցէ՞ յայտ գէթ թէ յորմէ՞ ուստեք իցես աշխարհէ։



ՅՈՎԱՍ

Իմ աշխարհ՝ տաճարս է այս. այլ իմն երբէք գիտեմ ոչ։

ԳՈԹՈՂԻԱ

Յո՞ւր ուրեք երբէք ասեն գըտեալ ըզքեզ ըստ բախտի։

ՅՈՎԱՍ

Անողորմ գայլոց ի մէջ՝ ձեռպեցելոց ծախել զիս։

ԳՈԹՈՂԻԱ

Ըզքեզ ո՞վ եդ յայս տաճար։

ՅՈՎԱՍ

Կին ոմն աւեն, անծանօթ;
Որ զանուն իւր ոչ եցոյց, և ոչ ևս այլ տեսին բնաւ։

ԳՈԹՈՂԻԱ

Եւ ո՞ր ձեռք խնամ ածին քում առաջնոյ տղայութեանդ։

ՅՈՎԱՍ

Իսկ եղեք երբէք Աստուած ըզկարօտեալ որդիս իւր,
Որ ձագուց ևս թռչնոց նա տայ զնոցին կերակուր,
Բարութիւն իւր սփռեալ զարարածովք համօրէն։
Զնա կարդամ զօր ամենայն, և հայրախնամ գորովով
Զամէ ինձ ի նուիրացն ընծայելոց յիւր սեղան։

ԳՈԹՈՂԻԱ

Զի՞նչ այս նոր իմըն նըշան տագնապէ զիս և խռովէ.
Զայն նորա հեշտախօսիկ և մանկութիւն և շընորհք
Ոխութեանս յանըզգաստից փոխանակեն աւասիկ...
Եւ իցե՞մ ես դիւրամուտ ողորմածէրս ինչ խանդից։

ԱԲԵՆՆԵՐ

Արդ, տիկին, ահաւասիկ է սոսկալի թըշնամին.
Սրտայօդ անըրջոցդ ակնընդերես են պատրանք.
Թէ միայն զգթութիւն, որ զքեզ խռովելըն թըւի,
Զիցէ սուրըն մահաբեր՝ որ հարկանէր ի քեզ դող։

ԳՈԹՈՂԻԱ (առ Յովաս և Յովսաբէթ)

Գնա՞լ կամիք։

ՅՈՎՍԱԲԵԹ

Եղեր բաղձին իւրում բարւոք խնկամուտ,
Եւ տեսիլն իւր յերկար՝ Թերեւս արկցէ քեզ տաղտուկ։

ԳՈԹՈՂԻԱ (Առ Յովաս)

Ո՛չ. կացէք։ — Զի՞նչ գործ լցէ քո զօրն ի գլուխ աստանօր։

ՅՈՎԱՍ

ԶՏէր Աստուած մեր պաշտեմ, զօրէնսըն իւր մեկնեն ինձ,
Ընթեռնուլ ուսուցանեն զաստուածեղէն իւր ըզգիրս,
Եւ այժմէն խմով ձեռօք գրոշմեմ ի գիր զայնոսիկ։

ԳՈԹՈՂԻԱ

Զի՞նչ ասեն քեզ այն օրէնք։

ՅՈՎԱՍ

Թէ Աստուած սէր պահանջէ,
Զսուրբ անուանն հայհոյելոյ վրէժ խընդրէ 'նդ փոյթ, թէ
[յամոլ,
Է պաշտպան տարակուսեալ երկչոտ որբոյն անմեղի,
Ախոյեան դէմ գոռոզին, մարդասպանին պատուհաս։

ԳՈԹՈՂԻԱ

Իմանամ. իսկ բոլոր ամբոխիդ աստ կուտելոյ
Զի՞նչ գոյցէ լցէ գործ։

ՅՈՎԱՍ

Գովել, օրհնել զԷնն Աստուած։

ԳՈԹՈՂԻԱ

Յամենայն ժամ կամիցի՞ Աստուած աղօթս և խնկմունս։

ՅՈՎԱՍ

Ա՛յլ ինչ գործ աշխարհական ի տաճարէս է ի տար։

ԳՈԹՈՂԻԱ

Իսկ քո զի՞նչ են զուարճութիւնք։

ՅՈՎԱՍ

Այս սեղանոյն մերձ ի սպաս



Մերձ քահանայն մատուցանեմ զխունկն և զաղ,
Եւ լսեմ ի նուագս երգոց զանբաւ ըզփառսն Աստուծոյ.
Տեսանեմ ըզմեծաշուք հանդէս կարգի պաշտամանցն։

ԳՈԹՈՂԻԱ

Եւ զի՞նչ, չէ՞ն քեզ այլ ինչ հեշտութեան ըզբօսանք։
Ողորմիմ հէք վիճակի մանկան մի քեզ նըմանւոյ.
Աղէ եկ յիմ արքունիս, ըզփառս իմ անդ տեսցես դու։

ՅՈՎԱՍ

Զերախտեացն Աստուծոյ կորուսի՞ց ես զյիշատակ։

ԳՈԹՈՂԻԱ

Ո՛չ. զայն ոչ կամիմ ստիպել ըզքեզ մոռանալ։

ՅՈՎԱՍ

Զաղօթես առ նա դու։

ԳՈԹՈՂԻԱ

Իսկ քեզ տացի աղօթել։

ՅՈՎԱՍ

Սակայն տեսանիցեմ զի կարդայցես դու զայլ ոք։

ԳՈԹՈՂԻԱ

Է աստուած՝ զոր ես պաշտեմ, և ըզքոյդ դու պաշտիցես.
Են երկու հըզօր աստուածք։

ՅՈՎԱՍ

Երկրնչել պարտ է յիմմէս.
Նա միայն է Աստուած, տիկին, և քոյդ է ոչինչ։

ԳՈԹՈՂԻԱ

Առ ինև զուարճութիւնք միահամուռ հասցեն քեզ։

ՅՈՎԱՍ

Զարաց երջանկութիւն իբրև զհեղեղ անցանէ։

ԳՈԹՈՂԻԱ

Եւ ո՞յք այն չարքն իցեն։

ՅՈՎՍԱԲԵԹ

Ներեա, տիկին, հէք մանկան...

ԳՈԹՈՂԻԱ

Քաղցր է ինձ տեսանել՝ որպէս կըրթէք դուք ըզդա: —
Հուսկ ուրեմն, Եղիակիմ, գըտեր շընորհս յաչս իմ դու.
Զես անշուշտ դու ի մանկանց հասարակաց մարդկանէ:
Տեսանես՝ զի դըշխոյ եմ, և ոչ գոյ ինձ որք ժառանգ.
Արկ ի բաց ըզպատմուճանդ, և թող զանարգ զայդ արուեստ.
Յամենայն ի մեծութեանցս հանել կամիմ մասըն քեզ.
Աղէ յայսմ օրէ զճաշակն առջիր արքեանց աւետեացս.
Յամենայն տեղիս բազմեալ.քո յիմ խընջոյս առ ինև՝
Կամ է ինձ ունել ըզքեզ որպէս որդի սեռն և սերտ:

ՅՈՎԱՍ

Զիա որպէս որդի քո:

ԳՈԹՈՂԻԱ

Վա՛շ, ո՛ն և ո՛ն... դու լըռեա կաս:

ՅՈՎԱՍ

Եւ զո՞ր հայր թողից փոխան...

ԳՈԹՈՂԻԱ

Օ՛ն, մի՛ զօղիր:

ՅՈՎԱՍ

Ընդ ո՛ւմ մոր:

ԳՈԹՈՂԻԱ (առ Յովսաբէթ)

Ուշ լիր է անդեդևումն. յամենայնի զոր ասէ՝
Ըզքոյդ և զՅովիդայ զմիտըն յայտնի տեսանեմ:
Այդպէս ձեր ըրծաւորեալ ըզքարեմիտ մանկութիւն՝
Երկոքին վարէք զհանդիստն յոր իմ ըզձեզ է թողեալ:
Ըզնոցին այժմէն թէքէք սըրտմըտութիւն և ըզքէն.
Ոչ տայք՝ առանց սոսկման՝ լըսել նոցա զանուն իմ:

ՅՈՎՍԱԲԵԹ

Զաղետից մերոց զըրոյցս իցէ՞ պահել ի նոցունց.



Տիեզերք բոլոր գիտեն, դու ևս ի նոյնըս գովիս:

ԳՈԹՈՂԻԱ

Այո՛, իմ սըրտմըտութիւն արդար՝ ի սոյն պերճանամ,
Ի թոռանց իմոց եհան ըզվրէժ իմոց ծընողացս:
Եւ զի՞նչ. տեսանէի՞ զհայրս և զեղբայրս ըսպանեալ,
Ըզմայրն իմ ի բարձանց ապարանիցն ընկեցիկ,
Խոշոշեալ միանգամայն և ի միում իսկ աւուր,
Ո՛վ տեսիլ սոսկալի, արքայորդիս ութսնիւ չափ.
Եւ էրո՞ւմ. զմարգարէից ի վրէժ խընդրել չգիտեմ զո՛յց,
Զորոց նայն պատուհասեալ էր զմոլութիւն խակամիտ.
Եւ դըշխոյ ես անդ անմիտ, գուսալը թափուր ի սիրոյ,
Գերեալ ի վատասիրտ և յընդունայն ի գորով,
Զկըշուէի՞ դէթ խոլական կատաղութեանըն որիտուր,
Սպանութեանն ըսպանութիւն, անարգանացն անարգանս,
Եւ Դաւթին ձերոյ ծնընդոց ո՞չ ընդ կառավին հանէի
Զոր ընդ հէք մընացորդս Աքաաբուն անցուցին:
Ո՞ւր էի ես այսօր, թէ տկարութեանըս նըկուն՝
Ոչ ըզմօր գութ և գորով յաղեացս իմոց խըլէի,
Թէ ձեռին իմոյ, հեղեալ զարեանն իմոյ ճաղճախիս՝
Զէր ի նոյն արի հարուած ըզծածուկ դաւսն ընդոտնեալ:
Սուղ ասել. Աստուծոյն ձերոյ վըրէժք անողոք
Յերկոցունց ի տանց մերոց լուծին զդաշինս ամենայն.
Ատելի է ինձ Դաւիթ, և որդիք այնր արքայի՝
Թէ և իմ արեան սերունդք, օտարախորթք են առ իս:

ՅՈՎՍԱԲԵԹ

Ամենայն քեզ յաջողեալ. տեսցէ Տէր, դա՛տ արասցէ:

ԳՈԹՈՂԻԱ

Ա՛յն Տէր, որ վաղընջուց ձեր ապաւէնն է յուսոյ.
Աղէ զի՞նչ լինիցին ուխտիցն իւրոց աւետիք.
Թող տացէ ձեզ զարքայն զոր խոստացեալն է ազանց,
Զորդեակըն Դաւթի, զակընկալիս ձեր և զյոյս...
Այլ տեսցուք անդրէն զմիմեանս. ո՛ղջ կաց. մեկնիմ գոհու- [թեամբ.
Տեսանել կամ էր, տեսի:

ԱԲԵՆՆԵՐ (առ Յովիադէի)

Զոր յերաշխի առեալս էր՝
Արդ առ քեզ դարձուցանեմ զհաւատացեալդ յիս աւանդ :

ՌԱՍԻՆ․ Գոթողիա :

---

ՊՈԼԻԿՏՈՍԻ ԽՐԱԽՈՅՍ Ի ՄԱՀ Ի ՎԵՐԱՅ ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ

Պոլիկտոս , Նէարխոն

ՆԷԱՐԽՈՆ

Յո՞ գիմեալ գնաս :

ՊՈԼԻԿՏՈՍ

Ի տաճար անդր ուր ինձ ի զոհն ակն ունին :

ՆԷԱՐԽՈՆ

Եւ խառնեսցի՞ս դու ի նըւէրս ընդ ամբարիշտ խուժանին․
Քեզ մոռացա՞ք այդպէս եղեն զի քրիստոնեայ այժմիկդ ես :

ՊՈԼԻԿՏՈՍ

Մատակարար դու ինձ շնորհին կացեալ՝ զայն քաջ յիշեսցես :

ՆԷԱՐԽՈՆ

Գարշիմ մերժիմ ես ի կռոց :

ՊՈԼԻԿՏՈՍ

Գարշելիք են նոյնք և ինձ :

ՆԷԱՐԽՈՆ

Պաշտօն անարգ և ամպարիշտ :

ՊՈԼԻԿՏՈՍ

Եւ դըժոխոց հընարք պիղծ ․

ՆԷԱՐԽՈՆ

Խոյս տուր ապա դու ի բագնեաց :



ՊՈԼԻԿՏՈՍ

Արկից ես զայնս ի կործան․
Կամ մեռայց անդ ի մեհենին , կամ զայնս ոտից տաց կոխան :
Ե՛կ , սիրելիդ իմ Նէարխոն , եկ ի հանդէս ելանեմք
Խայտառակել գիցն ըզպաշտօն և ցուցանել ո՛յք իցեմք :
Այժմ ի մէնջ ակն ունին երկինք , պարտ է ի գլուխ զայն ա-
[ծել․
Դեռ ևս ըղնոյն ես խոստացայ , և արդ երթամ կատարել :
Յոյժ շնորհապարտ եմ Աստուծոյն , ում քև եղէ ես գիտակ ,
Որ անպատումն բարութեամբ կազմ ի կապել ինձ պըսակ՝
Զայս վաղ ընդ փոյթ հաճեցաւ տալ պատեհ չըքնաղ առ ի
Իւրոյ առ իս ձըրիատուր նորոյ շնորհին հաւատոյ : [փորձ

ՆԷԱՐԽՈՆ

Յոյժ է փառումըն նախանձուդ , անսա , գիր այնըմ պայման :

ՊՈԼԻԿՏՈՍ

Ո՞ր ճըշմարտին Աստուծոյ չափ է նախանձուն և պայման :

ՆԷԱՐԽՈՆ

Ի մահ անձին դիմագրաւես :

ՊՈԼԻԿՏՈՍ

Մեռայց առ սէր իւր ըղձիւք :

ՆԷԱՐԽՈՆ

Իսկ զի՞նչ թէ սիրտ քո սասանի :

ՊՈԼԻԿՏՈՍ

Ինքըն լիցի ինձ նեցուկ :

ՆԷԱՐԽՈՆ

Զեն նորա կամք մեզ անձնամատն երթալ ի մահ վայրապար :

ՊՈԼԻԿՏՈՍ

Յոյժ առաւել է պատուական մահ յոր դիմէ ոք յօժար :

ՆԷԱՐԽՈՆ

Շատ է սպասել մահու և կրել , չէ պարտ գոլ այնմ ի խըն-
[դիր :

ՊՈԼԻԿՏՈՍ

Որ զանգիտէին դիմագրաւել՝ լիցի նմա մահ վըշտակիր:

ՆԷԱՐԽՈՆ

Այլ մահ անշուշտ ի տաճարի անդ զարմանեալ քեզ մնայ:

ՊՈԼԻԿՏՈՍ

Այլ ինձ անշուշտ արդէն յերկինս անդ յաղթանակ պատ-
[րաստ կայ:

ՆԷԱՐԽՈՆ

Զայն մեզ ի ճիգն առաքինի՝ վարուց օրէն է ունել:

ՊՈԼԻԿՏՈՍ

Զայն ի հրապոյրս անկեալ մեղաց՝ մարթ է ի վտանգ արկա-
[նել:
Իսկ առ իմէ՞ գնել զայն յերկրայս, զոր մահ գործէ աներկ-
[բայ.
Իցէ՞ իսկ այն դըժոխըմներ որ զերկնից դրունս ինձ բանայ:
Ես քրիստոնեայ եմ, Նէարխոն, և քրիստոնեայ իսկապէս.
Հաւատք զոր եմն արդ ընկալեալ խնդրէ զարդեանց ըղձան-
[դէս.
Որ խուսափէն՝ մերկ ի հաւատս է և մեռեալ յոյս նորին:

ՆԷԱՐԽՈՆ

Կենաց անձին խնամ կալջիր, փառքն Աստուծոյ զայդ կա-
[մին.
Կեանք քո լիցին պատըսպարան քրիստոնէից որ կան աստ:

ՊՈԼԻԿՏՈՍ

Այլ օրինակ մահուս լիցի նոցա մեծ եւս նըպաստ:

ՆԷԱՐԽՈՆ

Մահու՞ ուրեմն փափաքես:

ՊՈԼԻԿՏՈՍ

Կենաց ապա դու ցանկաս:



ՆԷԱՐԽՈՆ

Ծածկել ի քէն ես ոչ կարեմ, դաս դըժուարին դու ինձ
[տաս.
Խիթամ աշխու գուցէ նըկուն զիս արասցեն խիստ տանջանք:

ՊՈԼԻԿՏՈՍ

Որ ի հաստոչ առնու ըղկայ, անկանելոյ չիք վըտանգ.
Ամենազօր աջ Բարձրելոյն պահպանէ զնա ի վտանգի:
Որ զանգիտէ կալ ի յուրաստ, է ուրացեալ ի սըրտի,
Երկմըտի նա յանձին իւրում, է ի հաւատս իւր երկբայ:

ՆԷԱՐԽՈՆ

Որ խիզախէն յանդըգնութեամբ՝ յանձնապաստան լիցէ նա:

ՊՈԼԻԿՏՈՍ

Այլ ի նորին եմ ես ի շնորհս և ոչ թէ յիս քաջայոյս:
Բայց զոր ի քէն ակն ունէի՝ ինձ լիցէ տալ քեզ խրախոյս.
Զի՞ քեզ այդքան երկիւղ ընդ մահ:

ՆԷԱՐԽՈՆ

Զի և Աստուած իսկ երկեաւ:

ՊՈԼԻԿՏՈՍ

Այլ զանձն ի մահ ետ. մի՛ լիցուք ըղձեա նորին դիմագրաւ.
Սեղան նըմին ի վերայ դիցըն կանգնեսցուք փլատակաց.
Զի պարտ է մեզ, դեռ ևս յիշեմ ըղբանըս քո կանխաասաց,
Առ սէր նորա արհամարհել ըզկին, ըզդոյս և ըզթագ,
Տալ ի վերայ փառաց նորա զանձն և զարիւն բովանդակ:
Աւա՜ղ, և ո՞ւր է այն քոյին եռանդն և սէր պատարուն,
Զոր դու երբեմն ինձ մաղթէիր, և արդ մաղթեմ քեզ ըզ-
[նոյն:
Թէ առկայծէ դեռ այն ի քեզ՝ մի՛ դու շարժիս ի նախանձ
Ի տեսանել ըզնորակնունքս յայնմիկ ըզջեւ գերազանց:

ՆԷԱՐԽՈՆ

Նորածնելումդ յաւազանէն՝ առոյգ ի յոյժ մեծազօր,
Սուրբ ի մեղաց, որք ըզկորով մեզկեն շնորհին երկնաւոր,
Եւ որ համայն հոգևացեալդ ես ի նորին ձոխութիւն,

Անհընարինքն իսկ հեշտ թըւին քեզ ի բոց այնըր սիրոյն.
Այլ յիս շնորհացն ընկըղընաձիր նուաղեալ պարգեք երկ-
[նատուր,
Եւ զօրութիւն նորա՝ սա մեղացս յոգունց մըղկեալ օր ա-
Ոչ ևս իշխէ ի մեծամեծըս ձեռնարկել քաջաբար, [ւուր,
Եւ ամենայն ինչ անկելոււմս յուժոյ թըւի անհընար:
Այս վատութիւն ամօթապարտ և այս փախուստ անարի՝
Գիտեմ զի խիստ է պատուհաս մեղաց իմոց արժանի.
Այլ գըթութեանցըն Տէր յոր պարտ է մեզ ունել միշտ ըղ-
[յոյս,
Նախանձելի ինձ օրինակ բարեաց ըղձքոյդ տայ խրախոյս:
Ե՛կ, սիրելիդ իմ Պոլիկտէ, եկ ի հանդէս ելանեմք,
Խայտառակել դիցն ըղպաշտօն և ցուցանել ո՛յք լցեմք.
Իցի՛ւ և ինձ դոյր արկանել ի քեզ նախանձ ի տոկալ,
Որպէս դու ինձ ի դիմագրաւ տալ զանձն ի վտանգ կամա-
[կար:

ՊՈԼԻԿՏՈՍ

Ի բարեբաղդ յերկնազգեցիկ յայդ փոփոխումըն սըրտի
Ճանաչեմ զիմըս Նէարխոս, և արտասուեմ առ խընդի:
Զոհք ի բագնին կան ի զենուլ, չեք յամելոյ ժամանակ.
Ո՛ն, Աստուծոյն ճըշմարտի անդըր ճեպեսցուք նահատակ.
Երթիցուք տալ ըղխաղալիկըն շանթ ոտից ի կոխան,
Որով ըղփայտըն փուտ զինէ դիւրահաւատըն խուժան.
Ո՛ն, երթիցուք բանալ ի լոյս զաչս առ ի մահ կուրացեալ,
Եւ փըշրեսցուք ըղկուռսըն սուտ ըղկոփածոյ և զհրահալ.
Երկնազգեցիկ ի մեզ հըրոյս լիցուք կենօք մեք ճարակ.
Հարցուք զերկնից ըղպատերազմ՝ Թողեալ ի նա զյաղթա-
[նակ:

ՆԷԱՐԽՈՍ

Ո՛ն, երթիցուք մեծահանդէս փառացն երկնից տալ ըղցոյց,
Եղեալ գործօնք հաւատարիմք կամացն առ մեզ զօր եցոյց:

ԳՈՌՆԷՅԼ. Պօլիէկտոս:



## ՊԱՏԱՍԽԱՆԻ ՊՈԼԻԿՏՈՍԻ ԱՌ ԴԱՏԱՒՈՐՆ

Փէլիքս, Պօլիէկտոս, Պաւլինէ, Զօրականք

ՊՈԼԻԿՏՈՍ

Ըզմին միայն պաշտեմ ես Տէր՝ տիեզերաց արարող,
Յորմէ սարսին երկինք, երկիր, սանդարամետք կան ի դող.
Ըզմի Աստուած, որոյ սիրեալ ըզմեզ ի սէր անըսպառ՝
Զանարգանաց մահ վասըն մեր ինքնայօժար յանձն էառ.
Եւ որ մեծի սիրոյն զեղման հրաշագործեալ յիշատակ՝
Օր ըստ օրէ հաճի տալ զանձն ընդ մեր մեղաց պատարագ:
Այլ ինձ զայնց մեղք են ձեզ ճառել, ո՛յց ոչ կարէք գոլ
[հասու:
Իսկ որպիսեա՛ց, տեսէ՛ք, ցնորից կայք դուք պաշտպանք զա-
[չացու.
Ի զազրագործ ոճիրս անլուր նըշաւակէք ըղդիս ձեր.
Պատուհասեալք ի ձէնջ ոճիրք յերկինս համայն ունին
[տեղ.
Պոռնիկն և շուն, առևանգեալն և ազգասպիղծ մըծղընեայն,
Գողն, աւազակ, և որ ինչ այլ ևս գարշելիքն են համայն,
Յանմահ ի դիս ձեր նախատիպ ունին իւրեանց օրինակ.
Զորոց մեհեանըն պըղծեցի, զբագինս եդի հարթյատակ,
Որ թէ և այժմ ինձ առաջի կային՝ ըզնոյն առնէի
Յայտ յանդիման քեզ Փէլիքսի, և յանդիման Սևերի,
Եւ ծերակոյտ մեծ ատենին, դէմ յանդիման իսկ կայսեր:

ՓԷԼԻՔՍ

Արդար ցասման իմում ոչ ևս արդ ժուժեն կամք մարդա-
Նոցին պաշտօն տար, կամ մեռիր: [սէր,

ՊՈԼԻԿՏՈՍ

Քրիստոնեայ եմ:

ՓԷԼԻՔՍ

Անօրէն.
Քեզ ասեմ՝ դիցըն պագ երկիր, թէ ոչ՝ ընտրես մահ քեզէն:

ՊՈԼԻԿՏՈՍ

Քրիստոնեայ եմ։

ՓԵԼԻՔՍ

Քրիստոնեա՞յ ես. ո՛վ խըստասիրտ դու յամառ։
Օ՛ն, զօրականք, ածէք զաւեա՜լդ յինէն հրաման ի կատար։

ՊԱՒԼԻՆԷ

Յո՞ զնա տանիք։

ՓԵԼԻՔՍ

Ի մահ։

ՊՈԼԻԿՏՈՍ

Ի փառս։ Ո՛վ Պաւլինէ սիրելի,
Ողջամբ կացջիր, և զյիշատակս անջինջ կալցիս ի սրտի։

ՊԱՒԼԻՆԷ

Եկից ընդ քեզ ուր և երթաս, և ի մահ իսկ՝ թէ մեռցիս։

ՊՈԼԻԿՏՈՍ

Կաց, մի՛ ընդ իս գար. և կամ թո՛ղ ի բաց ըղձիս քո մոլորս։

ՓԵԼԻՔՍ

Առէք ըզդա յաչաց ի բաց, լըցցին հրամանք իմ ի դա.
Զի ընդ կորուստ իւր կամեցաւ, զըլացէ զկորուստ իւր ապա։

ԳՈՌՆԷՅԼ. Պօլիէկտոս։

---

# ՑԱՆԿ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ


| | Էջք |
|---|---|
| Պատուէրք առ այս | 1 |


ԱՌԱԿՔ


| | |
|---|---|
| Գայլ և Գառն | 4 |
| Շուն պատրեալ | — |
| Քաղաքացի մուկն և դաշտեցի | 5 |
| Գառն և Գժնիկ | 6 |
| Գայլ և Հովիւ | 7 |
| Աղուէս և Արագիլ | — |
| Գայլ և Կռունկն | 8 |
| Ցիրամարգ և Հերա | — |
| Կնտակք և Սանդր | 9 |
| Էշ և Սոխակ | 10 |
| Երաժիշտք | 11 |
| Փիղ և Շնիկ | 12 |
| Կռիւ Շանց ընդ Կատուայ և Կատուացն ընդ Մըկանց | 13 |


ՀՈՎՈՒԵՐԳԱԿԱՆՔ


| | |
|---|---|
| Դրուատ շինական կենաց | 16 |
| Եղջերու յափշտակեալ | 17 |
| Այգեկութ | 18 |
| Երմնեայ ապաստանելն 'ի մայրիս | 20 |

## ՔՆԱՐԵՐԳԱԿԱՆՔ


| | Էջք |
|---|---|
| Առաւօտու աղօթք 'ի Դրախտին | 25 |
| Ծնունդ Տեառն | 27 |
| Առ լոյսն | 31 |
| Խորհուրդք յաւանձնութեան | 32 |
| Գերդաստան | 34 |
| Մանուկ յորրանի | 35 |
| Աղօթք մանկան զարթուցելոյ | 37 |
| Լուդովիկոս ԺԶ | 40 |
| Պոլիկտոս 'ի բանտի | 43 |
| Դաւիթ երգէ զյաղթանակ և զհանդիստ Սաւուղայ | 45 |
| Պար դստերաց ցեղին Ղևեայ 'ի տաճարին | 49 |
| Երգ աղքատի | 51 |
| Կին նաւավարին | 52 |
| Ի կոտորած մանկանցն Բեթլեհեմի | 53 |
| Զանգակ | 54 |


## ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆՔ


| | |
|---|---|
| Նկարագիր Դրախտին | 59 |
| Ադամ և Եւա 'ի Դրախտին | 61 |
| Ստեղծումն թռչնոց և չորքոտանեաց | 63 |
| Նկարագիր վահանին Աքիլլեայ | 67 |
| Հանդէս յուղարկաւորութեան Պատրոկլի | 71 |
| Տեսիլ Գոթոզեայ | 75 |
| Գերեզմանք հանճարեղացն յԻտալիա | 78 |
| Բրգունք Եգիպտոսի | 80 |
| Հրդեհ | 81 |
| Ծով | 82 |
| Ձի | 84 |
| Օձ և Վիշապ | 85 |
| Պոա օձ | 86 |
| Ամբաստանք 'ի Բրիտանիա | — |


## ՊԱՏՄԱԿԱՆՔ


| | |
|---|---|
| Արտաքսումն նախածնողացն 'ի Դրախտէն | 89 |
| Մահ Աբելի | 91 |
| Հեկտորի և Անդրոմաքեայ հանդիպումն և բանք | 93 |
| Արծիւն հռովմէական | 97 |





| | Էջք |
|---|---|
| Մենամարտութիւն Տանկրեդեայ ընդ Կլորինդայ | 100 |
| Կոմն Ուգոլին | 101 |


## ԲԱՐՈՅԱԿԱՆՔ


| | |
|---|---|
| Ծանօթութիւն Աստուծոյ 'ի բնութենէ | 105 |
| Գաղափար Աստուծոյ առ ամենայն ազգս | 107 |
| Մարդ | 109 |
| Անմահութիւն | 111 |
| Աղօթք հասարակաց | 113 |
| Մաղթանք երեկորին | 117 |
| Խաչ | 119 |
| Բարեբանութիւն և աղերս առ Ս. Կոյսն | 122 |
| Մաղթանք առ Ս. Կոյսն | 126 |
| Լուսինեան աղաչէ զդուստրն դառնալ 'ի հաւատս քրիստոնէութեան | 127 |


## ԵՂԵՐԵՐԳԱԿԱՆՔ


| | |
|---|---|
| Ողբ Էլէկտրայ 'ի վերայ եղբօրն | 129 |
| Օր մեռելոց | 130 |
| Ի զանգակն յօր մեռելոց | 132 |
| Բարեաւ մնայք | — |
| Նոր տարի | 133 |
| Որբ մանկունք | 134 |
| Տերեւն անտառի | 136 |
| Անկումն տերևոց | — |
| Առ ծիծառն երգ բանտարկելոյ | 138 |


## ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆՔ


| | |
|---|---|
| Արձանագիր դրանցն դժոխոց | 140 |
| Դեդալոս | — |
| Համբաւ | 142 |


## ԹԱՏԵՐԱԿԱՆՔ


| | |
|---|---|
| Ցովսէփ յայտնէ զանձն եղբարց իւրոց | 143 |
| Տեսութիւն Ագամեմնոնի ընդ դստերն | 148 |
| Զրուցատրութիւն Գոթոզեայ ընդ Ցովասու | 151 |
| Պոլիկտոսի խրախոյս 'ի մահ 'ի վերայ քրիստոնեական հաւատոց | 158 |
| Պատասխանի Պոլիկտոսի առ դատաւորն | 163 |


им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0585328